



ՄԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐ**

Ե Ր Ե Վ Ա Ն
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 338.439(479.25)
ԳՄԴ 65.9(2Հ)325
Ա 791

**Հրատարակության և երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը**

Մասնագիտական խմբագիր՝

Գրիգորյան Կ. Ա.
տ.գ.դ., դոցենտ

Գրախոսներ՝

Բայադյան Ա. Հ.
տ.գ.դ., պրոֆեսոր
Ծպնեցյան Հ. Ս.
տ.գ.դ.

Խմբագրական խորհուրդ՝

Աթոյան Կ. Լ. (նախագահ)

տ.գ.դ., պրոֆեսոր

Վարդանյան Գ. Ի.

տ.գ.դ., պրոֆեսոր

Սուվարյան Յու. Մ.

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր

Ավետիսյան Ս. Ս.

տ.գ.դ., պրոֆեսոր

Ա 791 **Սամվել Ավետիսյան**
Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/ Ս. Ավետիսյան. –Եր.: Տնտեսագետ, 2014 – 96 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

Գրքում ամփոփվում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2013 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին «Ազգային անվտանգություն հետազոտություններ» ծրագրի ՀՀ պարենային անվտանգության ուսումնասիրությունը: Դիտարկվում է պարենի համաշխարհային շուկայի զարգացումների, գյուղատնտեսության պետական կարգավորման և Մաքսային միությանը անդամակցության ազդեցությունը ՀՀ շուկայի վրա, կարևորվում է պարենային անվտանգության գնահատման մեթոդաբանության կատարելագործման, Հայաստանի և ԼՂՀ պարենային հաշվեկշիռների մոտարկման խնդիրները, առաջարկվում են ագրարային ոլորտի նորմոդական զարգացման ուղիներ:

Գիրքը օգտակար կլինի ոլորտի մասնագետների, գիտաշխատողների, դասախոսների և ուսանողների համար:

ՀՏԴ 338.439(479.25)
ԳՄԴ 65.9(2Հ)325

ISBN 978-9939-61-091-7

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

Ներածություն	5
1. Պարենի համաշխարհային շուկան և Հայաստանը.....	7
2. ՀՀ պարենային անվտանգության քաղաքականության գործիքները	16
3. Պարենային հաշվեկշիռների մեթոդաբանության կատարելագործումը.....	22
4. Պարենային անվտանգությունը և բնակչության կենսամակարդակի գնահատումը	32
5. Պարենային անվտանգությունը որպես գյուղատնտեսության պետական կարգավորման նպատակ	49
6. Կլիմայի փոփոխությունը և պարենային անվտանգությունը	61
7. ՀՀ պարենային անվտանգությունը Մաքսային միությանն անդամակցության պայմաններում.....	77
Եզրակացություններ և առաջարկություններ	84
Օգտագործված գրականության ցանկ	88
Անփոփումներ	90

Բնակչության պարենային ապահովումը քսանմեկերորդ դարի ամենակարևոր մարտահրավերներից մեկն է: Վիճակագիրները վկայում են, որ մեր թվարկության սկզբին երկրագնդի բնակչությունը կազմել է ընդամենը 300 մլն մարդ: Առաջին հազարամյակի ընթացքում այդ թիվն ավելացել է ընդամենը 30 միլիոնով, բայց երկրորդ հազարամյակի վերջին, ավելի ճշգրիտ՝ 1999 թ. հոկտեմբերի 12-ին հասավ 6 միլիարդի, իսկ 2011 թ. հոկտեմբերի 31-ին անցավ 7 միլիարդի սահմանը: Բավական է նայել համացանցում տեղադրված «Աշխարհի բնակչության հաշվիչին» և անմիջապես հասկանալի կդառնա, թե ինչ արագությամբ է ավելանում երկրի բնակչությունը: Ըստ այդ հաշվիչի տվյալների՝ 2013 թ. յուրաքանչյուր 0,24 վայրկյանում ծնվել է մեկ երեխա, 1 ժամվա ընթացքում ծնվում է 15218,7 և մահանում 6471,7 մարդ: Դժվար չէ հաշվարկել, որ մեկ օրում բնակչությունն ավելանում է մոտ 210 հազար, իսկ տարվա ընթացքում՝ 76623,7 հազար մարդով¹:

Բնակչության այսպիսի սրընթաց աճին զուգընթաց՝ գնալով սրվում է պարենային ապահովման հիմնախնդիրը: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) տվյալներով ներկայումս աշխարհում մոտ 1 մլրդ մարդ սովի է մատնված: Ամեն տարի սովամահ է լինում 18–20 մլն մարդ: Սա նշանակում է, որ պարենային անբավարարությունը որոշ երկրների համար դարձել է ոչ միայն զարգացումն արգելակող, այլև սոցիալական և քաղաքական անկայունություն ծնող լուրջ սպառնալիք²: Ավելին, այս հիմնախնդիրը, հատկապես վերջին հինգ տասնամյակում դարձել է այնպիսի գործոն, որն ուղղակիորեն ազդում է՝ պատերազմի և խաղաղության, սոցիալառնությունների վրա: Ահա թե ինչու աշխարհի բոլոր երկրների համար բնակչության պարենավորման և պարենային անվտանգության հիմնախնդիրը տնտեսական քաղաքականության ամենակարևոր գերակայությունների շարքում է: Իհարկե, տարբեր երկրներում տարբեր է իրավիճակը, ինչը և պայմանավորում է ամեն մի երկրի սոցիալական ապահովության և ագրարային քաղաքականության բնույթը, ներքին և արտաքին սպառնալիքների հաղթահարման ռազմավարությունն ու գործնական քայլերը: Բոլոր առումներով՝ ագրարային ոլորտի զարգացման դիտարկումը պարենային անվտանգության տեսանկյունից հնարավորություն է ընձեռում ուշադրության կենտրոնում պահելու մարդու սնվելու ամենաառաջնային պահանջմունքը և ձգտելու դրա առավել ամբողջական ու արդյունավետ բավարարմանը:

¹ <http://countrymeters.info/ru/World>

² Мир и продовольственная безопасность, http://www.youtube.com/watch?v=0pwhT8_EkY

Սույն հետազոտության նպատակն է համաշխարհային պարենային շուկայի վերջին տասնամյակի զարգացումների և ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում լուսաբանել ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, շեշտադրել արտաքին և ներքին սպառնալիքները, ինչպես նաև նախանշել դրանց կարգավորման ու դիմակայման հիմնական ուղիները: Աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ պարենային անվտանգության գնահատման մեթոդաբանության կատարելագործման հարցերին, ներկայացվում են կիրառական նշանակություն ունեցող առաջարկություններ և դրանց իրականացման կառուցակարգեր:

ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

*Ես չեմ կանխագուշակում այն ինչ կլինի,
ևս միայն բացատրում եմ, թե ինչ կարող է
լինել:*

*Ջեֆրի Դ. Սաքս
Ամերիկացի տնտեսագետ³*

Միջպետական տնտեսական կապերի զարգացումը հանգեցրեց պարենի համաշխարհային շուկայի ձևավորմանը, որտեղ իրականացվում է պարենային ապրանքների առքուվաճառք միջազգային գներով: Վերջիններս ձևավորվում են խոշոր ապրանքային բորսաներում: Որպես կանոն, այս գների հիմքը արտադրության լավագույն պայմաններում կատարված ծախսերն են: Այսպիսի պայմանները բնութագրվում են բնակլիմայական, տեխնոլոգիական և քաղաքական շահեկան առանձնահատկություններով: Այսինքն՝ համաշխարհային գները կանխորոշում են հետևյալ գործոնները.

1. Եղանակային պայմաններ, որոնք ազդում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, հետևաբար՝ շուկայական առաջարկի վրա:

2. Տարերային աղետներ (երաշտ, ցրտահարություն, ջրհեղեղ, համաճարակներ և այլն), որոնց հետևանքները զգալի են ոչ միայն տվյալ տարվա, այլև հաջորդ մեկ - երկու տարիների բերքի վրա: Այս առումով, բնութագրիչ օրինակ է 2010 թ. երաշտը Ռուսաստանում: Աննախադեպ տաք եղանակային պայմանների պատճառով այդ տարի հացահատիկի բերքը պակասեց 40%-ով և սպասվող 100 մլն տոննայի փոխարեն հավաքվեց ընդամենը 60 մլն տոննա: Վերջինս պատճառ դարձավ Ռուսաստանի կառավարության՝ հացահատիկի արտահանման արգելանքի, ինչը, իր հերթին, ազդեց համաշխարհային առաջարկի ու գների վրա: «Եթե այդպիսի երաշտի էպիկենտրոնը լիներ ոչ թե Մոսկվան, այլ Չիկագոն և ԱՄՆ հացահատիկի արտադրությունը պակասեր 40%-ով, ապա դա կկազմեր 160 մլն տոննա և աշխարհում փոխանցվող պաշարները կբավարարեին ընդամենը 52 օր»⁴:

3. Գյուղատնտեսության սեզոնայնությամբ պայմանավորված՝ պարենային մթերքների գները ցածր են գանգվածային բերքահավաքի շրջանում, իսկ հետագայում մինչև նոր բերքի ստացումը՝ բարձրանում են: Ուստի արտադրության ինտենսիվացումը և հետբերքահավաքային նորամուծական տեխնոլոգիաների ներդրումը, իսկ բանջարեղենի համար նաև ջերմատնա-

³ Джеффри Д. Сакс., Конец бедности. Экономические возможности нашего времени. М.: Изд. Института Гайдара. 2011, с. 12.

⁴ <http://lenagro.org/stati/1318-sumeet-li-chelovechestvo-sebja-prokormit.html>

յին տնտեսությունների զարգացումը, կարևոր գործոններ են գների հարաբերական կայունության ապահովման:

4. Պարենի համաշխարհային շուկայում էական դերակատարություն ունեցող առանձին և խումբ երկրների առևտրային քաղաքականությունը նույնպես իր ազդեցությունն է գործում պարենամթերքի գների վրա: Այս բնագավառում միասնական խաղի կանոններ պահպանելու համար ստեղծվել է Համաշխարհային առևտրի կազմակերպությունը (ՀԱԿ): Սակայն վերջինիս կարգավորիչ գործառնությունները միշտ չէ, որ ապահովում են սպասվող արդյունք: Զարգացած, հատկապես ՀԱԿ հիմնադիր անդամ երկրները՝ հաճախակի շրջանցելով առևտրի միջազգային կանոնները, իրենց շահերն են պարտադրում զարգացող երկրներին:

5. Պարենամթերքի գների վրա ազդում է նաև տարբեր երկրների բնակչության կյանքի մակարդակը: Ըստ Էռնեստ Էնգելի օրենքի՝ երկրի զարգացմանը զուգահեռ բնակչության սպառողական ծախսերի մեջ սննդամթերքի մասնաբաժինը պակասում է: Այլ կերպ ասած՝ որքան փոքր է եկամուտը, այնքան մեծ է սննդի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը: Այս օրինաչափությունը պարենի համաշխարհային գների վրա ազդում է նրանով, որ բարձր եկամուտ ունեցող երկրներում բարձրորակ սննդամթերքի ավելի մեծ պահանջարկ է ձևավորվում, ուստի պակասում է ցածրարժեք և ցածրորակ պարենամթերքի առաջարկը:

ՄԱԿ-ի ՊԳԿ-ի տվյալներով՝ պարենի համաշխարհային գների համաթիվը միայն վերջին տասնամյակում ավելացել է մոտ 2.4 անգամ: Պրոֆեսոր Ե. Մերովայի դիտարկումով՝ 20-րդ հարյուրամյակում համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածներին հատուկ է եղել պարենային գների իջեցումը և նավթային ճգնաժամի հաղթահարումը: Մինչդեռ նոր հարյուրամյակի սկզբից, հատկապես 2007–2008 թթ. պարենային ճգնաժամի տարիներին, ականատես դարձանք պարենամթերքի գների կտրուկ բարձրացման: «Դրանք որոշակի ժամանակահատվածում կտատանվեն վերև և ներքև, բայց էժան պարենի դարաշրջանն այլևս ավարտված է»⁵:

Պարենի համաշխարհային շուկայի հիմնական սպրանքների 2000–2010 թթ. գների շարժնթացքը վկայում է, որ գնաճը համընդհանուր բարձր տեմպեր է դրսևորում (աղյուսակ 1): Դիտարկվող տասնամյակում իրացման գնի բարձրացման ամենամեծ ցուցանիշներ են ունեցել բրինձը և ցորենը: Այս արտադրանքների գները հայաստանյան շուկայում 2010 թ.-ին, 2000 թ. հա-

⁵ <http://www.ecpol.ru/2012-04-05-13-45-47/2012-04-05-13-46-45/185-perspektivy-globalnykh-prodovolstvennykh-rynkov.html>

մեմատությամբ բարձրացել են համապատասխանաբար՝ 137,7 և 256,6%-ով, իսկ հացի գինը՝ 197,5%-ով⁶:

Համաշխարհային բանկի վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2012 թ. Հայաստանում պարենի գները միջին հաշվով 17 տոկոսով ավելի բարձր են, քան ԱՊՀ մյուս երկրներում: Նույն աղբյուրի տվյալներով՝ ԱՊՀ թիրախային երկրների համեմատությամբ հացի գինը բարձր է եղել 36, կարագինը՝ 23, ձվինը՝ 25, կաթինը՝ 33 և տարեկանի հացինը՝ 45 տոկոսով⁷:

Պարենային գների բարձրացումը նկատելի է հատկապես վերջին երեք տարիներին: Բավական է նշել, որ Հայաստանում 2013 թ. դեկտեմբերին 2010 թ. նույն ամսվա համեմատությամբ հացամթերքի գինը բարձրացել է 24.7, մսամթերքինը՝ 25.0, կաթնամթերքինը՝ 31.7, ձվինը՝ 54.4, կենդանական և բուսական յուղինը՝ 30.4, կարտոֆիլը և բանջարեղենը՝ 10.3%-ով⁸: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում անվանական աշխատավարձը հայկական դրամով հաշվարկված բարձրացել է 49.4 և ԱՄՆ դոլարով հաշվարկված՝ 32.4%-ով⁹: Անվանական և ոչ թե իրական աշխատավարձի աճի որոշակի առաջանցիկ տեմպը ամենևին էլ չի սփոփում, որ տնային տնտեսությունների բյուջեի վրա պարենային ապրանքների գների բարձրացման հետևանքները մեղմվել են: Բանն այն է, որ իրական աշխատավարձը 2012 թ.-ին, 2010 թ. համեմատությամբ ավելացել է ընդամենը 16,2%-ով (2013 թ. ցուցանիշը դեռևս հրապարակված չէ)¹⁰:

Աշխատանքի հետագա բաժիններում կանդրադառնանք պարենային ապրանքների շուկայում գների շարժի պատճառահետևանքային կապերին, իսկ վերոհիշյալ համեմատությունների բուն նպատակը ՀՀ պարենային շուկայի վրա արտաքին ազդակների ազդեցության շեշտադրումն է:

⁶ Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 214: Պարենային ապահովումը և աղքատությունը 2013 հունվար – սեպտեմբեր, էջ 26:

⁷ («Հայաստանի Հանրապետություն: Կուտակում, մրցակցություն և միակցելիություն: Հուլիս 2013 թ., Համաշխարհային բանկ, էջ 22»):

⁸ Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի հունվար- դեկտեմբերին, էջ 6:

⁹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 93 և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 91:

¹⁰ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 2013, էջ 88:

Համաշխարհային առևտրի ասպարեզում արտահանվող պարենամթերքների տարեկան միջին գները, դոլար/տոննա*

Տարի	Պարենային մթերքներ						
	ցորեն	եգիպտացորեն	բրինձ	սոյայի յուղ	կարագ	թռչնամիս	սոյա
2000	118	88	206	-	1204	592	193
2001	129	89	177	-	1293	646	180
2002	150	99	196	-	1055	581	201
2003	149	105	200	-	1353	611	241
2004	161	111	244	616	1788	757	288
2005	157	98	290	544	2128	847	238
2006	199	121	311	598	1773	734	234
2007	263	162	334	881	2959	934	326
2008	344	223	697	1258	3607	996	474
2009	252	171	600	791	1865	938	401
2010	294	192	619	864	2215	948	423
2010/2000 (%)	249,1	218,2	300,5	140,2**	183,9	160,1	219,2

* Աղբյուր: U. S. Department of Agriculture, Agricultural Statistics, Washington DC. /www.fas.usda.gov/

** Հաշվարկված է 2004 թ. նկատմամբ:

Աշխարհի բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկը ամենաառողակի իմաստով **հացի խնդրի** լուծումն է: Ուստի առավել հանգամանորեն դիտարկենք պարենի համաշխարհային շուկայում հացահատիկի առևտրի ծավալների և գների զարգացման միտումները: Ի սկզբանե արձանագրենք, որ հացահատիկի համաշխարհային գների վրա առավել ազդեցիկ են հետևյալ գործոնները.

1. Արտահանող որևէ երկրի կողմից հացահատիկի արտահանման արգելքի կիրառումը,
2. Արտահանող որևէ երկրում հացահատիկի արտադրության ծավալների նվազումը,
3. Հիմնական ներմուծող երկրներում բարձր բերքի ստացումը,
4. Ինֆլյացիայի համաշխարհային մակարդակը,
5. Տնտեսապես հզոր երկրներում տոկոսադրույքի փոփոխությունը,

6. ԶԼՄ-ում լուրերի շահարկումը,

7. Հացահատիկի պաշարների մասին հաշվետվությունները:

Ներկայումս հացահատիկի համաշխարհային շուկայում վաճառքի կեսից ավելին բաժին է ընկնում ցորենին: Այս կարևոր արտադրանքի համաշխարհային արտադրության և սպառման վերջին տարիների շարժընթացը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշներն ունեն աճի միտում (աղյուսակ 2): Ի դեպ, բացառությամբ 2010 թ. բերքից մինչև 2011 թ. բերքը ընկած ժամանակահատվածի ավելացել է նաև մեկ շնչի հաշվով ցորենի սպառումը:

Աղյուսակ 2

Ցորենի համաշխարհային արտադրությունը, սպառումը և վաճառքը (մլն տոննա)*

	2008/2009	2009/2010	2010/2011	2011/2012	2012/2013 օգոստոս
Արտադրություն	682,754	686,189	651,898	695,177	662,826
Սպառում	643,110	653,445	654,478	685,558	683,249
Արտահանում	143,547	135,563	133,728	151,567	136,650
Սպառումը մեկ շնչի հաշվով, կգ	95.27	95.53	94.9	99.7	97.5

*Աղբյուրը: Կազմել է հեղինակը օգտագործելով հետևյալ կայքերը՝ snstats.un.org/unsd/demographic/products/dub/dybsets/, <http://micextrader.ru/analitika/factory-vliayushhie-na-stoimost-pshenicy.html>

Ցորենի փոխանցվող պաշարների և սպառման ծավալների ուսումնասիրության համար հատկապես կարևոր է դեկտեմբերի դրությամբ առկա ռեսուրսների և օգտագործման հաշվեկշռի կազմումը: Բան այն է, որ դեկտեմբերին հիմնականում դադարում է արտադրության հաշվին ռեսուրսների ավելացումը և առավել տեսանելի է դառնում փոխանցվող պաշարի շարժը:

Ցորենի համաշխարհային հաշվեկշռի (աղյուսակ 3) վերջին 6 տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ բերքահավաքի տարածքը 2008 թ. համեմատությամբ 2013 թ. կրճատվել է 2,7%-ով, իսկ բերքատվությունը՝ բարձրացել 6,9%-ով: Այս միտումը բնութագրական է նաև գյուղատնտեսական մյուս մշակաբույսերի համար, քանի որ պարենի արտադրության ավելացման էքստենսիվ հնարավորությունները սահմանափակ են:

Ցորենի համաշխարհային հաշվեկշիռը դեկտեմբեր ամսվա դրությամբ (2008–2013 թթ.)*

	2008	2009	2010	2011	2012	2013
Պաշար սկզբում, հազ. տոննա	124319	165074	197909	196744	199468	175832
Արտադրություն, հազ. տոննա	683259	680429	647181	694637	655637	711418
Ներմուծում, հազ. տոննա	140285	131420	122230	141461	141967	151749
Ընդամենը առաջարկ, հազ. տոննա	944511	978319	967764	1032842	997072	1038999
Արտահանում, հազ. տոննա	143301	134076	125157	146740	137381	156920
Ներքին պարենային կարիքներ, հազ. տոննա	517242	533223	538247	541429	549320	560528
Կերի համար, հազ.տոննա	118435	115373	122527	147644	130203	138767
Ընդամենը օգտագործում	778978	782672	785931	835813	816904	856215
Պաշար վերջում, հազ. տոննա	165074	195973	182833	197029	180168	182784
Տարեվերջի պահուստ/ընդամենը օգտագործում, %	21.2	25.0	23.3	23.60	22.05	21.30
Պարենային անվտանգությունը, %	107.5	104.9	97.9	100.80	96.50	101.70
Փոխանցվող պաշարի շարժը (պաշարը վերջում - պաշարը սկզբում)	40755	30899	-15076	285	-19300	6952

* Աղբյուրը: <http://www.usda.gov/wps/portal/usda/usdahome>

Աշխարհում գյուղատնտեսական հողերի տարածքը կրճատվում է, մասամբ ուրբանիզացման, մասամբ էլ՝ բնապահպանական խնդիրների թելադրանքով: ՊԳԿ-ի կանխատեսումներով՝ առաջիկա 40 տարիների ընթացքում ամբողջովին կսպառվի վարելահողերի ընդարձակման հնարավորությունը, իսկ ոռոգման ջրի վերականգնվող պաշարների 70%-ը ներկայումս օգտա-

գործվում է: Հետևաբար, բնակչության պարենային անվտանգության ապահովման համար բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործումը և ագրարային արտադրության մեջ նորամուծական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառությունն այլընտրանք չունեն: Բայց պետք է նկատի ունենալ, որ այդ ռազմավարությունը հատկապես սկզբնական շրջանում մեծացնում է արտադրության ծախսատարությունը, ինչը, իր հերթին, ազդում է պարենային ապրանքների գների բարձրացման վրա:

Համաշխարհային պարենային շուկայի վրա ազդող վերոհիշյալ գործոնները հատկապես ծանր պայմաններ են ստեղծում ներմուծող երկրների համար: Ուստի անխուսափելի է դառնում ներքին ռեսուրսների մոբիլիզացման և նորամուծական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ պարենային ինքնարավոյության մակարդակի բարձրացումը:

Աղյուսակ 4

ՀՀ արտաքին առևտուրը (մլն ԱՄՆ դոլար)*

Ցուցանիշները	Տարիներ						
	2000	2005	2008	2009	2010	2011	2012
Ապրանքների արտահանում (ՖՕԲ գներով)	300,5	973,9	1057,2	710,2	1041,1	1334,3	1428,1
Որից պարենային	29,3	114,1	199,7	134,8	170,5	237,1	323,2
Ապրանքների ներմուծում (ՄԻՖ գներով)	884,7	1801,7	4426,1	3321,1	3749,0	4151,3	4266,8
Որից պարենային	191,7	315,9	760,6	612,0	673,5	781,2	812,5
Արտաքին առևտրի հաշվեկշիռը							
ա) ըստ ներմուծման ՄԻՖ գների	-584,2	828,5	-3368,9	-2610,9	-2707,9	-2817,0	-2838,7
բ) ըստ ներմուծման ՖՕԲ գների	-459,0	-582,9	-2662,5	-2083,5	-2120,4	-2273,0	-2181,6
Պարենամթերքի արտաքին առևտրի հաշվեկշիռը	-162,4	-201,8	-560,9	-477,2	-503,0	-544,1	-489,3

* Կազմել է հեղինակը ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովությունը և աղքատությունը» 2004–2013 թվականների տվյալների հիման վրա:

Հայաստանի արտաքին առևտրում զգալի տեսակարար կշիռ ունեն պարենային ապրանքները: Ինչպես երևում է թիվ 4 աղյուսակում կատարված հաշվարկներից՝ պարենային ապրանքների առևտրային հաշվեկշիռը ուսումնասիրվող բոլոր տարիներին բացասական է: Ավելին, այդ բացասական մնացորդը հիմնականում ավելացման միտում ունի: Այսինքն՝ Հայաս-

տանը որպես նետո-ներմուծող երկիր, համաշխարհային պարենային շուկայի գնային տատանումների նկատմամբ խիստ զգայուն է:

Բավական լուրջ սպառնալիք է նաև այն հանգամանքը, որ պարենային ճգնաժամի պայմաններում առաջնային կարգով բավարարվում է տնտեսապես հզոր երկրների պահանջարկը: Այսինքն՝ այստեղ նույնպես գործում է վճարունակության գործոնը, և նախապատվությունը տրվում է առավել բարձր գին վճարողին: Համաշխարհային պարենային շուկայի այս առանձնահատկությունը ևս թելադրում է, որ երկրի պարենային ներքին շուկան չի կարող լինել բացառապես ինքնակարգավորվող: Ավելին, թեկուզ այն հանգամանքը, որ այս շուկային հատուկ է **պահանջարկի ցածր և գների բարձր ճկունությունը, արդեն իսկ պահանջում է գործուն պետական կարգավորում, քանի որ դրա բացակայությունը կամ անարդյունավետությունը կարող է հանգեցնել ծանր սոցիալտնտեսական, անգամ՝ քաղաքական հետևանքների:** Ահա թե ինչու պարենային ներքին շուկայի կարգավորումը մենք դիտում ենք որպես ագրարային քաղաքականության առանցքային խնդիր, որի լուծումը երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համալիր միջոցառումների իրականացումն է: Վերադառնալով ներքին պարենային շուկայի արտաքին ազդեցություններին՝ նշենք, որ ՀՀ ներկրվող պարենային հիմնական մթերքների գները 2000–2012 թթ. հիմնականում բարձրացման միտում են դրսևորում (աղյուսակ 2): Այս երևույթն երկակի ազդեցություն է թողնում պարենային ներքին շուկայի վրա: Նախ՝ բարձրանում են գները և, երկրորդ՝ մեծանում է որակական բարձր հատկանիշներ չունեցող պարենի տեսակարար կշիռը, քանի որ ներմուծողները ցածր վճարունակություն ունեցող սպառողների զանգվածին առաջարկում են գնային առումով մատչելի, բայց ոչ որակյալ սննդամթերք: Դրա օրինակները շատ են, բայց ամենապատկերավորը 2010 թ. բավական աղմուկ հանած գոմեշի մսի ներմուծումն էր: ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում դրությունը որոշ չափով շտկվեց, բայց որակի վերահսկողության գործուն համակարգի բացակայության պայմաններում շարունակվում է ժամկետանց և գենետիկորեն ձևափոխված, ուղեկցող փաստաթղթերին չհամապատասխանող, անթույլատրելի չափերի նիտրատների մնացորդային քանակությամբ սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի ներմուծումը: Բազմաթիվ փաստերից առանձնացնենք թուրքական լուլիկի և հորմոնային կերերով ստացված հավի մսի զանգվածային ներմուծումը: Կարծում են, ակնհայտ է նաև, որ միայն մենաշնորհի առկայությամբ և վերահսկողության գործուն համակարգի բացակայությամբ է հնարավոր բացատրել ՀՀ շուկայում շաքարի գնի բարձրացման տևական միտումը, երբ այդ նույն ժամանակահատվածում համաշխարհային գինը բավական կայուն է (հավելված 1):

Աղյուսակ 5

Մի քանի հիմնական պարենամթերքների ՀՀ ներմուծման արժեքը (կգ/դոլար)*

	2009	2010	2011	2012	2012/2009 %
Միս և մսամթերքներ	1.43	1.38	1.52	1.61	112,5
Ձուկ և խեցգետնավորներ	1.87	1.91	1.81	1.78	95.2
Հացահատիկ և հացամթերքներ	0.28	0.28	0.30	0.32	112.7
Շաքար և հրուշակեղեն	0.43	0.40	0.67	0.71	166.0
Պատրաստի անանակեր	0.63	0.60	0.76	0.79	125.0
Սուրճ, թեյ, կակաո և այլ համեմունքներ	3.18	3.23	3.59	3.66	115.2
Մրգեր և բանջարեղեն	1.22	1.14	1.16	1.15	94.4

* Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ՀՀ ԱՎԾ-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման)»:

Աղյուսակ 5-ի տվյալները վկայում են, որ անգամ համաշխարհային պարենային ճգնաժամից հետո ՀՀ ներմուծվող հիմնական պարենային ապրանքների գները տարեց տարի բարձրանում են: Անտարակույս, դրա հիմնական պատճառը համաշխարհային գների բարձրացման միտումն է, բայց պակաս ազդեցություն չունի նաև երկրի ներսում իրականացվող տնտեսական քաղաքականությունը: Հայաստանը կալորիականությամբ հաշվարկած՝ սեփական արտադրությամբ ընդամենը 55–60%-ով է բավարարում բնակչության պարենի պահանջարկը: Ուստի պարենի համաշխարհային շուկայի ոչ շահեկան զարգացումները մեկ անգամ ևս ահագանգում են, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել պարենային անվտանգությանը միտված արդյունավետ ագրարային քաղաքականություն:

ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել պարենային անվտանգության բազմաթիվ բնորոշումների: Մենք առավել պարզ ու ընդգրկուն ենք համարում հետևյալը. «Երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության համար առողջապահական (ֆիզիոլոգիական) նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում սննդամթերքի մատակարարման անհնարի-նության (անբավարարության) դեպքում՝ պարենային ճգնաժամերի առաջացման բացառումը»¹¹: Այլ կերպ ասած՝ պարենային անվտանգությունը երկրի տնտեսության այնպիսի վիճակն է, երբ առկա է անհրաժեշտ քանակությամբ պարեն և բնակչությունն այն ձեռք բերելու հնարավորություն ունի:

«Պարենային անվտանգություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ դրվեց 1970-ական թվականների կեսերին, երբ ի տարբերություն զարգացած երկրներում պարենի ակնհայտ գերարտադրության, այսպես կոչված՝ «երրորդ աշխարհի» երկրներում զանգվածային բնույթ էին ստացել սովը և թերսնումը: Արդեն միանգամայն ակնհայտ էր, որ պարենային անբավարարության հիմնախնդիրը հետևանք է ոչ այնքան Մալթոսի «պտղաբերության նվազման» տեսության կամ տնտեսության ագրարային հատվածի թույլ զարգացածության, որքան՝ առանձին երկրների բնակչության որոշակի հատվածի աղքատության, ինչը դժվարացնում է գործող գներով պարենի ձեռքբերումը:

Հարկ է նշել, որ «Food Security» անգլերեն ելակետային հասկացությունը թարգմանվում է երկակի՝ «պարենային անվտանգություն» և «պարենային ապահովություն»: Ուստի պարենային հիմնախնդիրն ավելի հիմնավոր քննարկելու համար պետք է տարանջատել «հասարակության պարենային ապահովում» և «երկրի պարենային անվտանգություն» հասկացությունները: Ինչպես գիտական հրապարակումներում, այնպես էլ պաշտոնական փաստաթղթերում այս հասկացությունները մատուցվում են տարաբնույթ իմաստներով: Մեր կարծիքով, «հասարակության պարենային ապահովումը» հասարակության բոլոր անդամներին բավարար քանակությամբ անվտանգ և որակյալ պարենով ապահովումն է, որի համար օգտագործվում

¹¹ Սամվել Ավետիսյան, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր.: Լիմուշ հրատ, 2010, էջ 112:

են ոչ միայն երկրում արտադրվող, այլև ներմուծվող և օգնության կարգով ստացվող պարենային մթերքները: Իսկ «երկրի պարենային անվտանգությունը» սեփական ռեսուրսների շնորհիվ բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխան սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության ապահովումն է՝ ինչպես սովորական, այնպես էլ արտակարգ իրավիճակներում:

Ընդունված է պարենային անվտանգության հիմնախնդրի էության փոփոխության պատմական ընթացքը բաժանել վեց փուլի:

Աղյուսակ 6

Պարենային անվտանգության հիմնախնդրի էվոլյուցիան*

1940–1950 թթ.	Պարենի ավելցուկի վերաբաշխում՝ պարենային օգնություն հակաֆաշիստական կռաւիցիայի երկրներին
1960-ական թվականներ	Պարեն գարգացման համար՝ հումանիտար օգնություն «երրորդ աշխարհի» երկրներին
1970-ական թվականներ	Պարենի մատչելիության երաշխիքներ՝ պարենային շուկայի կարգավորում
1980-ական թվականներ	«Պարենային անվտանգության» հասկացության ընդլայնում՝ ինքնաբավություն և կայունություն, «կանաչ հեղափոխություն»
1990-ական թվականներ	Պայքար սովի և թերսնման վերացման համար՝ միջազգային համագործակցություն, տեխնոլոգիական աջակցություն
2000–2014 թթ.	Սննդամթերքի անվտանգության և որակի բարձրացում, կայուն զարգացում՝ էկոլոգիական գյուղատնտեսություն, անվտանգության և որակի մշտադիտարկում

* Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի ՊԳԿ-ի նյութերը:

Վերլուծելով պարենային անվտանգության հիմնախնդրի էվոլյուցիան՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը.

- ա) պարենային անվտանգությունը ազգային շրջանակներից վերաճել է միջազգային հիմնախնդրի և դարձել ազդեցության գործիք,
- բ) պարենային հիմնախնդրի քանակական բնութագրիչների հետ առաջնային են դառնում որակական բնութագրիչները,
- գ) շեշտադրվում է ռեսուրսախնայողական և էկոլոգիական պարենային անվտանգությունը,
- դ) ազգային մակարդակում կարևորվում են պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացումը և ագրոպարենային ոլորտի պետական աջակցությունը:

ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» փաստաթղթում նշվում է, որ ՀՀ-ն, կարևորելով գերատեսչական-ճյուղային բարեփոխումների համալիրը, ի թիվս կարևոր այլ ոլորտների, այն նպատակաուղղում է «...բնակչության **կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության** ապահովմանը, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի ու սննդամթերքի արտադրության ավելացմանը, ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավմանը, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովմանը, տարածքային համալիր ծրագրերի իրականացմանը, հատկապես սահմանամերձ ու լեռնային շրջանների բնակավայրերի տնտեսական ու սոցիալական զարգացմանը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ագրարային հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացմանը»:¹² Պետք է ընդգծել, որ թեև խիստ հակիրճ, բայց ընդգրկուն են ներկայացված բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության հիմնահարցերը:

Դեռևս 2002 թ. ընդունվել է «Պարենային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ նախագահի 2011 թ. մայիսի 18-ի ՆԿ 91-Ն կարգադրությամբ հաստատվեց «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», իսկ 2011 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին թիվ 1522-Ն որոշումը: Մինչ այդ ՀՀ կառավարությունը 2010 թ. նոյեմբերի 4-ին ընդունել էր «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշումը, որը համապարփակ ձևով ներկայացնում էր առաջիկա տասնամյակում իրականացվելիք ագրարային քաղաքականության և պարենային անվտանգության ապահովման ուղենիշները:

Վերոհիշյալ իրավական ակտերով ոչ միայն կանոնակարգվում են ագրարային հատվածի իրավահարաբերությունները, այլև գիտական կանխատեսումների հիման վրա ներկայացվում է մինչև 2020 թ. ընկած ժամանակահատվածում ռազմավարական նշանակության գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալները:

¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»:

«Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանվեց, որ պետության պարենային անվտանգությունը տնտեսության այնպիսի վիճակ է, որն ապահովում է երկրի պարենային անկախությունը և երաշխավորում բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը: Միաժամանակ, օրենսդրորեն ձևակերպվեցին պարենային անվտանգության հետևյալ հիմնական հասկացությունները.

- **«սննդամթերքի ֆիզիկական մատչելիություն»**՝ բնակչության գնդունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովում.
- **սննդամթերքի տնտեսական մատչելիություն**՝ բնակչության գնդունակ պահանջարկի մակարդակ, որն ապահովում է բնակչությանը սննդամթերքի ձեռքբերման հնարավորություն՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան.
- **պարենային անկախության կամ սննդամթերքի արտադրության անհրաժեշտ մակարդակ**՝ կենսապես կարևորագույն սննդամթերքի գծով տեղական արտադրության մակարդակ.
- **պետական պարենային պահուստ**՝ Հայաստանի Հանրապետության պետական պահուստի բաղկացուցիչ, որը նախատեսված է օգտագործել պարենային ճգնաժամի կանխարգելման կամ դրա հետևանքների վերացման նպատակով»¹³:

Այս օրենքով և հայեցակարգով ձևակերպվեցին, ըստ էության, նաև ազգային պարենային անվտանգության չափանիշները և դրանց չափորոշիչները, որոնք ուղենիշային են ՀՀ տնտեսական անվտանգության քաղաքականության համար:

Այդուհանդերձ, պարենային անվտանգության օրենսդրությունը տակավին պատշաճ կիրառություն չի գտնում: Դրա հիմնական պատճառը հաշվետվական և մշտադիտարկման կառուցակարգերի անկատարությունն է: Ահավասիկ, «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի գործողության մեջ մտնելուց (2003 թ. հունվարի 1) ի վեր չի կատարվել հոդված 9-ի հետևյալ պահանջը. «Մսնդամթերքի անհրաժեշտ և փաստացի մակարդակների յուրաքանչյուր տարվա հաշվեկշիռը կառավարությունը հաստատում է մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը»¹⁴: Այստեղից հետևում, որ պատշաճ չի իրականացվում նաև 10-րդ՝ «Պարենային շուկայի պետական հսկողություն» հոդվածի պահանջները:

¹³ Տե՛ս «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը

¹⁴ Նույն տեղում:

ՀՀ պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրով նախատեսված գյուղատնտեսության արտադրական ցուցանիշներ և կատարողականը*

Ցուցանիշները Չափի միավորը	2011 թ.		2012 թ.		2013 թ.			2014 թ.
	փասք.	ծրագ.	փասք.	կար.,%	ծրագ.	փասք.	կար.,%	ծրագ.
<i>Ցանրաբուսածրային, հազ. հա</i>								
- հացահատիկ	157.8	178.0	172.2	96.7	182.0	178.4	98.0	186.0
- կարտոֆիլ	28.7	30.9	31.2	100,9	30.6	30.7	100.3	30.3
- բանջարեղեն	25.0	24.4	25.2	103,3	24.6	25.4	103.2	24.8
Բազմամյա տնկարկներ, հազ. հա	53.4	62.0	56.7	91,4	65.4	57.66	88.2	69.0
<i>Համախառն բերքը, հազ. տոննա</i>								
-հացահատիկ	440.7	457.5	456.1	99,7	478.0	548.7	114.8	505.0
-կարտոֆիլ	557.3	628.0	647.2	103,0	637.0	660.5	103.7	648.0
-բանջարեղեն	787.1	927.0	849.0	91,6	956.0	875.8	91.6	990.0
-պտուղ	239.4	348.0	331.7	95,3	386.0	338.1	87.6	423.0
<i>Գյուղ. կենդանիների գլխաքանակը, հազ. գլուխ</i>								
-խոշոր եղջերավորներ	571.4	603.5	599.2	99,3	608.5	661.0	108,6	615.8
-ոչխարներ և այծեր	532.5	661.6	590.2	89,2	725.6	674.7	92,9	805.6
-խոզեր	114.8	121.4	118.1	97,3	127.0	145.0	114,2	134.0
Ընդամենը միս, կենդանի քաշով, հազ. տոննա	127.9	133.3	130.3	97,7	137.6	146.8	106.7	143.1
Կաթ, հազ. տոննա	601.5	691.6	618.2	89,4	716.6	657.0	91.7	748.1
Զու, մլն հատ	633.6	681.5	658.1	96,5	691.5	615.2	88.9	704.0

* Աղյուսակը կազմել է հեղինակը՝ «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի», ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովություն և աղքատություն, հունվար-սեպտեմբեր 2013 թ.» և ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալների հիման վրա:

Պարենային քաղաքականության հստակեցման առումով կարևոր քայլ էր «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի» և «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի» ընդունումը: Այս ուղենշային փաստաթղթերի հիմնադրույթները և միջոցառումների ժամանակացույցը կյանքի կոչելու համար պետք է ներդնել մշտադիտարկման գործուն համակարգ, բարելավել պարենային վիճակագրության մեթոդաբանությունն ու բարձրացնել վիճակագրական տվյալների հավաստիությունը:

«Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը» 2012–2014 թթ. համար նախատեսում է 16 ընդգրկուն և 57 մասնակի միջոցառումներ: Ինչպես ՀՀ կառավարության բազմաթիվ այլ փաստաթղթերում, այստեղ ևս միջոցառումների գերակշիռ մասը չափելի չէ, դժվար է ապահովել դրանց մշտադիտարկումն ու վերջնական արդյունքների գնահատումը: Այս թերությունից զուրկ են հիմնական պարենային ապրանքների արտադրական ցուցանիշները, ուստի 7-րդ աղյուսակում փորձել ենք գնահատել դրանց կատարողականը: Պարզվում է, որ 2012 թ. արդյունքներով նախատեսված 14 ցուցանիշներից միայն 3-ն է կատարվել 100 և ավելի տոկոսով: Մինչդեռ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություններում այդ խնդիրը չի շեշտադրվում. ավելին, համեմատելով նախորդ տարվա ցուցանիշների հետ՝ հիմնականում աճ է արձանագրվում: Այն տպավորությունն է, թե «միջոցառումների ծրագիրը» մոռացության է մատնված կամ զուտ ձևական բնույթ է կրում: **Կարծում ենք, որ պարենային անվտանգության գնահատման մեթոդաբանության համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել «միջոցառումների ծրագրի» մշտադիտարկման համակարգը և կառուցակարգերը:**

Մանրամթերքի ֆիզիկական մատչելիության խնդիրը ՀՀ-ում հիմնականում լուծված է, քանի որ ամենաձայրամասային բնակավայրերում անգամ պարենի որոշակի առաջարկ ապահովվում է՝ լավ թե վատ տեսականիով: Խնդիրն այլ է սննդամթերքի տնտեսական մատչելիության առումով: Պայմանավորված տարբեր գործոններով՝ բարձրանում է պարենի գները, բնակչության գնողունակությունը ցածր է, եկամուտների բևեռացման մակարդակը՝ բավականին մեծ, իսկ այս ամենն իր կնիքն է թողնում աղքատության մակարդակի և խորության վրա:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Երկրի պարենային ապահովության գնահատման հիմնական գործիքը պարենային հաշվեկշիռն է: Վերջինս որոշակի ժամանակահատվածի կտրվածքով հիմնական պարենային արտադրանքների ռեսուրսների և դրանց օգտագործման ուղղությունների հաշվեկշիռն է: Բացի դրանից, որոշվում է բնակչության մեկ շնչի հաշվով հիմնական պարենային արտադրանքների օրական և տարեկան սպառումը (ֆիզիկական ծավալով և կալորիականությամբ), ինքնաբավության մակարդակը, ինչպես նաև օրական սննդաբաժնի միջին կալորիականությունը: Նշված ցուցանիշները առանցքային կարևորություն ունեն բնակչության պարենային ապահովվածության և երկրի պարենային անվտանգության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: ՀՀ ԱՎԾ-ի բնութագրումով՝ «Պարենային հաշվեկշիռները կիրառվում են որոշակի ժամանակահատվածում երկրի պարենային ապահովության ամբողջական նկարագրության, պարենի անբավարար մատակարարման հետ կապված ռիսկերի գնահատման, պարենային ապահովության բնագավառում քաղաքական որոշումների կայացման և այլ նպատակներով»¹⁵:

ՀՀ-ում ԱՎԾ-ն առաջին անգամ 2002 թ. մարտի 14-ին հրապարակեց «Պարենային ապահովության և աղքատության 2001 թվականի հունվար-դեկտեմբեր» հաշվետվությունը, և դրանով սկիզբ դրվեց պարենային հաշվեկշիռների, նախ՝ կիսամյակային, ապա՝ եռամսյակային հրապարակմանը: Ի դեպ, անցած 12 տարիների ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի՝ պարենային հաշվեկշիռների կազմման մեթոդաբանությունը կատարելագործվել է, տվյալների շտեմարանը հարստացել: Կատարված հսկայական աշխատանքի շնորհիվ ՀՀ պարենային վիճակագրությունը ներկայումս դարձել է առավել լիարժեք և հիմնականում բավարարում է միջազգային կառույցների մշակած չափորոշիչներին: Կարևոր է, որ 2011 թ.-ից «պարենային հաշվեկշիռներ են կազմվել 21 ապրանքային խմբերի համար՝ նախկին 14 ապրանքախմբի փոխարեն, ինչպես նաև ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների որոշ ապրանքախմբերը լրացվել են նոր ապրանքատեսակներով»¹⁶:

«Հայաստանի Հանրապետության 2013–2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածի «Գյուղատնտեսու-

¹⁵ www.armstat.am/file/Qualitydec/am/131.pdf.

¹⁶ www.armstat.am/file/doc/99475438.pdf.

թյան» բաժնի 4 -րդ կետում նշված է. «Բուսաբուծական և անասնաբուծական մթերքի արտադրության առանձնահատկություններից ելնելով՝ դրանց ծավալների ճշգրտման գործիքակազմի կատարելագործում՝ միտված բերքատվության, մթերատվության, կորուստների և այլ ցուցանիշների գնահատման որակի բարձրացմանը»¹⁷:

Նույն փաստաթղթի «Պարենային ապահովություն» բաժնում նշվում է. «Միացյալ ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և Եվրոպական հանձնաժողովի երաշխավորած մեթոդաբանության համաձայն՝ պարենային ապահովության վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի (պարենի առկայություն, մատչելիություն և սպառում) շարունակական կատարելագործում և դրանց հիման վրա ազգային պարենային հաշվեկշիռների պարբերական կազմում»¹⁸: Ի դեպ, այս պահանջները տեղ են գտել նաև «Հայաստանի Հանրապետության 2010–2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածում, ինչը վկայում է պարենային հաշվեկշիռների կազմման մեթոդաբանության կատարելագործման ընթացքի մասին:

Այսպիսով, ակնհայտ է ՀՀ ԱՎԾ-ը որդեգրել է պարենային հաշվեկշիռների հետևողական կատարելագործման գործելաոճ, ինչն անչափ կարևոր է, դրվատանքի արժանի: Հետևաբար, այս ենթատեքստում շահեկան կլինի գիտական վերլուծության ենթարկել պարենային հաշվեկշիռների մեթոդաբանության և տվյալների հավաստիության հարցերը:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) պարենային հաշվեկշիռը ներկայացվում է հավասարման տեսքով, որի ձախ կողմում դիտարկվող ժամանակաշրջանում սննդամթերքի մատակարարման ենթահաշիվն է կամ **ամբողջական առաջարկը**, իսկ աջում՝ օգտագործման ենթահաշիվը կամ **օգտագործման ուղղությունները**: Ի դեպ, այս կազմակերպությունն ուղղակիորեն նշում է. «Ժամանակին և հավաստի վիճակագրական տեղեկատվությունը հուսալի պլանների և զարգացման ռազմավարության ձևավորման ամենակարևոր բաղկացուցիչներից է՝ ուղղված տարբեր երկրներում պարենային և գյուղատնտեսական արտադրանքների արտադրության և բաշխման կատարելագործմանը և, այդպիսով, կյանքի մակարդակի բարձրացմանը: Մննդամթերքի և գյուղատնտեսական արտադրանքների խումբ հաշիվներից կազմված մատակարարում/օգտագործում» վիճակագրական համակարգը (ՄՕՎ) կարող է ծառայել որպես հզոր գործիք գյուղատնտեսական ճյուղերի զարգացման ծրագրերի կազմման ժամանակ

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

առկա վիճակագրական տեղեկատվության արդյունավետ օգտագործումն ապահովելու համար: Այսպիսի համակարգի ստեղծումը նաև կնպաստի վիճակագրական տվյալների անհամապատասխանության բացահայտմանը, որը կհանգեցնի պարենային և գյուղատնտեսական արտադրանքների վիճակագրական հաշվետվության բարելավման անհրաժեշտության գիտակցմանը»¹⁹:

ՊԳԿ-ի մոտեցումներին համապատասխան՝ ՀՀ ԱՎԾ-ն կիրառում է պարենային հաշվեկշիռների կազմման ներքոհիշյալ մեթոդաբանությունը²⁰:

Ամբողջական առաջարկ: Պարենային հաշվեկշիռը, սովորաբար, կազմվում է օրացուցային տարվա կտրվածքով, ուստի ամբողջական առաջարկը ներառում է արտադրության, ներմուծման և տարվա սկզբի դրությամբ առկա պաշարների ցուցանիշները: Միանգամից նշենք, որ որոշ երկրներում ընդունված է տվյալ տարվա բերքից մինչև հաջորդ տարվա բերքը ընկած ժամանակահատվածի համար պարենային հաշվեկշիռի կազմման մեթոդը: Կարծում ենք, որ պահպանելով գործող մեթոդը, ՀՀ ԱՎԾ-ն կարող է ներկայացնել նաև, այսպես կոչված՝ «բերքից-բերք» հաշվեկշիռը, որն առավել ակնառու կդարձնի երկրի պարենային անվտանգության վիճակը:

Վերադառնալով ամբողջական առաջարկին՝ նշենք, որ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում պաշարների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման առումով կան տեխնիկական որոշ բարդություններ: Գնահատելով այդ իրողությունը՝ ՊԳԿ-ը նշում է. «...Գործնականում սկզբնական և վերջնական պաշարների վերաբերյալ պատշաճ տեղեկատվության բացակայությունը բարդացնում է այդ տեսակի հաշվեկշիռների կազմումը: Ընդամենը, փորձը ցույց է տալիս, որ պահուստների փոփոխման մասին տեղեկատվությունն ավելի մատչելի է, քան պահուստների իրական ծավալների մասին տեղեկատվությունը»²¹: Այս միտքն ավելի պարզ դարձնելու նպատակով նշվում է. «Եթե պահուստների զուտ նվազումը դիտարկենք որպես «պահուստից» (ավելի հասկանալի՝ «մուտքեր պահուստից»՝ Ս.Ա.), իսկ պահուստների զուտ ավելացումը որպես՝ «պահուստի համար» (այսինքն՝ «պահուստի լրացում»՝ Ս.Ա.), կստացվեն հետևյալ երկու հավասարումները.

¹⁹ ФАО, Проект: Интенсивный мониторинг безопасности продуктов питания в 5 странах СНГ (GCP/INT/814/EC), Документ No. 3, 2002 г., с. 3.

²⁰ Մեթոդաբանությունը մեջբերվում է ըստ <http://www.armstat.am/file/Qualitydec/am/131.pdf> հրապարակման:

²¹ ФАО, Проект: Интенсивный мониторинг безопасности продуктов питания в 5 странах СНГ (GCP/INT/814/EC), Документ No. 3, 2002 г., с. 4.

$$1) \text{ պահուստից} + \text{արտադրություն} + \text{ներմուծում} = \text{արտահանում} + \text{կերեր} + \\ + \text{սերմեր} + \text{կորուստ/թափոն} + \text{վերամշակում սննդի համար} + \\ + \text{սննդամթերք} + \text{այլ նպատակների համար,}$$

կամ՝

$$2) \text{ արտադրություն} + \text{ներմուծում} = \text{արտահանում} + \text{կերեր} + \text{սերմեր} + \\ + \text{կորուստ/թափոն} + \text{վերամշակում սննդի համար} + \text{սննդամթերք} + \\ + \text{այլ նպատակների համար} + \text{պահուստի համար:}$$

Արտադրության և ներմուծման միակցումն ինչպես պահուստի ավելացմանը, այնպես էլ պահուստի նվազմանը, ցույց է տալիս արտահանման և ներքին օգտագործման ծավալը, որտեղ ներքին օգտագործումը որոշվում է՝ կերեր + սերմեր + կորուստ/թափոն + վերամշակում սննդի համար + սննդամթերք + այլ նպատակների համար, հանրագումարով»²²:

Մեր դիտարկումով՝ հաշվեկշռի մնացորդի սկզբունքով սկզբնական և վերջնական պաշարների որոշման այս եղանակը, որը կիրառում է նաև ՀՀ ԱՎԾ-ն, պարզ հաշվարկ է, որը բոլոր սննդամթերքների համար չէ, որ ճիշտ արդյունք է ապահովում: Օրինակ, կարտոֆիլի համար, ըստ ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների, 2012 թ. համար այդ հավասարումները ստանում են հետևյալ արժեքները (հազ. տոննա).

$$1) \text{ պահուստից} 474.9 + \text{արտադրություն} 647.2 + \text{ներմուծում} 7.8 = \\ \text{արտահանում} 1.1 + \text{կերեր} 235.7 + \text{սերմեր} 125.0 + \text{կորուստ/թափոն} 84.3 + \\ \text{վերամշակում սննդի համար} 0.0 + \text{սննդամթերք} 124.8 + \text{այլ նպատակների} \\ \text{համար} 0.0;$$

Ստացվում է, որ 2012 թ. կարտոֆիլի 1129.9 հազ. տոննա ամբողջական առաջարկից օգտագործվել է 570.9 հազ. տոննան, իսկ 559.0 մնացել է պահուստ տարվա վերջին: Օգտագործված ծավալի կառուցվածքը ցույց է տալիս, որ արտահանմանը բաժին է ընկել մոտ 0.1%-ը, սննդի նպատակով օգտագործվել է ամբողջ առաջարկի ընդամենը 11,0%-ը, սերմի նպատակով՝ 11.1%-ը, անասնակերը կազմել է 20,9%-ը, կորուստը՝ 7,5%-ը, իսկ տարեվերջի պահուստ մնացել է 49,5%-ը: Մեր կարծիքով, սա ողջամիտ տրամաբանությունից զուրկ կառուցվածք է, քանի որ գյուղացին կարտոֆիլ արտադրում է պարենի և սերմի նպատակով, իսկ որպես անասնակեր օգտագործում է միայն ոչ պիտանի ֆրակցիան: Ինչ վերաբերում է պահպանության ընթացքում բնական պակասորդին, ապա այն նորմայի սահմաններում է, քանի որ սառը կլիմա ունեցող մարզերում (հիմնականում Շիրակ և Գեղարքունիք)

²² Նույն տեղում, էջ 4:

կորուստը կազմում է ամբողջ ծավալի 7-8%-ը²³: Մեր կարծիքով կարտոֆիլի օգտագործման նման կառուցվածքի բուն պատճառը արտադրության ծավալի արհեստական մեծացումն է, որի պայմաններում հավելագրված բերքի մի մասը վերագրվում է անասնակերին, որի ծախսը նորմավորված չէ, իսկ մյուս մասը ավելացվում տարեվերջի պահուստին: Բանը հասել է նրան, որ որոշ աղբյուրներ նման իրավիճակն ուղղակի համարում են կարտոֆիլի օգտագործման ուղղության փոփոխություն, ինչը հակազիտական դրույթ լինելով հանդերձ, նաև զավեշտական է: Ահավասիկ, այդպիսի մի մեկնաբանություն. «...Կարտոֆիլի սպառման կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մինչև 2004 թվականը կարտոֆիլը հիմնականում օգտագործվել է սննդի մեջ, այնուհետև 2005-ից սկսած այն առավելապես սկսեց օգտագործվել որպես անասնակեր: Արդյունքում 2010-ին կարտոֆիլի սպառման կառուցվածքում անասնակերի տեսակարար կշիռը կազմել է մոտ 25 տոկոս կամ 235 հազար տոննա, այնինչ սննդի մեջ օգտագործումը՝ մոտ 15 տոկոս կամ 143 հազար տոննա: Բացի այդ, 2010-ին կարտոֆիլի սպառման շուրջ 12 տոկոսը կամ 114 հազար տոննան ուղղվել են սերմացուի, իսկ կորուստները կազմել են 14 տոկոս կամ 80 հազար տոննա»²⁴:

Վերադառնանք տարեվերջի պահուստին: Վերջինիս քանակությունը խելամիտ տնտեսավարման պայմաններում պետք է բավարարի հունվարից մինչև հունիս պարենային սպառման և սերմացուի պահանջը: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2012 թ. մեկ շնչի հաշվով կարտոֆիլի ամսական սպառումը կազմել է 3.57 կգ²⁵, որը 3021.4 հազ. բնակչություն²⁶ ունեցող երկրում 6 ամսվա համար կկազմի 64.7 հազ. տոննա, իսկ սերմացուի քանակը՝ 125 հազ. տոննա: Եթե այս երկու ծախսային ուղղությունների հանրագումարին ավելացնենք ևս 15% ապահովագրական ֆոնդ, ապա տարեվերջի պահուստը կարող է կազմել 218,15 հազ. տոննա: Ստացվում է, որ պաշտոնական վիճակագրության տվյալներով կարտոֆիլի տարեվերջի պահուստը ավելի քան 340 հազ. տոննայով կամ 2,5 անգամ գերազանցում է հաշվարկային ցուցանիշը: Ո՞րն է խեղաթյուրված հաշվեկշռի հետևանքը: Պատասխանը միակն է՝ ստեղծվում է պարենային ապահովվածության կեղծ պատկեր, որը սպառնում է երկրի պարենային անվտանգությանը:

Պարենային հաշվեկշիռների հավաստիության բարձրացման հաջորդ խնդիրն առնչվում է ՀՀ և ԼՂՀ հաշվեկշիռների փոխհամաձայնեցմանը:

²³ Ծանոթ. բնական կորուստի նորմատիվները կարելի է որոշել

http://zarip-ovosch.ru/raschety_normy_estestvennoy_ubyli_s կայքից

²⁴ Գները և խոցելիությունը Հայաստանում, թողարկում N°5, հոկտեմբեր 2011 թ., էջ 4,

http://old.edrc.am/WP/Prices_and_Vulnerability/Prices_and_Vulnerability_oct.pdf

²⁵ ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովություն և աղքատություն, հունվար-սեպտեմբեր 2013 թ.»

էջ 94:

²⁶ ՀՀ ԱՎԾ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013, էջ 43:

ՀՀ տնտեսական զարգացումը ուղղակիորեն ազդում է ԼՂՀ տնտեսական զարգացման վրա: Միաժամանակ, որոշակի գործոններով պայմանավորված, նկատելի է նաև ԼՂՀ-ի փոխազդեցությունը: Ելնելով այս իրականությունից՝ աներկբա է, որ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսությունները շուրջ քառորդ դար զարգանում են աստիճանական սերտաման ճանապարհով: Հայկական երկու հանրապետությունների միջև մաքսային սահմանի բացակայությունը, միևնույն ազգային արժույթը և դրամավարկային քաղաքականությունը, ըստ էության՝ ընդհանուր շուկան, և նույնաման օրենսդրական դաշտը, ընդհանուր արժեհամակարգերն ու մշակութային քաղաքականությունը տնտեսական ինտեգրման հիմնավոր պայմաններ են ստեղծել: Այլևս անթաքույց է, որ ՀՀ ազգային և տնտեսական անվտանգության հայեցակարգն անհնար է պատկերացնել առանց Արցախի, և երկու երկրները փաստացի գտնվում են միևնույն քաղաքական ու տնտեսական տարածքում:

Այդուհանդերձ, որպես ինքնիշխան պետություններ՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն իրականացնում են ինքնուրույն տնտեսական քաղաքականություն, և միջպետական ինտեգրումը հիմնականում միտված է այդ քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Այս մոտեցումը միանգամայն տրամաբանական է, սակայն կան տնտեսական մի շարք ցուցանիշներ, որոնց հաշվարկման համար անհրաժեշտ է հատուկ մեթոդաբանություն: Ահավասիկ, երկու երկրների պարենային հաշվեկշիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ վիճակագրական ծառայությունները դրսևորում են ստանդարտ մոտեցում, հաշվի չեն առնում իրողությունները, ինչը բացասաբար է անդրադառնում ցուցանիշների հավաստիության վրա: Այս տեսանկյունից քննարկենք մի քանի նկատառում և փորձենք կատարել հետևություններ:

Նկատառում 1. ՀՀ պարենային հաշվեկշռի ամբողջական առաջարկի կարևոր բաղադրամասերն են պարենի տեղական արտադրության և ներմուծման ցուցանիշները: Վերջիններիս և տարեսկզբի պահուստի հանրագումարով ձևավորվում է տվյալ պարենամթերքի ամբողջական առաջարկը, որը հիմք է սպառումը հավասարակշռելու և ինքնաբավության մակարդակը հաշվարկելու համար: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն այդ ամբողջական առաջարկը բաշխում է երկրի ներսում՝ սննդի, սերմի, անասնակերի նպատակով սպառման, կորուստների հաշվարկման և տարեվերջի պահուստների ձևավորման համար: Այսինքն՝ հաշվի չի առնվում այն փաստը, որ այդ ծավալի մի մասը սպառվում է ԼՂՀ-ում:

Նկատառում 2. Միևնույն ժամանակ, ՀՀ բնակչության սպառած պարենի մեջ իր որոշակի չափաբաժինն ունի արցախյան ծագումով արտադրանքը, որը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը չի ներառում պարենային հաշվեկշռի ներմուծման բաժնում:

Նկատառում 3. ՀՀ և ԼՂՀ պարենային շուկայի և պարենային անվտանգության իրական ու ամբողջական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է կա՛մ վերանայել պարենային հաշվեկշռի կազմման մեթոդաբանությունը, կա՛մ որպես այլընտրանք կազմել միասնական պարենային հաշվեկշիռ և իրականացնել պարենային շուկայի կարգավորման միասնական քաղաքականություն:

Վերոհիշյալ նկատառումների հիմնավորման համար քննարկենք մի շարք պարենամթերքների պարենային հաշվեկշիռները: Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների՝ 2011 թ. ՀՀ և ԼՂՀ բնակչությունը համապատասխանաբար եղել է 3274.3 և 144,7 հազ. մարդ²⁷: Բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողատեսքերի տարածությունը ՀՀ-ում՝ 0,63 հա և ԼՂՀ-ում՝ 4,1 հա է, այդ թվում՝ վարելահողերի տարածությունը համապատասխանաբար՝ 0.14 և 0.96 հա: Պետք է նշել, որ մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսական հողատեսքերը ՀՀ-ում կազմում են 0.047 և ԼՂՀ-ում՝ 0.072 հա: Ըստ հողային հաշվեկշռի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա է մոտ 124878.5 հա վարելահող, որը գյուղատնտեսական նշանակության հողերի 21.0 տոկոսն է:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2012 թվականին ԼՂՀ-ում ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը կազմել է 64368.4 հա՝ 2011 թվականի համեմատ աճելով շուրջ 7526.6 հա-ով կամ 13.2 տոկոսով: Այդուհանդերձ, մշակվում է վարելահողերի ընդամենը 46,6 տոկոսը, որը խիստ ցածր ցուցանիշ է: Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ ցանքատարածությունների ավելի քան 93%-ը բաժին է ընկնում հացահատիկային մշակաբույսերին, որը, ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ տնտեսական առումով գյուղատնտեսական արտադրության կազմակերպման արդյունավետ ձև չէ: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ԼՂՀ գյուղատնտեսության գլխավոր ճյուղը հացահատիկային տնտեսությունն է, և պարենային ցորենի տեղական արտադրությունը գերազանցում է պահանջարկին:

Աղյուսակ 8-ի տվյալներից երևում է, որ ԼՂՀ-ից 2009–2011 թթ տարեկան միջին հաշվով 12 հազ. տոննա ցորեն է արտահանվել, որը ներկրվում է բացառապես Հայաստան: Մինչդեռ, քանի որ այս երկրների միջև արտաքին առևտուրը պաշտոնական ձևակերպում չի ստանում, վերոհիշյալ քանակությունը ամենայն հավանականությամբ, չի արտացոլվում ՀՀ պարենային ցորենի տարեկան հաշվեկշռում կամ ավելացվում է տեղական արտադրության ծավալին: Երկու դեպքում էլ իրական պատկերը խեղաթյուրվում է, հանգեց-

²⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 25, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2005-2011 թթ., էջ 32 http://stat-nkr.am/files/yearbooks/2005_2011/4_bnakchut.pdf

նում սխալ հետևությունների: Մեթոդաբանության անկատարությունն ակնհայտ է նաև ԼՂՀ բնակչության 1 շնչի հաշվով ցորենի սպառման հաշվարկման տեսանկյունից: Այսպես, ըստ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած նվազագույն սպառողական գամբյուղի՝ բժշկական նորմաներով հացի և հացամթերքի օրական սպառումը նախատեսված է 355 գրամ կամ տարեկան՝ մոտ 130 կգ²⁸: Մինչդեռ նույն աղբյուրի տվյալներով, փաստացի սպառումն առողջապահական նորման գերազանցում է 1,9–2,6 անգամ: Պարզապես անտրամաբանական է, որ 1 շնչի հաշվով օրական սպառվում է 670,1–935,6 գրամ պարենային ցորեն: Այս անճշտության հետևանքով խախտվում է նաև սննդաբաժնի կառուցվածքը: Օրինակ, 2011 թ. ԼՂՀ-ում 1 շնչի հաշվով ցորենի սպառումն օրական ապահովում է 2994 կկալ., այն դեպքում, երբ առողջապահական նորմաներով ամբողջ սննդաբաժնի սննդաբար արժեքը նախատեսված է 2412.1 կկալ:

Աղյուսակ 8

ՀՀ և ԼՂՀ պարենային ցորենի հաշվեկշիռը, հազ. տոննա*

	Հայաստանի Հանրապետություն			Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն		
	2009	2010	2011	2009	2010	2011
Պահուստներ տարվա սկզբում	194.7	261.5	283.5	42.1	46.1	28.8
Արտադրություն	198.1	183.5	224.1	71.1	43.6	75.6
Ներմուծում	397.8	365.5	392	5.0	10.1	9.1
Ամբողջական առաջարկ	790.6	810.5	899.6	118.2	99.8	113.5
Մնդի օգտագործում	435.7	430.5	443.5	34.4	43.8	49.2
Անասնակեր	56.4	61.1	64.5	9.4	6.2	9.6
Կորուստներ	8.7	8	8.8	1.9	1.5	1.7
Սերմացու	23	21.9	19.5	11.8	9.7	10.3
Արտահանում	0.8	1.1	2.7	14.6	9.8	11.7
Այլ օգտագործում	4.5	4.4	5	0.0	0.0	0.2
Պահուստներ տարվա վերջում	261.5	283.5	355.6	46.1	28.8	30.8
Օգտագործում	790.6	810.5	899.6	118.2	99.8	113.5
Ինքնաբավության աստիճան, %	33.3	33.5	36.5	115.6	99.3	103.6
Սպառումը մեկ շնչի հաշվով						
կգ/տարի	143.6	142.0	151.5	244.6	306.7	341.5
գր/օր	393.3	389.1	415.0	670.1	840.3	935.6
կկալ/օր	1113.1	1076.5	1114.4	2144.4	2688.9	2994.0

* Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ԼՂՀ ԱՎԾ տվյալները:

²⁸ ԼՂՀ գյուղատնտեսությունը 2012թ., Վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2013, էջ 16:

Քննարկենք մեկ այլ պարենամթերք ևս, որի ինքնաբավության մակարդակը ԼՂՀ-ում բավական ցածր է, և պակասը լրացվում է ներմուծմբ: Դիցուք, տեղական արտադրությամբ ԼՂՀ-ում տավարի մսի պահանջարկը 2009–2011 թթ. միջին հաշվով բավարարվել է 57.5%-ով: Ըստ պարենային հաշվեկշռի (աղյուսակ 9)՝ տարեկան միջին հաշվով ներմուծվել է 1,23 հազ. տոննա տավարի միս, որի մի մասը հաշվարկված է նաև ՀՀ-ի ներմուծման, մի մասն էլ՝ տեղական արտադրության ծավալում: Ինչպես նկատում ենք, դարձյալ ոչ հստակ մեթոդաբանությունը պատճառ է դառնում կրկնահաշվարկի և ոչ ճիշտ արդյունքային ցուցանիշների:

Աղյուսակ 9

ՀՀ և ԼՂՀ տավարի մսի պարենային հաշվեկշիռը, հազ. տոննա*

	Հայաստանի Հանրապետություն			Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն		
	2009	2010	2011	2009	2010	2011
Պահուստներ տարվա սկզբում	0.3	0.4	0.3	0.0	0.0	0.0
Արտադրություն	49.6	48	48.2	1.6	1.7	1.6
Ներմուծում	13.9	8.7	13.4	0.9	1.3	1.5
Ամբողջական առաջարկ	63.8	57.1	61.9	2.5	3.0	3.1
Մսնդի օգտագործում	62.2	55.7	60.8	2.4	3.0	2.9
Անասնակեր	0	0	0	0.0	0.0	0.0
Կորուստներ	0.8	0.8	0.8	0.0	0.0	0.0
Սերմացու	0	0	0	0.0	0.0	0.0
Արտահանում	0.4	0.3	0.1	0.1	0.0	0.2
Այլ օգտագործում	0	0	0	0.0	0.0	0.0
Պահուստներ տարվա վերջում	0.4	0.3	0.2	0.0	0.0	0.0
Օգտագործում	63.8	57.1	61.9	2.5	3.0	3.1
Ինքնաբավության աստիճան, %	78.6	85.1	78.4	66.7	56.7	55.2
Սպառումը մեկ շնչի հաշվով						
կգ/տարի	20.5	18.4	20.8	17.1	21.0	20.1
գր/օր	56.1	50.3	56.9	46.8	57.5	55.1
կկալ/օր	101.1	90.6	102.4	84.3	103.6	99.1

* Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ԼՂՀ ԱՎԾ տվյալները:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ պարենային հաշվեկշիռների մեթոդաբանությունը վերանայման, իսկ տվյալները՝ ճշգրտման կարիք ունեն: Ուստի մեր կատարած հետազոտությունների արդյունքում առանձնացվել է ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների կազմման մեթոդաբանության բարելավման հետևյալ դրույթները.

1. Պարենային ռեսուրսների վիճակագրական շտեմարանի ընդլայնում, հաշվառման կառուցակարգերի հստակեցում և տվյալների հավաստիության մակարդակի բարձրացում:
2. Պարենային արտադրանքների տարեվերջի պահուստի չափերի նորմավորում և կտրուկ տատանումների կարգավորում:
3. ՀՀ և ԼՂՀ պարենային հաշվեկշիռների համադրում և միասնական հաշվեկշիռների մշակում:
4. Պարենային արտադրանքների պահանջարկի որոշման համար չափահաս բնակչության հաշվով սահմանված սպառման նորմաներից անցում կատարել ըստ տարիքային խմբերի տարբերակված սպառման նորմաների:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Պարենային անվտանգությունը ամբողջական և զարգացող համակարգ է: Հետևաբար, սոցիալտնտեսական միջավայրի փոփոխություններն իրենց ազդեցությունն են գործում այդ համակարգի որակական և քանակական պարամետրերի վրա: Պարենային անվտանգության հենքային հասկացություններից մեկը պարենային զամբյուղն է կամ ամենաառաջնային սպառում ունեցող սննդամթերքների անվանացանկն ու սպառման նորմաները: Վերջինիս հիման վրա հաշվարկվում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը, որը ՀՀ-ի պայմաններում նվազագույն սպառողական զամբյուղի հիմնական բաղադրիչն է:

«Պարենային անվտանգության ապահովման հայեցակարգում» ներկայացված են նաև ՀՀ առողջապահության նախարարության և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի համատեղ մշակված նվազագույն պարենային զամբյուղի վերաբերյալ առաջարկությունները: Մշակման համար հիմքն են նուտրիցիոլոգիայում (սննդաբանություն) ընդունված հաշվեկշռված սնուցման հիմնական սկզբունքները, սննդային հիմնական բաղադրիչների՝ սպիտակուցների, ճարպերի և ածխաջրատների հարաբերակցության պահպանումը: ՀՀ առողջապահության նախարարությունը, հաշվի առնելով հանրապետության բնակչության կենսակերպը, սնուցման ազգային մշակույթը, մշտական թերսնուցման հիմնախնդիրը, առաջարկել է պարենային զամբյուղի՝ գիտականորեն հիմնավորված կազմը, կառուցվածքը և էներգետիկ արժեքը, որն ներկայացված է աղյուսակ 10-ում:

Թեև ՀՀ Ազգային Ժողովը դեռևս 2004 թ. մայիսի 16-ին ընդունել է «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, սակայն նվազագույն պարենային զամբյուղը դեռևս պաշտոնապես չի հաստատվել: Ըստ ՄԱԿ-ի ՊԳԿ-ի՝ պարենային զամբյուղի կազմի և կառուցվածքի սահմանման հիմքը միայն մարդու օրգանիզմի կենսագործունեության համար անհրաժեշտ սննդային հիմնական նյութերի և էներգիայի ֆիզիոլոգիական պահանջն է, ինչպես նաև գիտականորեն ընդունված սնուցման հիմնական սկզբունքը՝ սննդային հիմնական բաղադրիչների (սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրատներ՝ 1:1:4 հարաբերակցությամբ) և կենսաքանական ակտիվ նյութերի (վիտամիններ, միկրոտարրեր) որակական և քանակական օպտիմալ հարաբերակցությունը:

ՀՀ առողջապահության նախարարության առաջարկած նվազագույն պարենային զամբյուղի կազմը, կառուցվածքը և էներգետիկ արժեքը*

Հ/Հ	Պարենամթերքի անվանումը	Չափի միավոր	Օրական սպառումը 1 շաբաթահատվածում	Օրաբաժնի էներգետիկ արժեքը (կկալ)
1	Հացամթերք, այդ թվում՝	գր.	355	992.2
1.1	հաց	-"	250	622.5
1.2	սլոն	-"	20	70.6
1.3	մակարոնեղեն	-"	15	55
1.4	ծավարեղեն (բրինձ)	-"	50	175.5
1.5	ընդեղեն	-"	20	68.6
2	Մսամթերք (լիարմա միս)	գր.	100	203
3	Կաթնամթերք, այդ թվում՝	-"	255	339.7
3.1	կաթ	մլ.	200	122
3.2	կաթնաշոռ	գր.	10	7.5
3.3	կենդանական յուղ (կարագ)	-"	20	143.4
3.4	Պանիր	-"	25	66.8
4	Կարկոֆիլ	գր.	250	167.5
5	Բանջարեղեն, այդ թվում՝	-"	300	87
5.1	կաղամբ	-"	250	75
5.2	սոխ	-"	50	12
6	Միրգ (խնձոր)	-"	200	96
7	Շաքար	-"	50	193.5
8	Չու	հար	0.5	40
9	Մարգարին	գր.	10	72
10	Չեթ	-"	20	176.8
11	Չուկ	-"	30	44.4
12	Թեյ, սոյա և այլ համեմունք	-"	15	
	Ընդամենը			2412.1

* Աղբյուրը. «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ», 2011 թ.

Եթե ՀՀ Առողջապահության նախարարության կազմած պարենային զամբյուղը որոշակիորեն մոտ է այդ չափորոշիչներին, ապա Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ ձևավորված նվազագույն պարենային զամբյուղը համեմատաբար «աղքատ» է և հիմք է աղքատության պարենային գծի սահմանման համար (աղյուսակ 11): ՀՀ ԱՎԾ-ի 2009 թ. մեթոդա-

բանությանը՝ «Աղքատության գիծը սահմանվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեք, որը հասարակությունում ձևավորված (փաստացի դրսևորված) կյանքի նվազագույն մակարդակ ապահովող ապրանքների ու ծառայությունների համադրությունն է: Զամբյուղի կազմն ու կառուցվածքը հիմնված է բնակչության կողմից փաստացի ձևավորված սպառման վրա՝ ստացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում, որի արժեքի տատանումներն արտահայտվում են սպառողական գների փոփոխություններով»²⁹:

Աղյուսակ 11

ՀՀ պարենային զամբյուղը՝ ըստ Համաշխարհային բանկի մեթոդաբանության*

Հ/Հ	Պարենամթերքի անվանումը	Օրական պատման նորման մեկ շնչի հաշվով (գրամ)	Օրական էներգետիկական մեկ շնչի հաշվով (կկալ)	Կառուցվածքը, %
1	Հացամթերք	461.1	1,355.0	60.71
2	Մսամթերք	48.3	87.6	3.92
3	Ձկնամթերք	2.5	2.4	0.11
4	Կաթնամթերք		144.3	6.46
5	Ձու	18.6	27.2	1.23
6	Յուղ և ճարպ	30.5	229.9	10.30
7	Միրգ	113.9	47.7	2.14
8	Բանջարեղեն	203.7	76.0	3.41
9	Կարտոֆիլ	145.6	109.2	4.89
10	Շաքար	24.4	94.4	4.22
11	Ոչ ակոհոլային խմիչքներ	4.2	1.1	0.05
12	Այլ սննդամթերք	35.6	57.2	2.56
13	Ընդամենը		2232	100

* Աղբյուրը: GROW Գները և խոցելիությունը Հայաստանում: Թողարկում թ. 2, հունիս 2011 http://old.edrc.am/WP/Prices_and_Vulnerability/Prices_and_Vulnerability_aug.pdf

Պարենի համաշխարհային համաժողովի գործողությունների պլանի 7-րդ գլխում ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն կոմիսարին կոչ է հղվել. «Ճշգրտել յուրաքանչյուր մարդու պատշաճ պարենով և առանց սովի

²⁹ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013» <http://www.armstat.am/am/?nid=82&id=1503>

ապրելու հիմնարար իրավունքի բովանդակությունը, ինչպես նշված է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրերում, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել այդ իրավունքի ամբողջական և առաջանցիկ զարգացմանը՝ որպես պարենային ապահովվածությանը հասնելու միջոց»³⁰:

Ինչպես 2004 թ., այնպես էլ 2009 թ. պարենային զամբյուղի հաստատագրման համար կիրառվել է Համաշխարհային բանկի մեթոդաբանությունը՝ որը հիմնված «Հիմնական պահանջների արժեք» մոտեցման վրա: Վերջինս նախատեսում է պարենային զամբյուղի արժեքի հաշվարկման որոշակի հաջորդականություն: Առաջին քայլը սննդակարգի նվազագույն անհրաժեշտ կալորիականության սահմանումն է կամ մեկ անձի հաշվով սննդային էներգետիկ արժեքի հաշվարկը: Վերջինիս համար հիմք է ընդունվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության (ՊԳԿ) երաշխավորած սննդանյութերի պահանջի նորմաները: Գործող մեթոդաբանությամբ ընդունված է. «Որոշակի սեռատարիքային խմբի համար մեկ անձին բաժին ընկնող սննդային էներգետիկ արժեքը համարվում է համարժեք, եթե առողջ կյանքի և ֆիզիկական թեթև գործունեության պահպանման կարիքներն ապահովված են: Ամբողջ բնակչության նվազագույն էներգետիկ պահանջը բնակչության տարբեր սեռատարիքային խմբերի նվազագույն էներգետիկ պահանջի կշռված միջինն է»³¹: Հայաստանի համար ՀԲ աջակցությամբ իրականացված հետազոտությունների հիման վրա՝ ՀՀ ԱՎԾ-ն օրական մեկ շնչի հաշվով անհրաժեշտ միջին կալորիականությունը գնահատել է 2232 կկալ:

ՀՀ ԱՎԾ-ի 2013 թ նոյեմբերին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013» տնային տնտեսությունների ուսումնասիրության հիման վրա կազմված զեկույցի տվյալներով՝ 2012-ին աղքատության ցուցանիշը եղել է 32,4 տոկոս՝ նախորդող 2011 թվականի 35 տոկոսի համեմատ: 2012 թ. աղքատության գիծը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2009-ին ձևավորված նվազագույն պարենային զամբյուղը և ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը: Աղքատության վերին ընդհանուր գիծ է գնահատվել մեկ չափահաս անձի հաշվով ամսական 37 հազար դրամի սպառումը, աղքատության ստորին ընդհանուր գիծ է գնահատվել մեկ չափահաս անձի հաշվով 30 հազար դրամի սպառումը, և վերջապես, աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ է գնահատվել 21,7 հազար դրամի սպառումը: Այս չափորոշիչներով՝ ամսական մեկ շնչի հաշվով մինչև 37 հազար դրամ սպառողը համարվում է աղքատ, 30 հազար դրամից պակաս սպառողը՝ շատ

³⁰ Rome Declaration on World Food Security and World Food Summit Plan of Action. 1996b

³¹ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013» էջ 216.
<http://www.armstat.am/am/?nid=82&id=1503>

աղքատ, իսկ 21 հազար դրամից պակաս սպառողը՝ ծայրահեղ աղքատ: Տոկոսային առումով բնակչության մոտ մեկ երրորդը՝ 32,4 տոկոսը 2012-ին եղել է աղքատ, որից 13,5 տոկոսը՝ շատ աղքատ, իսկ 2,8 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ: Համեմատությունը ցույց է տալիս, որ 2008-ի համեմատ աղքատության ընդհանուր մակարդակը ավելացել է 4,8 տոկոսային կետով, շատ աղքատները՝ 0,9 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատները՝ 1,2 տոկոսային կետով: Թե՛ սպառման, թե՛ եկամուտների առումով խորացել է անհավասարության ցուցանիշը շատ աղքատների և շատ հարուստների միջև: Եկամուտների առումով անհավասարությունը բնութագրող Ջինի գործակիցն ավելացել է՝ կազմելով 0,372՝ 2008-ի 0,339-ի համեմատ, սպառման ցուցանիշով Ջինի գործակիցը կազմել է 0,269՝ 2008-ի 0,242-ի համեմատ³²:

Երկրի պարենային անվտանգության գնահատումը պահանջում է այնպիսի մեթոդաբանության կիրառում, որն առավել ամբողջական պատկերացում կտա բնակչության պարենային ապահովման ներկա վիճակի և միտումների վերաբերյալ:

Ինչպես նշվեց, պարենային անվտանգության համակարգը հենվում է հինգ հենասյուների վրա, դրանք են՝ պարենի ֆիզիկական մատչելիությունը, պարենի սոցիալտնտեսական մատչելիությունը, պարենային անկախության մակարդակը, պարենային պահուստները և սննդամթերքի անվտանգությունը: Այս չափանիշերի բացատրությունը, ինչպես նկատեցինք, համառոտակի ներկայացված է համապատասխան իրավական ակտերում, սակայն հայերեն տնտեսագիտական գրականության մեջ դեռևս բացակայում է դրանց գնահատման մեթոդաբանությունը: Քանի որ այս չափանիշերը գործնականում արտահայտվում են հիմնական սննդամթերքների առաջարկի և օգտագործման հաշվեկշիռներում (այսուհետ՝ սննդամթերքի հաշվեկշիռներ), ուրեմն առանձնակի կարևորություն ունի դրանց կառուցման մեթոդաբանության համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին:

Ներկայումս տեղական արտադրության սննդամթերքի ֆիզիկական մատչելիության գնահատումը կատարվում է՝ տվյալ սննդամթերքի տարեկան արտադրության և արտահանման տարբերությունը բաժանելով բնակչության թվաքանակի և մեկ շնչի հաշվով սպառման նորմայի արտադրյալի վրա, որը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝

$$Fd = \frac{\left(\sum_{i=1}^n q_i\right) - \left(\sum_{i=1}^n e_i\right)}{\sum_{i=1}^n (p \times N_i) : 1000} \rightarrow 1 \quad (1)$$

որտեղ՝

- qi - i տեսակի արտադրանքի տարեկան արտադրության ծավալն է (տ),
- ei - i տեսակի արտադրանքի տարեկան արտահանումն է (տ),

³² ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013»:

p - բնակչության քանակն է, հազ. մարդ,
 Ni - i տեսակի արտադրանքի սպառման նորման է՝ 1 շնչի հաշվով (կգ),
 1000-կգ-ն տոննայի վերածված մշտական գործակիցն է,
 Fd - սննդամթերքի ֆիզիկական մատչելիության գործակիցն է:

Դիցուք, հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ-ի հրապարակած «Պարենային ապահովություն և աղքատություն 2013 հունվար-սեպտեմբեր» հաշվետվությունը³³, 2012 թ. տվյալներով հաշվարկենք ցորենի և կարտոֆիլի ֆիզիկական մատչելիության գործակիցը.

$$F_{dցորեն} = \frac{243.1 - 7.6}{2872.4 \times 168.26 : 1000} = 0.49$$

$$F_{dկարտ} = \frac{647.2 - 1.1}{2872.4 \times 91.25 : 1000} = 2.46$$

Ինչպես նկատում ենք, բերված օրինակը վերաբերում է ՀՀ պարենային զամբյուղում ամենացածր և ամենաբարձր ֆիզիկական մատչելիություն ունեցող սննդամթերքներին: Ի դեպ, երկու դեպքում էլ ամբողջ ռեսուրսը բաժանվում է միայն սննդի նպատակով օգտագործվող քանակի վրա, որը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս ֆիզիկական մատչելիության մասին: Մյուս կողմից՝ այս բանաձևի կիրառման պարագայում սննդամթերքի սպառող է դիտարկվում ամբողջ բնակչությունը՝ անկախ սեռահասակային կառուցվածքով պայմանավորված առանձնահատկություններից: Ուստի առավել ճշգրիտ պատկեր ստանալու համար առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևը՝

$$F_d = \frac{\left(\sum_{i=1}^n q_i\right) - \left(\sum_{i=1}^n e_i\right)}{\sum_{i=1}^n (h \times N_i \times K_{hi}) : 1000} \rightarrow 1 \quad (2)$$

որտեղ՝

hj - j սեռահասակային խմբի քանակն է, հազ. մարդ,
 Khi - սեռահասակային խմբից կախված՝ պարենի i տեսակի ուղղիչ գործակիցն է:

Ինչպես նկատում ենք, 2-րդ բանաձևի առանձնահատկությունն այն է, որ, բնակչության սեռահասակային խմբին յուրահատուկ սպառողական նորմաների կիրառումով, ստանում ենք սննդամթերքի ֆիզիկական մատչելիության առավել ճշգրիտ գործակից: Այդուհանդերձ, պարենային անվտանգության գնահատման համար ֆիզիկական մատչելիությունը անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ, ուստի երևույթի առավել ամբողջական գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել նաև հաջորդ՝ տնտեսական մատչելիու-

³³ ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովություն և աղքատություն 2013 հունվար-սեպտեմբեր», էջ 71:

թյան գործակիցը: Վերջինս ցույց է տալիս սննդամթերքի օգտագործումը՝ կախված մեկ շնչի դրամական եկամուտների միջին մակարդակից: Այսինքն՝ առավել կիրառական է տնտեսական մատչելիությունը գնահատել բնակչության եկամուտների մակարդակով, որը բնութագրում է ուսումնասիրվող խմբերի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական վիճակը: Այդ իրողությունից ելնելով՝ որոշ հեղինակներ առաջարկում են օգտագործել «սոցիալ-տնտեսական մատչելիություն» հասկացությունը³⁴: Վերջինիս հիմքում կարելի է դնել երկու հիմնական ցուցանիշ.

ա) տարվա ընթացքում պարենի հիմնական տեսակների վրա բնակչության կատարված փաստացի ծախսերը (Ff), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$F_f = \sum_{i=1}^n \frac{Y_i \times \bar{D} \times H}{: 1000} \times 12$$

որտեղ՝

Y_i - i տեսակի պարենի վրա տնային տնտեսությունների ծախսերի տեսակարար կշիռն է (%),

\bar{D} - բնակչության միջին ամսական եկամուտն է (դրամ),

H - բնակչության թիվն է,

12 -տարվա ամիսների թիվն է:

բ) Պարենի հիմնական տեսակների վրա բնակչության նորմատիվային ծախսերը (R_N)՝

$$R_N = \sum_{i=1}^n \left[C_i \times \sum_{j=1}^n (N_j \times K_{hi} \times H_j) \right]$$

որտեղ՝

c_i - i տեսակի պարենի գինն է (դրամ):

Արդյունքում, 1-ին և 2-րդ ցուցանիշների հարաբերությամբ կստանանք մի բանաձև, որի օգնությամբ որոշվում է հիմնական սննդամթերքների սոցիալ-տնտեսական մատչելիությունը (W).

$$W = F_f / R_N \rightarrow 1$$

Պարենային անվտանգության գնահատման հաջորդ փուլը պարենային անկախության ցուցանիշի (I) հաշվարկն է: Այդ նպատակով ելակետ ընդունենք օրացուցային տարվա կտրվածքով հետևյալ մեծությունները.

- ներկրվող սննդամթերքի արժեքը, մլն դրամ (It),
- իրացված սննդամթերքի արժեքը, մլն դրամ (Ft),

³⁴ Методический инструментарий оценки продовольственного обеспечения населения региона, Агро XXI, 2013, № 7-9, с. 6-8

– արտահանված սննդամթերքի արժեքը, մլն դրամ (E_t):

Նշված մեծությունների միջոցով պարենային անկախության ցուցանիշը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$Z = \frac{I_t}{F_t - E_t} \times 100$$


Այսպիսով, ընտրեցինք 3 հիմնական չափանիշ, որոնց օգնությամբ կարելի է որոշել երկրի պարենային անվտանգության շեմային մակարդակը և ռիսկայնության գոտիները (աղյուսակ 3): Երկրի պարենային անվտանգության գնահատման հաջորդ քայլը ռազմավարական նշանակության սննդամթերքների առաջարկի և օգտագործման հաշվեկշիռների վերլուծությունն է:

Աղյուսակ 12

Պարենային անվտանգության հիմնական բնութագրիչների տատանման տիրույթը և ռիսկի գնահատումը

Ռիսկի գործոն	Հայրենական արտադրության պարենի ֆիզիկական մակարդակի, Fd գործակիցը	Պարենի հիմնական տեսակների սոցիալ-տնտեսական մարչելիության, W գործակիցը	Պարենային անկախության մակարդակի, Z գործակիցը, %
Ոչ ռիսկային գործոն	0,9-1 և ավելի	0,9-1 և ավելի	1-10
Թույլարդեյի ռիսկի գործոն	0,8-0,89	0,8-0,89	11-20
Կրիտիկական (ծայրահեղ) ռիսկի գործոն	0,51-0,79	0,51-0,79	21-49
Աղերային ռիսկ	0,5-ից փոքր	0,5-ից փոքր	50 և ավելի

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունի, գտնվում է աշխարհաքաղաքական այնպիսի տարածքում, որտեղ ազգամիջյան հակամարտությունների հետևանքով արտաքին հաղորդակցության ուղիների անվտանգ և անխափան օգտագործումը երաշխավորված չէ: Բացի դրանից, հաճախակի են ագրարային ոլորտի վրա տարերային աղետների բացասական ներգործությունը և, դրա հետևանքով, պարենային արտադրանքների հայրենական արտադրության ծավալների զգալի տատանումները: Հետևաբար, վերոհիշյալ չափանիշներին պետք է ավելացնել նաև պարենային անվտանգության պահուստները, որոնց ձևավորման և օգտագործման կառավարման սխեման ներկայացվում է թիվ 1 գծապատկերում:



Գծապատկեր 1

Պարենային անվտանգության համակարգում պահուստների ձևավորման և օգտագործման կառավարման սխեման

Միջազգային առևտրի ազատականացման և երկրների միջև ինտեգրացման կապերի խորացման պայմաններում միանգամայն տրամաբանական է, որ պարենամթերքի պակասը կարող է լրացվել ներմուծման շնորհիվ: Այսինքն՝ համաշխարհային տնտեսության միջազգայնացման արդի փուլում, եթե բացառենք տվյալ երկրի ներքին և արտաքին սպառնալիքները, տնտեսապես նպատակահարմար է որոշակի պարենամթերքներ ներմուծել այն երկրներից, որտեղ դրանց արտադրության ավելի նպաստավոր ու քիչ ծախսատար պայմաններ կան:

ՀՀ-ի պարագայում այս մոտեցումը կարող էր արդարացվել, եթե պարենի միջազգային շուկայում առաջարկի և պահանջարկի քանակական շեղումն ու գների թռիչքը մեծ չլիներ, եթե աշխարհը գերծ լիներ տարածաշրջանային հակամարտություններից և բազմաբնույթ այլ ռիսկերից: Մինչդեռ Հայաստանին պատուհասած արտաքին և ներքին սպառնալիքները (շրջափակում, պատերազմի վտանգ, բնական աղետներ, համաշխարհային շուկայի կոնյուկտուրայի կտրուկ փոփոխություններ և այլն) հարկադրում են զարգացնել տեղական արտադրությունը և պետական կարգավորման գործիքներով կառավարել երկրի պարենային անվտանգությունը:

Պարենային անկախության հիմնական չափանիշը պարենամթերքների պահանջարկի առնվազն 80%-ը սեփական արտադրության շնորհիվ բավարարելն է: Այս չափանիշը ներառված է «ԱՊՀ մասնակից երկրների պարենային անվտանգության բարձրացման հայեցակարգի» նախագծում³⁵: Միջազգային առևտրի ազատականացման և երկրների միջև ինտեգրացիոն կապերի խորացման պայմաններում ստորին նշաձողի նման մակարդակի սահմանումը միշտ չէ որ արդարացված է: Այսինքն, եթե հնարավոր է տվյալ արտադրանքի արտադրությունը տեղում, ապա զուտ տնտեսական արդյունավետության տեսանկյունից արտադրության կամ ներկրման նախապատվությունը որոշվում է միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերով և բազմապատկիչի էֆեկտով: Պարենային ապրանքների առումով զուտ տնտեսական հաշվարկը բավարար չէ, քանի որ արտաքին և ներքին սպառնալիքների առկայությունը հարկադրում են պետական աջակցության գործիքներով խթանել տեղական արտադրությունը և բարձրացնել պարենային անկախության մակարդակը:

Եթե նախկինում երկրի պարենային ապահովման խնդիրն առավելապես քննարկվում էր գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության շրջանակներում, ապա ներկայումս պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը պայմանավորված է ամբողջությամբ վերցրած երկրի սոցիալ-

³⁵ Ст'у Концепция повышения продовольственной безопасности государств-участников СНГ (проект).

տնտեսական զարգացմամբ: Այս առումով Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության գծով Նորեյյան մրցանակի դափնեկիր (1998 թ.) Մեն Ամարաթիան իրավացիորեն նշում է. «Սովը, թերսնումը և սովամահությունը ոչ միայն պարենամթերքների արտադրության և գյուղատնտեսության, այլ ամբողջ տնտեսության գործունեության հետևանք են»³⁶:

Նշված գործոնները պահանջում են պարբերաբար վերլուծել և գնահատել երկրի տնտեսության, այդ թվում՝ ագրարային հատվածի, արտաքին և ներքին սպառնալիքները և իրականացնել այդ սպառնալիքների կանխարգելմանը կամ չեզոքացմանն ուղղված տնտեսական քաղաքականություն: Այսինքն՝ երկրի պարենային անվտանգության ապահովման հիմքը գյուղատնտեսության և ագրովերամշակման ճյուղերն են, որոնց ռիսկայնությունը տնտեսության մյուս ոլորտների համեմատությամբ բարձր է, ուստի անգամ ազատական շուկայական հարաբերությունների պայմաններում ագրարային ոլորտի պետական կարգավորումն անխուսափելի է:

Աղյուսակ 13

Երկրի պարենային անվտանգության (ԵՊԱ) մակարդակի գնահատման համար ընտրված չափորոշիչների հիմնական ցուցանիշները 2009–2011 թթ.

ԵՊԱ-չափորոշիչները	ԵՊԱ-ի չափորոշիչների ցուցանիշները	Չափորոշիչների արժեքները			ԵՊԱ մակարդակը
		2009	2010	2011	2009-2011 թթ.
Ֆիզիկական մարզեկություն	Ինքնաբավության գործակից	0.509	0.500	0.528	Պարենային անվտանգության ցածր մակարդակ
	Պարենի ներմուծման գործակից	0.280	0.283	0.253	ցածր մակարդակ
Տարեսական մարզեկություն	Աղքատության գործակից	0.341	0.358	0.350	Պարենային անվտանգության ցածր մակարդակ
	Ջինի գործակից ըստ եկամուտների անհավասարության	0.355	0.362	0.371	
	Ջինի գործակից ըստ սպառման անհավասարության	0.257	0.265	0.267	
Մանրամթերքի բավարարություն	Սպառված սննդամթերքը (մեկ շնչի հաշվով) էներգետիկ արժեքով գնահատված, կկալ/օր*	2357.8	1904.1	2340.9	Պարենային անվտանգության թույլատրելի մակարդակ
	ՀՀ առողջապահության նախարարության առաջարկած էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	2412.1	2412.1	2412.1	
	Կալորիականության գործակից	0.977	0.789	0.971	

*) Հաշվի է առնված ՀՀ առողջապահության նախարարության առաջարկած պարենային զանրյուղի կառուցվածքը:

³⁶ <http://vasilieva.narod.ru/> Экономическая политика: стратегия и тактика, номер 2/99, Экономическая взаимозависимость и мировая продовольственная проблема.

Ներկայումս գնալով կարևորվում է գյուղատնտեսության **բազմազոր-
ծառայության** հատկանիշը, որն ավելի է արդարացնում այս ճյուղի պետա-
կան կարգավորման և հովանավորչության քաղաքականությունը: «Բազմա-
զործառայության գյուղատնտեսության» գաղափարը նոր չէ: Դարեր շարու-
նակ ընդունելի է եղել այն տեսակետը, որ գյուղատնտեսությունը երկրի
տնտեսության սիրտն է, որ, բացի պարենի և գյուղատնտեսական հումքի ար-
տադրությունից, այս ոլորտն էական նշանակություն ունի ազգային նկա-
րագրի, սովորույթների, ավանդույթների, շրջակա միջավայրի և բնական
լանդշաֆտների պահպանության, գյուղական բնակավայրերի զարգացման,
ժողովրդագրական գործընթացների կարգավորման, ագրո և էկոգրոսա-
շրջության համար: Գյուղատնտեսության վերոհիշյալ գործառայությունն մենք
ավելացնում ենք տնտեսական ցնցումների մեղմացուցիչ դերակատարումը,
որն այս ոլորտի դեռևս լիովին չգնահատված գործառայությունից մեկն է³⁷:

Վերջին տարիներին ՀՀ-ում ձևավորվել են պարենային անվտան-
գության մակարդակի բարձրացման որոշակի նախադրյալներ, սակայն
բնակչության կայուն և լիարժեք պարենապահովման հարցում (այդ թվում՝
արտակարգ իրավիճակներում) դեռևս առկա են որոշակի հիմնախնդիրներ:
Կատարված վերլուծությունը և իրականացված հարցումները ցույց են տա-
լիս, որ առավել կարևոր են հետևյալ հիմնախնդիրները.

- 1) Թեև պարենային շուկայում պարենի ֆիզիկական մատչելիությունը
խնդրահարույց չէ, բայց առանձին սննդամթերքների (շաքար, յուղ,
միս և այլն) տեսականու բազմազանությունը խիստ սահմանափակ է,
ինչը սպառողներին գնային առումով ընտրության հնարավորություն
չի ընձեռում:
- 2) Առավել կարևոր մի շարք սննդամթերքների (պարենային ցորեն,
տարեկան, աշորա, հատկաբնորոշներ, յուղեր, շաքար, միս և այլն)
ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է, որը, կախված արտա-
քին գործոններից, սպառնում է շուկայի կայունությանը:
- 3) Ի տարբերություն ֆիզիկական մատչելիության՝ պարենի տնտեսա-
կան մատչելիությունը դեռևս ցածր է:
- 4) Մսնդամթերքի անվտանգության և որակի կառավարման համակար-
գը դեռևս կայացած չէ, ունի լուրջ կոռուպցիոն ռիսկեր, չի համապա-
տասխանում «Կողեքս Ալիմենտարիուսի» պահանջներին, միջազգա-
յին ստանդարտներին և չափանիշներին: Ներկրվող սննդամթերքի
անվտանգությունը հիմնավորապես չի վերահսկվում: Դա վերաբե-
րում է առավելապես օգտագործման ժամկետի պահպանությանը,

³⁷ Տե՛ս Սամվել Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման
հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում- Եր. «Վահան», էջ 132:

ԳՄՕ-ի առկայությանը, կեղծված սննդատեսակի ներմուծմանը և այլ պարամետրերի:

- 5) Հարավային Կովկասում առկա հակամարտությունները և ՀՀ արտաքին կապուղիների շրջափակվածությունը, ինչպես նաև անբարենպաստ կլիմայական գործոնների հետևանքով բերքի մշտական կորուստը հարուցում են պարենի համաչափ և երաշխավորված մատակարարման ռիսկեր: Նման իրավիճակում կարևորվում է ռազմավարական նշանակության պարենի պահուստների համակարգը, որը դեռևս ձևավորված չէ:

Հիմնախնդիրների թվարկումը կարելի է շարունակել, բայց միանգամայն ակնհայտ է, որ դրանց լուծման ամենահիմնավոր ուղին երկրի պարենային անկախությունն է: Մենք փորձել ենք կանխատեսել մի շարք հիմնական պարենային արտադրանքների արտադրության ծավալները առաջիկա մեկ տասնամյակի կտրվածքով:

Այսպես, պարենային ցորենի տեղական արտադրության միջին ցուցանիշը

2002–2012 թվականներին կազմել է 229.7 հազ. տոննա, որը բավարարում է սննդի, անասնակերի և սերմացուի նպատակով փաստացի օգտագործվող քանակության պահանջարկի ընդամենը 32.7%-ը, իսկ 2011 թվականին՝ 36.5%-ը: Այս արտադրանքի արտադրությունն ավելացնելու համար մեծ է թե՛ ինտենսիվ, և թե՛ էքստենսիվ զարգացման հնարավորությունը:

Հաշվի առնելով պարենային ցորենով երկրի ինքնաբավության մակարդակի բարձրացման ռազմավարական նշանակությունը, օրվա հրամայականն է այս ոլորտի ինտենսիվացման բազմակողմանի պետական աջակցությունը: Նախ՝ անհրաժեշտ է բավարար պայմաններ ստեղծել վարելահողերի լիարժեք և արդյունավետ օգտագործման համար: Բավական է նշել, որ Հայաստանի նման սակավահող երկրում ընդամենը 448.4 հազ. հա վարելահողերից 144.2 հազ. հա նպատակային չի օգտագործվում (2012 թ.):

Ամենաիրատեսական կանխատեսումներով՝ ցորենի բերքատվությունը անգամ 2013 թ. փաստացի մակարդակը չգերազանցելու և ցանքատարածությունը 20 հազ. հեկտարով ավելացնելու դեպքում՝ համախառն բերքը կհասնի 372 հազ. տոննայի: Այդ դեպքում սննդի և սերմի համար օգտագործվող ցորենի (466 հազ. տ) ինքնաբավության մակարդակը կկազմի մոտ 80 տոկոս, որը համապատասխանում է պարենային անվտանգության շեմային ցուցանիշին (աղյուսակ 14):

Կարտոֆիլի գծով հանրապետությունն ունի բարձր ինքնաբավության մակարդակ: Կարտոֆիլի ինքնաբավության մակարդակը 2006–2010 թվականների միջին տվյալներով կազմել է 99.8%, ներմուծվել է հիմնականում սերմացու կարտոֆիլ (տնկանյութ): Կարտոֆիլի օգտագործման կառուցված-

քում մեծ տեսակարար կշիռ են կազմում կորուստները և անասնակերը: Կարտոֆիլի արտադրության ծավալների կայունացումը կատարվելու է բերքատվության բարձրացման շնորհիվ, քանի որ վերջին տարիներին հանրապետությունում ձևավորվել է կարտոֆիլի սերմնաբուծության բավական արդյունավետ համակարգ, հոլանդական և գերմանական սորտերի տեղայնացման պայմաններում ապահովվում է հեկտարից 28–32 տոննա բերքատվությամբ սորտերի սերմացուի արտադրություն, ուրեմն ՀՀ-ն լիարժեք հնարավորություն ունի տարածաշրջանում դառնալու կարտոֆիլի տնկանյութ արտահանող երկիր:

Աղյուսակ 14

ՀՀ-ում ցորենի ցանքատարածության, միջին բերքատվության և համախառն բերքի կանխատեսումը մինչև 2021 թվականը³⁸

	2002	2005	2008	2010	2011	2012	2013	2015*	2020*	2025*
Ցանքատարածությունները (հազ. հա)	120.1	132.0	93.1	87.6	77.8	93.7	99,6	104	117	120
Բերքատվությունը (ց/հա)	23.9	20.3	24.3	21.2	28.8	26.0	31.3	27.0	29.0	31.0
Համախառն բերքը (հազ. տոննա)	284.7	258.4	225.7	183.5	224.1	243.1	311.5	280.8	339.3	372.0

*Կանխատեսում:

Բանջարաբուստանային մշակաբույսերի պահանջարկն ամբողջովին բավարարվում է տեղական արտադրությամբ: Վերամշակող կազմակերպությունների հզորությունների մեծացմանը զուգընթաց՝ իրական նախադրյալներ և հնարավորություններ կան հումքի արտադրության ծավալների ավելացման համար:

Պտղի և հատապտղի համար հանրապետությունում նույնպես ապահովվում է ինքնաբավության բարձր մակարդակ: Վերամշակող կազմակերպությունների հզորությունների մեծացմանը զուգընթաց այստեղ նույնպես իրական նախադրյալներ և հնարավորություններ կան հումքի արտադրության ծավալների ավելացման համար: Հանրապետությունում մեծ ներուժ կա

³⁸ ՀՀ ԱՎԾ-ի «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը» համապատասխան տարիների տարեկան հաշվետվություն:

նախալեռնային և լեռնային տարածքներում պտղաբուծության զարգացման համար: Մասնավորապես, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի ծովի մակերևույթից մինչև 1800 մ բարձրության հարթ տեղանքը և արևահայաց լանջերը միանգամայն պիտանի են հնդավոր (խնձորենի և տանձենի), ինչպես նաև որոշ կորիզավոր (բալենի, կեռասենի, շլորենի, անգամ ծիրանենի) պտղատեսակների մշակության համար: Ներկայումս նշված տարածքներում վարելահողը կամ նպատակային չի օգտագործվում, կամ մինչև 80–85%-ը հատկացնում է հացահատիկային մշակաբույսերին, որի մեկ հեկտարից միջին հաշվով ստացվում է 90–120 հազ. դրամ զուտ եկամուտ: Համեմատության համար նշենք, որ պտղատու այգու 10 տ/հա բերքատվության պայմաններում մեկ հեկտարի զուտ եկամուտը կգերազանցի 1 մլն դրամը: Մեր կարծիքով, վերոհիշյալ տարածքներում վարելահողերի մինչև 10%-ը կարող է դրվել այգիների տակ, որը կնպաստի գյուղատնտեսության բազմազանեցմանը և հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Հատիկարնդեղենային մշակաբույսերի գծով հանրապետությունն ունի միջին ինքնաբավության մակարդակ: Հատիկարնդեղենային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակը 2006–2010 թվականների միջին տվյալներով կազմել է ընդամենը 53.8%, իսկ 2011 թվականին՝ 47.3%: Հայաստանը համարվում է բազմաթիվ մշակովի բույսերի ծագման հիմնական կենտրոններից մեկը, և մշակվող հացաբույսերի, հատիկարնդեղենների, պտղատու բուսատեսակների, բանջարաբոստանայինների, յուղատուների, պտղահատապտղային բույսերի գենետիկական ռեսուրսները արժեքավոր ելակետային նյութեր են մշակաբույսերի սելեկցիայում և նպաստում են նորագույն բնակլիմայական պայմաններին հարմարված սորտերի ստեղծմանը և պարենային ապահովվածությանը:

Կաթի և կաթնամթերքի ուղղությամբ (բացառությամբ կենդանական յուղի), ըստ 2011 թ. ազգային պարենային հաշվեկշռի, հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության բարձր մակարդակ (82.9%՝ ըստ 2011 թվականի ազգային պարենային հաշվեկշռի): Ինքնաբավության այսպիսի բարձր մակարդակ ապահովվում է բնակչության ցածր գնողունակության պայմաններում: Եթե նկատի ունենանք, որ 2812 կկալ սպառման նորմայի դեպքում կաթի և կաթնամթերքի տարեկան սպառման նորման մեկ շնչի հաշվով կազմում է 395 կգ³⁹, ապա մեկ շնչի հաշվով 187.9 կգ կաթ արտադրելու դեպքում ինքնաբավության մակարդակը դեռևս չի կարող բարձր լինել: Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների, հոտի կա-

³⁹ Գրիգորյան Կ. Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում.: -Եր.: ՀՊԱՀ, 2011, էջ 159:

նուցվածքի, կերակրման ու պահվածքի բարելավման, ինչպես նաև անասնագլխաքանակի ավելացման արդյունքում անհրաժեշտ նախադրյալներ կան կաթի ծավալների ավելացման համար:

Տավարի մսի առումով, ըստ ազգային պարենային հաշվեկշռի, 2011 թվականին հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության միջինից բարձր մակարդակ (78.4%): Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների, հոտի կառուցվածքի, արոտագիրացման, կերակրման ու պահվածքի բարելավման, ինչպես նաև անասնագլխաքանակի ավելացման արդյունքում այստեղ նույնպես իրական նախադրյալներ և հնարավորություններ կան տավարի մսի ծավալների ավելացման համար:

Խոզի մսի առումով հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության ցածր մակարդակ (43.3%): Տոհմային հատկանիշների, հոտի կառուցվածքի, ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման, կերակրման ու պահվածքի բարելավման, ինչպես նաև հիբրիդացման, անասնագլխաքանակի ավելացման արդյունքում այստեղ նույնպես կան իրական նախադրյալներ և հնարավորություններ մսի ծավալների ավելացման համար:

Մսնր եղջերավոր կենդանիների մսի ինքնաբավությունը, ըստ ազգային պարենային հաշվեկշռի, հանրապետությունում ապահովվում է բարձր մակարդակ (100%): Ոչխարների ինտենսիվ արոտաբուծումը (գիրացումը) կենդանիների մսի որակի բարելավման և իրացման առավել արդյունավետ եղանակ է: Մինևույն ժամանակ տարածաշրջանի պետությունների շուկայի պահանջարկը ՀՀ-ում արտադրվող ոչխարի մսի նկատմամբ, սկսած 2008 թվականից խիստ մեծացել է (Իրան, Սիրիա, Արաբական Էմիրություններ), վերջին 3 տարվա ընթացքում արտահանվել է շուրջ 235 հազ. գլուխ ոչխար: Ըստ 2013 թվականի հունվարի 1-ի տվյալների՝ ոչխարների և այծերի գլխաքանակը կազմում է 674.7 հազ. գլուխ: Ներկայումս հանրապետությունում նկատվում է ոչխարաբուծական մթերքների՝ հատկապես գառան մսի և կաթի նկատմամբ շուկայի հարաճուն պահանջարկ: Դա բավարարելու նպատակով գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությամբ նախատեսվում է համալիր միջոցառումների իրականացման արդյունքում ոչխարների գլխաքանակը 2020 թվականին հասցնել 1550 հազարի:

Թռչնի մսի առումով, ըստ ազգային պարենային հաշվեկշռի, 2011 թվականին հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության ցածր մակարդակ (12.2%): Թռչունների գլխաքանակի ավելացման և խնամքի ու պահվածքի բարելավման արդյունքում հնարավորություններ կան հավի մսի ծավալների ավելացման համար: Հավի մսի արտադրության միջին ծավալը 2006–2010 թվականներին սպանդային քաշով կազմել է 5.6 հազ. տոննա:

Չվի պարագայում, ըստ ազգային պարենային հաշվեկշռի, հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության բարձր մակարդակ (լիարժեք ապահովվածություն): Այն իրականացվում է ձու արտադրող արդյունաբերական թռչնաբուծության առաջավոր տեխնոլոգիայով, որը խարսխված է մասնագիտացված գծերի տրամախաչումից ստացված հիբրիդ թռչունների արդյունավետ օգտագործման վրա: Թռչունների (բրոյլեր ճտերի արտադրության տեխնոլոգիայի ընդլայնման) կերակրման ու պահվածքի բարելավման, ինչպես նաև թռչունների գլխաքանակի ավելացման արդյունքում այստեղ նույնպես իրական նախադրյալներ և հնարավորություններ կան ձվի արտադրության ծավալների ավելացման համար: Չվի արտադրության միջին ծավալը 2006–2010 թվականներին կազմել է 579.5 մլն հատ, իսկ 2011 թվականին՝ 633.6 մլն հատ (34.9 հազ. տոննա): Ներմուծման ծավալները 2006–2010 թվականներին տարեկան միջին տվյալներով կազմել է 0.4 հազ. տոննա, իսկ 2011 թվականին՝ 2.2 հազ. տոննա: Մինչև 2011 թ. հիմնականում ներմուծվում էր ինկուբացիոն ձու, սակայն վերջին տարիներին նկատելիորեն ավելանում է պարենային ձվի ներմուծումը:

Բուսական յուղի համար հանրապետությունում ձևավորվել է ինքնաբավության խիստ ցածր մակարդակ (2011 թ.՝ 2.8%): Սակայն հանրապետությունում վերականգնվում է յուղատու մշակաբույսերի հումքի վերամշակման համակարգը, որը դեռևս գործում է ներմուծվող հումքով: Հանրապետությունում որոշակի հնարավորություններ կան տեղական հումքի արտադրության ընդլայնման համար: Մասնավորապես, պետական աջակցության գործուն մեխանիզմների կիրառման պարագայում հնարավոր է ավելացնել եգիպտացորենի հատիկի և կտավատի տարածությունները: Հեռանկարային է սոյայի մշակությունը, որը Արարատյան դաշտավայրում կարելի է իրականացնել նաև խոզանացան եղանակով:

Շաքարի արտադրությունը 2011 թվականին կազմել է 72.2 հազար տոննա, ինքնավաբության մակարդակը ցածր է՝ 43.9%: Խնդրի լուծման համար, ըստ մասնագիտական հաշվարկների, պահանջվում է շուրջ 15 հազ. հա տարածություն, 1 հա-ից 400 ց բերքատվության դեպքում կարող է արտադրվել 500 հազ. տոննա շաքարի ճակնդեղ, կամ 50–55 հազ. տոննա շաքար, չհաշված կողմնակի արտադրանքները՝ մզուկ (ժում) և կերամատ, որոնք մեծ նշանակություն ունեն անասնաբուծության համար:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորման սլաքն ուղղորդվում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, որքան տնտեսական աճի խթանմանը: Մինչդեռ, գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության ցածր եկամտաբերության, իսկ տարածաշրջանային կտրվածքով՝ վնասաբերության պայմաններում, տնտեսական աճը չի ապահովում երկարաժամկետ հատվածում ոլորտի զարգացման, պարենային անվտանգության և բնակչության բարեկեցության բարձր ցուցանիշներ: **Այս տեսանկյունից պետք է նշել, որ եթե տնտեսական աճն ապահովում է արտադրության ծավալի կարճաժամկետ ավելացում և բնութագրում է տնտեսության քանակական կողմը, ապա տնտեսական զարգացումն ապահովում է երկարատև կայուն արդյունավետություն և բնակչության կենսամակարդակի բարձրացում՝ բնութագրելով տնտեսության որակական կողմը:**

ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման քաղաքականությունը դեռևս էական պայմաններ չի ստեղծում որակական զարգացման նախադրյալների ձևավորման, ոլորտի մրցունակության բարձրացման համար: Տպավորությունն այնպիսին է, որ երկրի ագրարային քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճն է՝ անկախ նրանից, թե ինչ գնով ու միջոցներով է ապահովվում: ՀՀ պաշտոնական վիճակագրությունը սույլ ընտրանքային հարցումների արդյունքներով և բավական մեծ պարբերությամբ, ներկայացնում է բնակչության տնտեսությունների ծախսերն ու եկամուտները, իսկ գյուղատնտեսական գործունեության արտադրական ծախսերի և եկամուտների վիճակագրությունը ընդհանրապես չի վարում: Մա, իհարկե, ՀՀ ԱՎԾ-ի թերացումը չէ. վերջինս պատշաճ իրականացնում է սահմանված կարգով հաստատվող իր գործունեության ծրագիրը, որտեղ, սակայն, նման առաջադրանք նախատեսված չէ: Խնդրի կարգավորման համար շահագրգիռ պետք է լինեն ՀՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունները, որոնք դեռևս այս գործառույթն իրականացնելու շահագրգռվածություն, ինստիտուցիոնալ և մարդկային կարողություններ չունեն: Ստացվում է, որ կառավարող մարմինն հասանելի չեն կառավարման օբյեկտի գործունեության արդյունավետության ցուցանիշները, ուստի և առաջնորդվում է միայն տնտեսական աճ ապահովելու մղումով: Վերջին 3–4

տարիներին քանիցս հայտարարվել է, թե գյուղատնտեսությունը հռչակվել է ՀՀ տնտեսության գերակա ոլորտ: Մենք բազմիցս նշել և հիմնավորել ենք, որ առնվազն մոտ հեռանկարում հանրապետության տնտեսության զարգացման գերակայություն կարող է լինել ոչ թե սոսկ գյուղատնտեսությունը, այլ ագրարային հատվածը՝ իր համակարգաստեղծ ենթակառուցվածքներով: Իհարկե, այստեղ առաջատարի կամ շոգեքարշի դերը պատկանում է ագրովերամշակման և ագրոմարքեթինգի ոլորտներին, որոնք կարող են ապահովել գյուղատնտեսության նորամուծական զարգացում: Քավ լիցի, թող զարգանան բարձր տեխնոլոգիաները և նորաստեղծական տնտեսության մյուս ճյուղերը, թող կարևորվի ինտելեկտուալ ներուժը. դա ժամանակակից աշխարհին համաքայլ ընթանալու պարտադիր պահանջ է: Բայց իրատեսորեն գնահատելով մեր հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը և ռեսուրսային ներուժը՝ կարող ենք պնդել, որ տնտեսության ոչ մի հատվածի հեռանկարն այնքան տեսանելի չէ, որքան ագրարայինը: Ավելին, այլևս իրատեսական չէ արդյունաբերության այն ճյուղերի զարգացումը, որոնք բնորոշ էին Խորհրդային Հայաստանին: Լեռնահանքային արդյունաբերության հումքային բազան անսպառ չէ և, ինչպես տնտեսական, այնպես էլ բնապահպանական առումով մեծ ծավալներ չի ընդգրկելու: Զբոսաշրջությունը և ծառայությունների ոլորտը զարգացման խիստ առանձնահատուկ նախապայմաններ են ենթադրում, որոնք ապահովվել կարող են միայն աստիճանաբար: Բնակչության զբաղվածության և արժանավայել ապրելակերպի հրամայականը, իրողություն չդառնալով, անդառնալի կորուստներ է պատճառում: Թեկուզ արդեն սովորական է հնչում, բայց արտագաղթը և հիասթափվածությունը հանրապետության լուրջ սպառնալիքներն են: Պետք է օր առաջ դրանք հաղթահարել՝ ճիշտ ընտրելով զարգացման ուղին: Զուտ զգացական առումով, միգուցե լավ չի ընկալվում «ագրարային երկիր» բառակապակցությունը, նույնացվում է թույլ զարգացվածության հետ: Բայց իրողությունն այն է, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներքին շուկայում ամենակայուն պահանջարկ ունեցող ապրանքը պարենն է, որի առաջարկի առաձգականությունը փոքր է, գնաճինը՝ անխուսափելի: Ուստի, այլ հարաբերական առավելությունների բացակայության պայմաններում, զարգացած ագրարային տնտեսությունն առաջընթացի հիմք է:

Հետհայաց վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներն անցել են ագրարային փուլը և վերջինս հենք դարձրել գերակա այլ ոլորտների ձևավորման և զարգացման համար: Ներկայումս հանրապետության գյուղատնտեսությունը, այս ճյուղի արտադրատեխնիկական սպասարկման ենթակառուցվածքները, ինչպես նաև գյուղատնտեսական հումք վերամշակող և արտադրանքի ներքին իրացումն ու արտահանումն ապահովող հատվածները զարգացման անհրաժեշտություն ունեն:

Դա, ներդրումային պայմանների բարելավման և խելամիտ ագրարային քաղաքականության դեպքում, կարևոր ազդակ և **համակարգաստեղծ օղակ** է բազմաթիվ ապրանքաշրջանների և կլաստերների զարգացման համար: Մինչդեռ, սույն կարգավիճակային բնույթի՝ «գյուղատնտեսությունը հոչակվել է ՀՀ տնտեսության գերակա ոլորտ» արտահայտությունը, ցավոք, պարզապես արժեզրկում է այդ գաղափարը:

Աղյուսակ 15

ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ոռոգման ոլորտների ֆինանսավորումը (2008–2014 թթ.)*

Տարիները	Բյուջեն	Ընդամենը, հազ. դրամ	այդ թվում՝		
			Գյուղատնտեսությանը	անտառ	ոռոգում
2008	Պլանային	33,051 000	11,545,732.5	1,918,111.0	19,586,919.9
	Ճշտված	32,735,605.3	11,311,174.4	1,837,511.0	19,586,919.9
	Փաստացի	24,482,526.6	10,951,888.4	1,789,115.6	11,741,522.6
2009	Պլանային	35,934,058.1	11,698,215.7	1,831,493.0	22,404,349.4
	Ճշտված	43,805,537.7	16,411,599.0	1,729,308.1	25,664,630.6
	Փաստացի	36,112,207.4	13,671,217.5	1,488,186.2	20,952,803.7
2010	Պլանային		7,809,255.2	916,034.1	
	Ճշտված		7,116,097.2	909,636.6	
	Փաստացի	40,036,601.1	7,171,655.4	853,305.1	32,011,640.7
2011	Պլանային	36289892.5	6,438,256.8	789,804.9	29,061,830.8
	Ճշտված	45501685.3	7,464,391.9	799,758.5	37,237,534.9
	Փաստացի	42382063.1	5,808,389.1	822,793.4	35,750,880.6
2012	Պլանային	25,200,163.5	11,485,556.1	762,670.0	12,951,937.4
	Ճշտված	25,971,352.4	12,169,252.1	762,670.0	13,039,430.3
	Փաստացի	21,896,922.9	9,105,867.7	762,670.0	12,028,385.2

* Աղբյուրը. ՀՀ ֆինանսների նախարարություն <http://www.minfin.am/index.php?cat=9&lang=1>

Որպեսզի մեր այս միտքը մերկապարանոց չհամարվի, վերլուծենք վերջին մի քանի տարիներին գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական աղբյուրից՝ ՀՀ պետական բյուջեից, ոլորտի ֆինանսական հատկացումները (աղյուսակ 15): Ինչպես նկատում ենք, 2008–2009 թթ. հետո


գյուղատնտեսությանը փաստացի հատկացվող բյուջետային միջոցները պակասել են: Այսպես, 2009 թ. համեմատությանը գյուղատնտեսության բյուջետային հատկացումը 2010 թ.-ին կրճատվել է 47,6, 2011-ին՝ 57,6 և 2012-ին՝ 33,4%-ով: Սա այն դեպքում, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով նկատելիորեն բարձրացան գյուղատնտեսական արտադրության միջոցների գները, իսկ ագրովերամշակող կազմակերպությունների արտադրանքի արտահանման ծավալների կրճատումը բացասաբար ազդեց գյուղատնտեսական հումքի իրացման վրա: Իհարկե, մշակվող հողատարածության հաշվով, շուկայականից ցածր գնով, թեկուզ սահմանափակ քանակով՝ դիզելային վառելիքի, պարարտանյութի, սերմերի տրամադրումը որոշակիորեն կրճատում է արտադրողի ծախսերը: Սակայն գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործուն համակարգի բացակայությունը և արտադրողին վճարվող ցածր գինը բացասաբար են անդրադառնում եկամտաբերության վրա՝ չեզոքացնելով նշված աջակցության շահեկանությունը: Այստեղից՝ հետևություն, որ անհրաժեշտ է վերանայել ագրարային ոլորտի պետական կարգավորման քաղաքականությունը և կիրառել պետական աջակցության այնպիսի համալիր միջոցառումներ, կանոնակարգեր ու գործիքներ, որոնք նպաստեն ոչ միայն ոլորտի տնտեսական աճին, այլև նրա գլխավոր խնդրի՝ երկրի պարենային անվտանգության ապահովմանը և երկարաժամկետ հատվածում կայուն զարգացմանը: Նորից շեշտադրենք, որ թեպետ գյուղատնտեսության վրա դեռևս մեծ է բնական գործոնների ազդեցությունը, սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, այդ ազդեցության մեղմացման բանալին դիսկերի կառավարման երկարաժամկետ նպատակային քաղաքականությունն է: Ներկայում ՀՀ ագրարային հատվածի պետական աջակցության միջոցառումների գերակշիռ մասը կրում է կարճաժամկետ, առանձին դեպքերում՝ էպիզոդիկ բնույթ, որի պատճառով գյուղատնտեսական սուբյեկտների կողմից ըստ արժանվույն չեն ընկալվում և ակնկալվող արդյունք չեն ապահովում: Վերջին տասնամյակում պետական աջակցության շրջանակներում միայն «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրերն են կայուն ֆինանսավորվել: Ընդ որում, միջև 2008 թ. դրանք իրականացվում էին «Եվրամիության պարենային աջակցություն» ծրագրով ՀՀ-ին ցուցաբերվող օգնության միջոցներից, որի շնորհիվ բարելավվում էր ծրագրի կառավարումը և հիմնավորված կերպով ավելացվում ֆինանսավորումը: Սակայն 2010 թ.-ից առաջին ծրագրի ֆինանսավորումը կրճատվել է ավելի քան մեկ երրորդով, իսկ երկրորդինը՝ 50%-ով: «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագիրը, որով հանրապետության առավել ուսկային տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության 1

հա. հաշվով հատկացվում էր 35 հազ. դրամ լրավճար, 2007–2009 թթ. նկատելիորեն նպաստեց շահառու գյուղական համայնքների տնտեսական գործունեության ակտիվացմանը և հանրապետության պարենային անվտանգության համար ամենախոցելի արտադրանքի՝ հացահատիկի, արտադրության ավելացմանը: Սակայն, դարձյալ 2010 թ.-ից, առանց լուրջ փաստարկների, նպատակահարմար չհամարվեց շարունակել այդ ծրագիրը, որի հետևանքով փոխվեց ծրագրի ուղղվածությունը և մոտ 3 անգամ կրճատվեց ֆինանսավորումը: Այսպիսի մարտավարությունը նսեմացնում է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության վարկանիշը և թուլացնում շահառուների գործարար կարողությունները:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը բնութագրվում է ոչ միայն բյուջետային ֆինանսավորման բացարձակ մեծությամբ, այլև դրա կառուցվածքով և հատկացումների օգտագործման արդյունավետության ցուցանիշներով: Այս տեսանկյունից, որպես գյուղատնտեսության պետական աջակցության գերակա ուղղություն անհրաժեշտ է ներդնել գյուղատնտեսական ապրանք արտադրողների և պետության համաֆինանսավորումով, այսինքն՝ սուբսիդավորումով, ապահովագրական համակարգ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները (ՀՎԵ), հատկապես՝ երաշտներ, խորշակներ, կարկտահարություններ, ու զարնանային ցրտահարություններ (գծապատկեր 2):

Կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսության արդյունաբերականացումը թելադրում են մթնոլորտային երևույթներով պայմանավորված ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ: Դրանք հիմնականում երկուսն են: Առաջինը ռիսկերի կանխարգելման և հետևանքների մեղմացման ենթակառուցվածքային համակարգի զարգացումն է, երկրորդը՝ արդիական ապահովագրական մոդելների լայնամասշտաբ կիրառումը: Գործնականում առավել բարձր արդյունք է ապահովում դրանց խելամիտ համատեղումը:

Եթե Հայաստանի ագրարային ոլորտում բնական ռիսկերի կանխարգելման և հետևանքների մեղմացման առումով որոշակի քայլեր կատարվում են (ոռոգման համակարգերի զարգացում, հակահեղեղային միջոցառումներ, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների դեմ առավել կենսունակ սորտերի և ցեղերի շրջանացում, հակակարկտային տեղակայանքների կիրառում և այլն), ապա գյուղատնտեսության ապահովագրումը դեռևս իսպառ բացակայում է: Իրականությունն այն է, որ ագրարային ոլորտի բարձր ռիսկայնությունը, համապատասխան նորմատիվային հիմքերի և մեթոդաբանության բացակայությունը արգելակում են այս կարևոր գործիքի կիրառումը:



Գծապատկեր 2

ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ⁴⁰

Տիրապետող է այն կարծիքը, իհարկե, ոչ առանց հիմքի, թե գյուղատնտեսության ոլորտը, հատկապես բուսաբուծության ճյուղը, ապահովագրական ընկերությունների համար գործարար հետաքրքրություն չի ներկայացնում՝ բնական գործոններից ծայրահեղ կախվածության և բարձր ռիսկայնության պատճառով: Այս կարծիքը տիրապետող է ոչ միայն Հայաստանում. ագրոապահովագրության համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ նման հիմնախնդիր առկա է բազմաթիվ երկրներում: Այնպես որ, անգամ ագրարային ոլորտի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման, ապահովագրական շուկայի ընդլայնման, ապահովագրության նոր մեթոդների ներդրման և օրենսդրական հիմքերի կատարելագործման պայմաններում՝ ագրոապահովագրությունը մնում է հիմնախնդիր և դանդաղ է ծավալվում:

⁴⁰ Հայաստանի Հանրապետության երկրորդ ազգային հաղորդագրություն ըստ կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի, 2009, էջ 92:

Դեռևս լուրջ բանավեճի թեմա է գյուղատնտեսության պարտադիր ապահովագրությունը, միանշանակ չեն պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության վերաբերյալ մոտեցումները, առկա են տարակարծություններ ապահովագրության օբյեկտների ընտրության, ապահովագրավճարների չափերի, կորուստների գնահատման և փոխհատուցման հարցերում: Հատկապես վիճահարույց է պետական աջակցությամբ ագրոապահովագրության նպատակահարմարության հարցը⁴¹: Կարծիք կա, որ ապահովագրության սուբսիդավորումը ձեռնառու է միայն ապահովագրական ընկերություններին, իսկ գյուղացիական տնտեսությունների համար առավել շահեկան է տարերային աղետների հետևանքների վերացման նպատակով միանվագ ուղղակի աջակցությունը⁴²: Առավել ազատական թևի ներկայացուցիչներն ընդհանրապես ընդդիմանում են մասնավոր հատվածին պետական աջակցության, առավել ևս՝ սուբսիդավորմամբ ագրոապահովագրության ծրագրերին: Նման մոտեցման հիմնական փաստարկն այն է, թե շուկայական տնտեսության պայմաններում ապրանքային արտադրության բոլոր մասնակիցներն օժտված են տնտեսական ինքնուրույնությամբ և պատասխանատվություն են կրում սեփական գործունեության արդյունքների համար: Միաժամանակ, հատկապես անցումային տնտեսության երկրներում, մասնավոր գործարարության պետական հովանավորչությունը, հատկապես՝ պետական բյուջեից սուբսիդիաների հատկացումը, առաջացնում է գործադիր իշխանության կառույցների կողմից այդ միջոցների մի մասի յուրացում, ոչ արդյունավետ տեղաբաշխում և այլ կոռուպցիոն ռիսկեր: Բացի դրանից, պետական աջակցության որոշակի սահմանափակումներ են պարտադրվում նաև Համաշխարհային առևտրի կազմակերպության (ՀԱԿ) անդամ երկրներին՝ թելադրված համաշխարհայի առևտրի կանոնակարգման շահերով: Այդուհանդերձ, երկրի տնտեսական և պարենային անվտանգության, գյուղատնտեսության սոցիալական կարևորության, գյուղական բնակչության աղքատության հաղթահարման և միգրացիոն գործընթացների կառավարման, բնակլիմայական գործոններից արտադրության արդյունքների բարձր կախվածության նկատառումներով աշխարհի բազմաթիվ երկրներում տարբեր խողովակներով պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսությանը: Վերջինս դրսևորվում է գյուղատնտեսական ապրանք արտադրողներին բյուջետային սուբսիդիաներ տրամադրելու, արտադրանքի վաճառքի երաշխավորված գներ սահմանելու, վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորելու, բույսերի պաշտպանության, անասնաբուժասանիտարական, հողաբարելավման կենտրոնացված միջոցառումներ իրա-

⁴¹ Агрострахование как кормушка, <http://www.rosbalt.ru/business/2012/12/10/1069164.html>

⁴² Агрофинансирование и агрострахование: цель - повышение эффективности, <http://svetich.info/publikacii/aktualnoe-intervyu/agrofinansirovanie-i-agrostrahovanie-cel.html>

կանացնելու, գյուղի սոցիալական ենթակառուցվածքները զարգացումը ֆինանսավորելու, հարկային արտոնություններ սահմանելու և այլ ձևերով: Արտադրական ռիսկերի կառավարման նպատակով, հատկապես վերջին տասնամյակներին աշխարհի շատ երկրներ կարևոր տեղ են հատկացնում նաև պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության ներդրմանը: Այս համակարգը տարեց տարի ընդլայնվում ու կատարելագործվում է, միաժամանակ, տարբեր երկրներում առկա են այդ համակարգի կիրառման առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում գտնելու Հայաստանի համար առավել ընդունելի տարբերակներ: Ահավասիկ, աղյուսակ 16-ում ներկայացված երկրների տվյալները ցույց են տալիս, որ պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունը համեմատաբար նոր միջոցառում է, և անգամ աշխարհի զարգացած երկրներում գտնվում է կայացման և արդիականացման փուլում: Գյուղատնտեսության պետական աջակցության և գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այս կարևոր գործիքն առաջինը կիրառվել է ԱՄՆ-ում դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին:

Աղյուսակ 16

Պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունը աշխարհի մի քանի երկրներում (2010 թ.⁴³)

Երկրները	Ագրոապահովագրության ներդրման սկիզբը	Ագրոապահովագրության շուկայի ծավալը մլն. դոլար	Պետական սուբսիդավորման գումարը, մլն. դոլար	Ագրոապահովագրված փարածքների ընդգրկվածությունը սուբսիդավորման ծրագրում, %
ԱՄՆ	1990-ական	12000	6000	90
Չինաստան	2003	3000	1500	15
Իտալիա	2003	380	190	10
Ռուսաստան	2012	312	187.5	17-19
Հնդկաստան	2002	135	67.5	14
Թուրքիա	2006	300	150	8

ԱՄՆ-ում ագրոապահովագրության սուբսիդավորումը իրականացնում է Ռիսկերի կառավարման գործակալությունը (RMA): Ապահովագրական արտադրանքները մշակում է գործակալությունը, բայց ապահովագրական ծառայությունները մատուցում են հավատարմագրված ապահովա-

⁴³ <http://www.agroinsurance.com/ru/practice/?pid=11473#sthash.xTK1WqeQ.dpuf>

գրական կազմակերպությունները: Ապահովագրողներն աշխատում են գործակալության սահմանած ապահովագրական դրույքներով: Պետության կողմից սուբսիդավորվող ապահովագրավճարի հատվածը կախված է կորուստները ծածկելու տոկոսից: Որպես կանոն, կորստի առավելագույն՝ 70% հատուցմանը համապատասխանում է 50, իսկ 60%-ին՝ 30% սուբսիդավորում: Ներկայումս ապահովագրված են գյուղատնտեսական ապրանք արտադրողների ավելի քան 50%-ը և ցանքատարածությունների մոտ 70%-ը:

Թուրքիայում պետական աջակցությամբ ագրոապահովագրման համակարգը կիրառվում է 2006 թ.: Այդ գործունեությունը իրականացվում է TARSIM /Subsidised agricultural insurance in Turkey/ գործակալության միջոցով: Մինչև 2012 թ. 6 տարվա ընթացքում այս կառույցին հաջողվել է ընտրել և վերավորակավորել գյուղատնտեսության ապահովագրության նոր համակարգի 1700 մասնագետ: Թուրքիայում այս համակարգով ապահովագրվում է 36 անուն մշակաբույս: Հիմնական մշակաբույսերն են հացահատիկը, խաղողը, լոլիկը, ծիրանը և ձիթապտուղը: TARSIM-ի դիտորդական խորհրդում ընդգրկված են գյուղատնտեսության նախարարության, գանձապետարանի և ապահովագրական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ինչպես ապահովագրավճարները, այնպես էլ սուբսիդիայի գումարները վճարվում է TARSIM-ին: Վերջինս իրականացնում է նաև այդ գումարների վերաապահովագրումը: 6 տարվա ընթացքում ցանքատարածությունների ապահովագրումը 1 տոկոսից հասել է 8,2 տոկոսի, իսկ ապահովագրության միջոցները 27 մլն եվրոյից՝ 200 մլն եվրոյի⁴⁴:

Ավստրիայի ագրոապահովագրության մոդելը նման է Թուրքիային: Այստեղ նույնպես ապահովագրողները ստեղծել են առանձին ապահովագրական միավորում՝ Ավստրիական ապահովագրական գրադ (Die Österreichische Hagelversicherung), որը զբաղվում է միայն ագրոապահովագրման հարցերով և որևէ այլ ապահովագրական ծառայություն չի իրականացնում: Պարտադիր ագրոապահովագրության բացակայության պայմաններում, այս կառույցը կարողացել է ընդգրկել շուկայի 85%-ը:

Իսրայելում գործում է ագրոապահովագրման պարտադիր համակարգ և ագրոարտադրությունը 100%-ով ապահովագրված է: Այդ նպատակով 1967 թ. հիմնադրվել է Կլիմայական ռիսկերի կառավարման պետական կոմիտե (KANAT): Այս կազմակերպությունը կենտրոնացված կարգով իրականացնում է ագրոապահովագրության բոլոր ծրագրերը: Ապահովագրավճարների մոտ կեսը պետությունն է սուբսիդավորվում: Այդ գումարը հատկացվում է հետևյալ համամասնությամբ՝ այգեգործություն 42%, բանջարա-

⁴⁴ Subsidised agricultural insurance in Turkey; Bulent Bora, General Manager of TARSIM. Turkey / 54 / 2010, p. 12-17

բուծություն՝ 30%, անասնաբուծություն՝ 20% և դաշտային մշակաբույսերին՝ 8%: Հավաքված ապահովագրավճարը 2012 թ. կազմել է 280 մլն ԱՄՆ դոլար⁴⁵:

Չինաստանում պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունն իրականացում է Ագրոապահովագրողների ազգային միությունը (ԱԱՄ): Թեև այս ծրագիրն սկսվել է 2003 թ., բայց զարգացման տեմպը բավական բարձր է, և 2013 թ. ագրոապահովագրման շուկայի ծավալը հասել է 5 մլն դոլարի, իսկ վճարումները՝ 3,4 մլն դոլարի, որը ԱՄՆ-ից հետո երկրորդ ցուցանիշն է: Ի դեպ, մինչև 2007 թ. պիլոտային ծրագրի կարգավիճակով մի քանի նահանգներում ապահովագրվում էր խիստ սահմանափակ թվով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը, 2008 թ. ծրագրում ներառվեցին նաև գյուղատնտեսական կենդանիները, իսկ 2012 թ.-ից ծրագիրն ընդգրկեց ավելի մեծ թվով մշակաբույսեր և իրականացվում է ամբողջ երկրում: Ըստ Չինաստանի ԱԱՄ-ի տվյալների՝ 2013 թ.-ին ապահովագրվել է 73 մլն հա, որը գյուղատնտեսական հողատեսքերի 45%-ն է: Ագրոապահովագրական շուկայի միջին տարեկան աճը կազմել է 23%⁴⁶:

Կարելի է շարունակել այն երկրների ցանկը, որտեղ հաջողությամբ ներդրվում է պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության համակարգը, սակայն սահմանափակվենք նշված երկրներով, և Հայաստանի պայմաններում այն կիրառելու առումով՝ կատարենք մի քանի ընդհանրացում:

1. ՀՀ մարզերն ունեն որոշակի բնակլիմայական առանձնահատկություններ և յուրաքանչյուր տարածաշրջանի մթնոլորտային վնասակար երևույթների տեսքով առավել յուրահատուկ են որոշակի ռիսկեր (գծապատկեր 2): Միանգամայն պարզ է, որ բոլոր ռիսկերից միաժամանակյա ապահովագրումը դեռևս իրատեսական և արդյունավետ չէ: Հետևաբար, անհրաժեշտ է ռիսկերի և բյուջետային հնարավորությունների գնահատման, ինչպես նաև ապահովադիրների ցանկությունների ուսումնասիրության հիման վրա կատարել տարածքների և ռիսկերի ընտրություն:

2. Գյուղատնտեսության ապահովագրության կարևորությունը և դժվարությունները գնահատելով՝ անհրաժեշտ է ներդնել այնպիսի ապահովագրական համակարգ, որը հավասարապես արտահայտի թե՛ ապահովադիրի և թե՛ ապահովագրողի շահերը: Այսինքն՝ հանուն գյուղացիական տնտեսությունների ռիսկերի չեզոքացման ապահովագրական ընկերությունները չեն ավելացնելու իրենց ռիսկերը, ուստի դրանք հավասարակշռելու խելամիտ տարբերակը պետական սուբսիդավորումով ագրոապահովագրական համակարգի ներդրումն է:

⁴⁵ <http://www.kanat.co.il/templates/kanat/images/KANAT2012.pdf>

⁴⁶ Успех Китая в агростраховании основан на правильной стратегии субсидирования
<http://prodmagazin.ru/2014/03/13/>

3. Պետությունը, իր վրա վերցնելով ապահովագրավճարների մի մասը, լուծում է տնտեսական, սոցիալական և քաղաքական կարևոր խնդիրներ, որոնք խաչաձևվում են երկրի պարենային անվտանգության և ագրոբիզնեսի կայացման միջոցով՝ գյուղական բնակչության բարեկեցության բարձրացման հանգուցային կետում:

4. Համակարգի ներդրման սկզբնական փուլում բյուջեի ծանրաբեռնվածությունը մեղմելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք ապահովագրել առավել ռիսկային տարածքների առավել բարձրարժեք մշակաբույսերը: Դիցուք, առաջնահերթ կերպով իրականացնել ՀՀ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզի նախալեռնային (ծովի մակարդակից մինչև 1200 մ բարձրության) և Վայոց ձորի մարզի ցածրադիր համայնքների խաղողի և պտղի այգետարածքների ուշ գարնանային ցրտահարության և մինչև բերքահավաքը կարկտահարության ռիսկերը: Հաջորդ փուլում նպատակահարմար է ապահովագրական ծրագրում ներառել նաև բանջարանոցային մշակաբույսերի մինչև ծաղկումը ընկած ժամանակահատվածի ծախսերը և ծաղկումից մինչև բերքահավաքը ընկած ժամանակահատվածի ցրտահարության և կարկտահարության ռիսկերը:

5. Համակարգի ծավալման հետագա փուլերում պետք է ըստ կարևորության ներառել մնացած մարզերի գյուղատնտեսական մշակաբույսերը, իսկ անասունների հաշվառման և համարակալման ծրագիրը իրականացնելուց հետո՝ նաև անասունների ապահովագրումը: Այն մոտեցումը, թե ցածր ռիսկայնությունը թույլ է տալիս անհապաղ սկսելու գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը, մեր կարծիքով, հիմնավորված չէ և կարող է հերթական անգամ վարկաբեկել պետական աջակցությամբ ագրոապահովագրության կարևոր գաղափարը:

6. Վերոհիշյալ գործընթացը պահանջում է պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության օրենսդրական, նորմատիվային և ֆինանսաբյուջետային հիմքերի ձևավորում: Կարծում ենք, որ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու պարագայում մինչև 2014 թ. հոկտեմբերի սկիզբը հնարավոր է Ազգային ժողով ներկայացնել և ընդունել «Պետական աջակցությամբ ագրոապահովագրության զարգացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Դրա հետ մեկտեղ 2015–2018 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրում և 2015 թ. ՀՀ բյուջեի նախագծում ներառել պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության ծրագիրը և բյուջետային հատկացումների նախահաշիվը: Իհարկե, այս համակարգի ներդրումը պահանջում է նաև նորմատիվային ակտերի ամբողջական փաթեթի ընդունում, որի աշխատանքները ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի՝ համագործակցելով շահագրգիռ ապահովագրական կազմակերպությունների հետ: Մեր նախնական հաշվարկներով 3-րդ կետում նշված օբյեկտներում, ապա-

հովագրավճարների 50/50 բաշխման պայմաններում, պետության հատկացրած սուբսիդիայի տարեկան գումարը կարող է կազմել 7-8 մլրդ դրամ, որը բյուջեի խելամիտ վերաբաշխման պայմաններում, միանգամայն հնարավոր աջակցություն է:

Իհարկե, բացի ագրոապահովագրության համակարգից, երկրի պարենային անվտանգության շահերը պահանջում են կիրառել ագրարային ոլորտի պետական կարգավորման այլ միջոցառումներ, որոնք նույնպես պահանջում են որոշակի պետական աջակցություն: Ուստի առաջարկությունների բաժնում, պարենային անվտանգության հայեցակետից՝ համառոտ կանդիդատնանք նաև գյուղատնտեսության պետական աջակցության ուղղությունների և կառուցակարգերի վերանայմանը:

Հայաստանը՝ որպես լեռնային երկիր, որն ունի խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականություն, բավական խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ: Միանգամայն ակնհայտ է, որ վերջինս առավելապես ազդում է գյուղատնտեսության, հետևաբար՝ երկրի պարենային անվտանգության վրա: Ոստի, հատկապես վերջին տարիներին, կլիմայի փոփոխության սոցիալտնտեսական հետևանքները գնահատելիս, առանձնակի շեշտադրվում է նաև բնակչության պարենային ապահովության վրա հնարավոր ազդեցությունը: Այս հիմնախնդիրը դիտարկվում է ոչ միայն առանձին երկրների, այլև տարածաշրջանային և միջազգային ընդգրկումով: Դրա ամենացայտուն օրինակներից է 2002 թ. Յոհաննեսբուրգում 195 երկրների ղեկավարների մասնակցությամբ «Մոլորակի կայուն զարգացման» համաժողովը, որի ընդունած 21-րդ դարի մարտահրավերների ցանկում առանձնակի կարևորվում է ագրոէկոհամակարգում շրջակա միջավայրի պահպանությունը, կլիմայի գլոբալ փոփոխության ռիսկերի կառավարումը, բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը և պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը: Այս հիմնախնդիրներին են ուղղորդված միջազգային հանրության ջանքերը: Հատկապես այդ նպատակին են ծառայում Միավորված Ազգերի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), Համաշխարհային բանկի, Կարմիր խաչի և այլ միջազգային կազմակերպությունների բազմաբնույթ ծրագրերը: ՀՀ կառավարությունը ևս վերոհիշյալ կազմակերպությունների աջակցությամբ իրականացնում է որոշակի ծրագրեր, որոնց նպատակն է բացահայտել երկրում կլիմայի փոփոխության միտումները և տնտեսության խոցելիությունը, մշակել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնելու հատկապես գյուղատնտեսության հարմարվողականությունը: Անառարկելի է, որ կլիմայի փոփոխության բացասական դրսևորումների պայմաններում երկրի պարենային անվտանգության ռիսկերը մեծանում են, ուստի պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի համագործակցության վեկտորը պետք է նպատակաուղղել ագրոպարենային հատվածի մրցունակության բարձրացման և նորամուծական զարգացման շնորհիվ կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմացմանը:

Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբը (IPCC), որը զբաղվում է կլիմայի գիտական ուսումնասիրությունների համակարգումով, իր ուշադրությունը կենտրոնացրել է հետևյալ երեք խնդիրների վրա.

1. Կլիմայի փոփոխությունների գնահատում, բնական և անտրոպոգեն պատճառների բացահայտում, ինչպես նաև կլիմայի փոփոխության երկարաժամկետ հիմնավորված սցենարների մշակում:
2. Բնության, շրջակա միջավայրի և մարդու տնտեսական գործունեության համար կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքների դրական և բացասական ազդեցության գնահատում:
3. Առանձին պետությունների և միջազգային հանրության՝ այդ փոփոխություններին արձագանքելու մարտավարության մշակում՝ բացասական հետևանքները նվազեցնելու և կլիմայի կայունացման հասնելու նպատակով⁴⁷:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը և Հայաստանի Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնը ՀՀ կլիմայի փոփոխության առաջին և երկրորդ ազգային հաղորդագրություններում ներկայացրել են բավական համապարփակ վերլուծություն դիտարկվող ժամանակահատվածների կտրվածքով կլիմայի փոփոխության և տնտեսական գործունեության վրա ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև կատարել կանխատեսումներ և մշակել զարգացման սցենարներ: Երկու Ազգային զեկույցներում էլ խոցելիության գնահատման համար ընդունվել է կլիմայի փոփոխության վերաբերյալ IPCC-ի մեթոդաբանությունը և կանխատեսվող սցենարները: Ի դեպ, առաջին զեկույցում կանխատեսվում է օդի ջերմաստիճանի բարձրացում 2 C₀ և մթնոլորտային տեղումների պակասում 10%-ով սցենարը: Այս փաստաթղթում ներկայացվել են ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները 1990–1995 թվականներին, որը, անկասկած, անկախության հռչակումից հետո մեր երկրի ամենադժվարին ժամանակաշրջանն էր: Երկրորդ զեկույցում անդրադարձ է կատարվել 1995–2006 թթ. տնտեսական զարգացումներին, որը բնութագրվում է նախ՝ տնտեսության կայունացման, իսկ սկսած 2000 թ.՝ զարգացման փուլերով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության խոցելիության և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության միջոցառումներին, ապա առաջին զեկույցում նշված «հողային ֆոնդի օգտագործման բարելավում և ցանքերի կառուցվածքի փոփոխություն, խոնավությունը խնայող տեխնոլոգիաների լայն ներդրում, ռոտոգվող հողերի գոտիական բաշխման վերանայում, առաջավոր ագրոտեխնիկական միջոցառումների կիրառում և նոր բարձրբերքատու ցրտա և չորադիմացկուն մշակաբույսերի ներդրում, արոտավայրերի վերականգնում ու պահպանություն և հոտի ցեղային կազմի բարելավում» հիմնական միջոցառումների մի մասը, թեև ոչ մեծ ծավալներով կատարվել են, բայց դարձյալ մնում են արդիական

⁴⁷ Ա. Խոյեցյան, Կլիմայի փոփոխությունը: Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար: Երևան 2007, էջ 5:

ու շարունակական⁴⁸:

Ազգային երկրորդ զեկույցի կառուցվածքն ավելի բարելավված է: Այս փաստաթղթում արձանագրված է «Կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանում հողի խոնավությունը կնվազի 10–30%-ով, գյուղատնտեսական տարրեր մշակաբույսերի խոնավապահովվածությունը՝ 7–13%-ով, հողի ջրային դեֆիցիտը կավելանա 25–30%-ով: Արդյունքում՝ առավել խոցելի կդառնա Հայաստանի նախալեռնային և ստորին լեռնային գոտու անջրդի հողագործությունը: Կլիմայի փոփոխության ընդունված սցենարների համաձայն՝ մինչև 2030 թ. կանխատեսվում է գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության անկում 8–14%-ով (այդ թվում հացահատիկայիններինը՝ 9–13%-ով, բանջարեղենինը՝ 7–14%-ով, կարտոֆիլինը՝ 8–10%-ով և պտուղներինը՝ 5–8%-ով): Սպասվում է արոտավայրերի ընդհանուր մակերեսի և նրանց բերքատվության կրճատում 4–10%-ով, այդ թվում՝ ենթալպյան և ալպյան գոտու առավել աժեքավոր արոտավայրերինը՝ 19–22%-ով: Հավանական է խոտհարքների բերքատվության նվազում 7–10%-ով, որն իր հերթին կհանգեցնի կերարտադրության ծավալների կրճատման»⁴⁹: Այս սպասվելիք փոփոխությունների ազդեցությանը դիմակայելու համար նախատեսվում է իրականացնել հարմարվողականության հետևյալ միջոցառումները. «(1) Առավել երաշտադիմացկուն, չորադիմացկուն սորտերի և հիբրիդների սելեկցիա և ներդրում, ներառյալ այդ բնութագրերն ունեցող տեղական ավանդական սորտերի պահպանում և տարածում, (2) բարձրլեռնային արոտավայրերի առավել լայն օգտագործում և տեսակարար բեռնվածության կրճատում, (3) պարարտանյութերի կիրառման նորմերի փոփոխություն, (4) հողագործության գոտու տեղաշարժ դեպի բավարար խոնավապահովված շրջաններ, (5) ջրախնայողական ոռոգման տեխնոլոգիաների կիրառում, (6) մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայուն սորտերի ներդրում, (7) հակակարկտային և հակահեղեղային միջոցառումների իրականացում, (8) ՀՎԵ-ների մասին վաղ ահազանգում, (9) գյուղատնտեսական կենդանիների պատվաստումներ և վակցինացում»⁵⁰: Մեր կարծիքով, այս ձևակերպումով որոշ միջոցառումների գերակայությունը վիճելի է: Մասնավորապես, դա վերաբերում է 3-րդ և 4-րդ միջոցառումներին: Բան այն է, որ արդեն շուրջ երկու տասնամյակ պարարտացման սահմանված նորմաները չեն պահպանվում: Ավելին, եթե ազոտական պարարտանյութերով պարար-

⁴⁸ Հայաստանի Հանրապետության առաջին ազգային զեկույցն ըստ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի, համառոտ ամփոփում: Երևան, հոկտեմբեր 1998 թ., 11 էջ:


⁴⁹ Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային հաղորդագրություն, ըստ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի, Երևան, 2010 թ. 23 էջ:

⁵⁰ Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային հաղորդագրություն, ըստ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի, Երևան, 2010 թ. էջ 28 :

տացման պահանջը 30–40%-ով բավարարվում է, ապա ֆոսֆորական և կալիումական, առավել ևս՝ միկրոպարարտանյութեր ընդհանրապես հող չի մտցվում: Տեղում միզանյութի և կալիումական պարարտանյութի արտադրության պարբերաբար կրկնվող խոստումները մնում են անհետևանք, իսկ բակտերիալ պարարտանյութերի փոքրածավալ արտադրությունը չի կարող բավարարել, առավել ևս փոխարինել N,P,K-ի պահանջարկին: Ինչ վերաբերվում է 4-րդ՝ հողագործության գոտու տեղաշարժ դեպի բավարար խոնավապահովված շրջաններ, ձևակերպմանը, ապա ՀՀ-ում ինչպես ոռոգվող, այնպես էլ անջրդի վարելահողերի մոտ 40%-ը անմշակ է, ուստի հիմնախնդիրը ոչ թե խոնավության պակասն է, այլ հողօգտագործման շահադրման ցածր մակարդակը: Իհարկե, կարևոր է ցանքատարածությունների կառուցվածքում առավել ինտենսիվ և բարձրարժեք մշակաբույսերի տեսակարար կշռի ավելացումը և լեռնային պտղաբուծության զարգացումը: Գյուղատնտեսության նորաստեղծական զարգացման ուսանելի փորձ կա ձիթապտղի, կիվիի, արքայանարինջի, արևելյան խուրմայի և այլ ջերմասեր պտղատուների հարմարեցման առումով (Մեղրի, Նոյեմբերյան, Արարատ և այլն): Գնալով ընդլայնվում է ծիրանենու, դեղձենու, կեռասենու և այլ ավանդաբար դաշտավայրային համարվող պտղատեսակների աշխարհագրությունը (Մալիտակ, Վարդենիս, Թալին, Գորիս և այլն): Նշված օրինակներն անմիջական աղերսներ ունեն կլիմայի փոփոխության երևույթների հետ:

Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման և հարմարվողականության տարբերակների մշակման ուղղությամբ Հարավային Կովկասի երկրներում 2012 թ. բավական հետաքրքիր ծրագիր է իրականացվել Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանային վերլուծողական և խորհրդատվական գործողությունների (ՎԽԳ) հովանու ներքո: Այդ ծրագրերի նպատակն է բացահայտել Հայաստանում կլիմայի փոփոխության առկա վտանգները և խոցելիությունը, գնահատել կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունը Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների գյուղատնտեսական ոլորտի վրա և մշակել կլիմայի փոփոխության հետևանքների կասեցման ռազմավարություն և մեղմացնող այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնելու գյուղատնտեսական համակարգի դիմադրողականությունը կլիմայի փոփոխությունների նկատմամբ, մինևույն ժամանակ օգտագործելով այդ փոփոխության ընձեռած հնարավորությունները: Ընդհանուր նպատակն է մեծացնել Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների կարողությունները կլիմայի փոփոխության հետևանքների կասեցման և մեղմացման ներդաշնակ քաղաքականության, ծրագրերի և ներդրումների իրականացման հարցում և նվազեցնել կլիմայի փոփոխության հետ կապված վտանգները խոցելի խմբերի համար: Այդ նպատակով Հայաստանի տարած-

քը ըստ ծովի մակերևույթից բարձրության դասակարգվել է 4 խոշորացված գոտիների (գծապատկեր 3): Առաջին գոտին ներառում է մինչև 1000 մ բարձրության տարածքները, երկրորդ գոտին՝ 1001–1700 մ, երրորդ գոտին՝ 1701–2500 մ և չորրորդ գոտին՝ 2500 մ-ից բարձր տարածքները:



* Աղբյուրը. Հայաստանի գյուղատնտեսական համակարգերի խոցելիության նվազեցումը կլիմայի փոփոխությունների նկատմամբ, Ազդեցության գնահատում և հարմարվողականության տարբերակներ, ՀԲ, Երևան, 2013, էջ 5:

Գծապատկեր 3

ՀՀ գոտիներն ըստ կլիմայի փոփոխության գնահատման*

Իհարկե, նման բաժանմամբ կլիմայի փոփոխության պատկերն ամբողջական և հիմնավոր չի կարող ներկայացվել, սակայն ուսումնասիրության առաջին փուլում, երբ տեխնիկական հնարավորությունները դեռևս սահմանափակ են, կարելի է բավարարվել որպես խոշորացված գոտիների շտապվիզում գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության, հետևաբար նաև՝ պարենային անվտանգության ցուցանիշների փոփոխության գնահատում: Ի դեպ, ինչպես մասնագիտական, այսպես էլ՝ գիտահանրամատչելի հրապարակումներում, առավելապես շեշտադրվում է գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը: Մենք այն կարծիքին ենք, որ Հայաստանի փոքր, բայց բնակլիմայական և կենսաբազմազանության առումով հարուստ տարածքում կլիմայի փոփո-

խոթյունը, հատկապես՝ գլոբալ տաքացումը, կարող է ունենալ նաև դրական արդյունքներ (աղյուսակ 17):

Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը

Աղյուսակ 17

<i>Բացասական</i>	<i>Դրական</i>
Հողերի բերրիության նվազում	Վեգետացիայի համար բարենպաստ ժամկետի երկարում
Ջրային պաշարների նվազում	Բարձրարժեք ջերմասեր մշակաբույսերի աշխարհագրության ընդլայնում
Մշակաբույսերի բերքատվության իջեցում	Մեկից ավելի բերքի ստացման հնարավորություն
Բույսերի հիվանդությունների տարածում	Գյուղատնտեսական կենդանիների, դաշտային մշակաբույսերի և պտղատուների ձմեռացման նպաստավոր պայմաններ
Կենդանիների հիվանդացության մեծացում	Մթնոլորտային CO ₂ -ի ավելացման շնորհիվ մշակաբույսերի բերքատվության բարձրացում
Հիդրոօդերևութաբանական վնասակար երևույթների հաճախակիություն	Գյուղատնտեսական կենդանիների արածեցման տևողության ավելացում

Հանրապետության 10 մարզերում ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) միջոցով կատարված հարցումների արդյունքները վկայում են, որ հարցման մասնակից մասնագետների և արտադրողների 72% նկատում է գյուղատնտեսական արտադրության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, իսկ 85%-ը ՀՎԵ կանխարգելման և գյուղատնտեսության հարմարվողականության ծրագրերն ու միջոցառումները համարում է ոչ բավարար:

Գյուղատնտեսությանը հատկապես մեծ վնաս են հասցնում երաշտը, կարկուտը, հեղեղումները, գարնանային ցրտահարությունները և սելավները: Վերջին տարիներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կտուցվածքում ավելանում է բարձրարժեք մշակաբույսերի տեսակարար կշիռը, ուստի մեծանում է նաև նույն տարածքին բնական աղետների պատճառած վնասի գումարը: Գրեթե յուրաքանչյուր տարի Հայաստանի մեկ կամ մեկից ավելի տարածքներում երաշտ է գրանցվում: 2000–2001 թթ. սաստիկ երաշտի հետևանքով գյուղատնտեսության վնասը կազմեց 143 մլն. ԱՄՆ դոլար: Անբարենպաստ կլիմայական պայմանների հետևանքով միայն 2010 թ. գյուղատնտեսության ճյուղի վնասը կազմեց մոտ 90 մլն. ԱՄՆ դոլար:

Բնական աղետների հետևանքով վնասված տարածքը և պատճառած վնասը ՀՀ գյուղատնտեսության ճյուղում⁵¹

Տարիները	Վնասված տարածքը, հազ. հա	Պարճառված վնասը, մլրդ. դրամ
1995	86,959	17,00
1996	36,654	12,59
1997	129,819	26,53
1998	63,411	14,95
1999	43,026	11,33
2000	-	59,78
2001	83,500	23,94
2002	74,546	15,14
2003	48,667	82,63
2009	35,368	11,89
2010	17,474	35,50
2011*	4,061	0,91
2012*	2,219	0,49
2013- մայիս	11,101	23.92

* ՀՀ մարզերի մի մասը տվյալներ չեն տրամադրել:

Գյուղատնտեսությանը հատկապես մեծ կորուստներ պատճառեց 2013 թ. մայիս-հունիս ամիսներին Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի, Լոռվա, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում հաճախակի և տևական կարկտահարության երևույթները: Ուղղակի աննախադեպ էր ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում 2013 թ. մայիսի 12-ի և մայիսի 17-ի կարկտահարությունը: ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի ուսումնասիրություններով՝ մարզի 46 գյուղական համայնքներում ավելի քան 11,1 հազ. հա ցանքերի և այգիների բերքը վնասվել է 50–100 տոկոսով, տուժած հողօգտագործողների թիվը 12,8 հազ. մարդ է, իսկ հասցված վնասը նախնական հաշվարկներով կազմում է մոտ 24 մլրդ դրամ կամ 58,5 մլն ԱՄՆ դոլար: Տուժած գյուղացիներին օգնելու նպատակով ՀՀ կառավարությունը և դոնոր համայնքը ձեռնարկեցին որոշակի միջոցներ: Մասնավորապես, բանջարանոցային և կերային մշակաբույսերի նոր ցանք կատարելու համար տրամադրվել է սերմացու, դալարային վարկերը վերահաշվարկվելու են դրամի, և տարբերությունը վճարելու է պետությունը, վարկերի տոկոսա-

⁵¹ Կազմված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներով:

դրույքը սուբսիդավորվելու է, համայնքներում տեղադրվելու են հակակարկտային տեղակայանքներ, հատկացվելու է պարարտանյութեր և դիզելային վառելիք: Բացի դրանից սեփական հողատարածության վրա վնասված ցանքատարածությունների վերականգման աշխատանքների դիմաց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը սահմանված կարգով վճարում է աշխատավարձ:

Կլիմայի փոփոխությունն ուղղակի ազդեցություն է գործում բնական կերահանդակների՝ արոտավայրերի և խոտհարքերի վրա: Արոտային շրջանում գյուղացիական տնտեսությունները բնական կերահանդակներից ստանում են տարեկան արտադրվող կաթի շուրջ 70 տոկոսը, մսի կեսից ավելին, բրդի ողջ քանակը: Բնական արոտների կարևորությունը շեշտադրվում է նաև այն առումով, որ երկրում բուծվող խոշոր և մանր եղջերավոր անասունների ցեղերը համապատասխանում են լեռնային և բարձր լեռնային արոտներին: Բերված տվյալները վկայում են, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արոտավայրերի պահպանմանը, բարելավմանը և օգտագործմանը: Կլիմայի փոփոխության ազդեցությունն ավելի բացասաբար է ազդում, երբ չեն իրականացվում արոտների բարելավման միջոցառումներ, խախտվում են արածեցման ժամկետները և հաջորդափոխությունը: Հատկապես վերջին երկու տասնամյակում ոչ համակարգված արածեցման, հսկողության բացակայության և բարելավման միջոցառումների անտեսման պատճառով խիստ վատացել է արոտավայրերի վիճակը: Բավական է ուշադիր նայել հատկապես գյուղամերձ լանջերին և կտեսնենք բուսածածկից զրկված արահետների աստիճաններ, որոնք գերարածեցման և ոտնահարման արդյունք են: Վիճակը բարվոք չէ նաև հեռագնա արոտավայրերում:

Անասնաբուծության ճյուղի վրա կլիմայի փոփոխության սոցիալտնտեսական հետևանքները բացահայտելու համար պաշտոնական վիճակագրության ցուցանիշների և հրապարակված փորձագիտական տվյալների հիման վրա հաշվարկել ենք հիմնական արտադրանքների արտադրության հնարավոր փոփոխությունը (աղյուսակ 19):

Կանխատեսումը ցույց է տալիս, որ կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը չկանխարգելելու պարագայում, բնական գոտիների տեղաշարժի հետևանքով՝ առավել բարձրարժեք՝ ալպյան և ենթալպյան արոտավայրերի տարածությունը կկրճատվի համապատասխանաբար՝ 19 և 22 տոկոսով: Միաժամանակ կավելանա կիսաանապատային (17%) և մարգագետնյա-տափաստանային (23%) համեմատաբար ցածր արտադրողական արոտավայրերի տարածությունը: Հետևաբար, բնական գոտիների կառուցվածքային փոփոխությունների պատճառով կաթի արտադրություն կպակասի մոտ 52.4 հազ. տոննայով կամ 7.3 մլրդ դրամով: Նույն մեթոդիկայով

կանխատեսվում է, որ մսի արտադրությունը կպակասի 15.1 հազ. տոննայով կամ մոտ 35 մլրդ դրամով, իսկ բրդի արտադրությունը՝ 116.4 տոննայով կամ 0.2 մլրդ դրամով:

Աղյուսակ 19

Կլիմայի փոփոխության ազդեցությամբ՝ արտապայրերի տարածության և կաթի արտադրության փոփոխության կանխատեսումները (2012 թ. փաստացի և 2030 թ. կանխատեսվող ցուցանիշները)

Քննարկյալ գործիքները	2012 թ. փաստացի			Կլիմայի փոփոխության դեպքում, 2030 թ.			
	արտադրության ընդամենը, տարածքից, %	արտադրությունը, հազ. հա	կաթի արտադրության ծավալը, տոննա	արտադրություն, հազ. հա*	արտադրության փոփոխություն, %	կաթի արտադրությունը, տոննա	կաթի արտադրության փոփոխություն, %
Կիսաանապատային	8.5	89.8	23.0	111.8	+ 17	28.6	4.7
Տափաստանային	20.7	218.6	111.9	218.6	0	111.9	18.5
Մարգագետնյա տափաստանային	15.5	163.7	92.1	214.5	+23	120.7	19.9
Հետաձուլված տափաստանային	12.4	131.0	72.5	131.0	0	72.5	11.9
Ենթաալպյան	28.3	299.0	210.5	210.6	- 19	148.3	24.6
Ալպյան	13.7	144.7	144.8	120.1	- 22	120.2	19.8
Արտագոտիական	0.9	9.5	3.3	10.0	+5.2	3.5	0.6
Ընդամենը	100	1056.3	658.1	960	- 9.1	605.7	100

* 2006 թ. հողային հաշվառման մեջ արտապայրերի տարածքը (694 հազ. հա) միանգամից ավելացվեց 431.0 հազ. հա-ով և հասցվեց 1125 հազ. հա-ի, որն իրատեսական չէ:

** Հաշվարկը կատարելիս նկատի է առնվել արտապայրերի տարածության գոտիական կառուցվածքի փոփոխությունը:

Հայաստանի հատկապես լեռնային և բարձր լեռնային համայնքների բնակչության եկամտի գերակշռող մասն ապահովում է անասնաբուծությունը: Ուստի կանխատեսելի է, որ այլ հավասար պայմաններում, կլիմայի փոփոխության հետևանքով գյուղացիական տնտեսությունները միայն նշված երեք արտադրանքների թերարտադրությունից տարեկան կկորցնեն ավելի

քան 42 մլրդ դրամի համախառն արտադրանք: Նման իրավիճակում գյուղացին, զրկվելով եկամտից, որպես կանոն, արտագաղթում է: Այսինքն՝ գյուղատնտեսությունը կորցնում է արտադրողին և էլ ավելի են սրվում բնակչության սոցիալական հիմնախնդիրները: Տարբեր առիթներով շեշտադրել են այն միտքը, որ գյուղատնտեսական արտադրությունը գործարարության դասական պատկերացումից տարբերվում է: Սովորաբար որևէ ձեռնարկատեր ցածր եկամտաբերության կամ սնանկացման վտանգի դեպքում փոխում է գործարարության ուղղվածությունը կամ դուրս է գալիս գործարարության ոլորտից: Բոլորովին այլ, և առավել դրամատիկ պատկեր է գյուղատնտեսության ասպարեզում: Գյուղատնտեսական գործունեությունից բավարար եկամուտ չստացող, տարբեր ռիսկերի հետևանքով (կարկտահարություն, ցրտահարություն, համաճարակ և այլն) ինչպես տվյալ տարվա, այնպես էլ հաջորդ 1–2 տարիների բերքը կորցնող գյուղացին, բավարար աջակցության բացակայության դեպքում, հարկադրված է ոչ միայն հրաժարվել արտադրությունից, այլև հեռանալ գյուղատնտեսությունից ու գյուղից: Վերջին տարիներին ակտիվացող գյուղական բնակչության արտահոսքը հաստատում է այս ճշմարտությունը:

Կլիմայի փոփոխությունը, հատկապես ջերմաստիճանի բարձրացման և մթնոլորտային տեղումների նվազման հետևանքով՝ անապատացման գործընթացի ակտիվացումը, բացասաբար է անդրադառնում կենդանիների առողջության վրա: Մասնագետների կանխատեսումները վկայում են, որ ջերմաստիճանի բարձրացման հետևանքով զգալիորեն կմեծանա պիրոպլազմիդոզների, մաշկային և վիսցերալ լեյշմանիոզների, դիրոֆիլարիոզների, անկիլոստոմիդոզների և այլ հիվանդությունների ռիսկերը: Ենթադրվում է, որ հատկապես պիրոպլազմիդոզները, որոնք նախկինում բնորոշ էին հանրապետության ցածրադիր շրջաններին, կարող են տարածում գտնել նախալեռնային և միջին լեռնային գոտիներում:

Կլիմայի փոփոխության պայմաններում, եթե հարմարվողականության համապատասխան միջոցառումներ չձեռնարկվեն, ապա զգալիորեն կմեծանա գյուղատնտեսության խոցելիությունը, որի հետևանքով կարող է սրվել երկրի պարենային անվտանգության հիմնախնդիրը: Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության բացասական գործոնների ազդեցության հետևանքները համեմատաբար ավելի անվնաս են լինում արդիական տեխնոլոգիաներ և կառավարման արդյունավետ համակարգ ունեցող երկրներում: Հետևաբար, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և նորաստեղծական զարգացման ծրագրերի իրականացումը: Այս քաղաքականության շրջանակներում առանձնահատուկ կարևորություն ունեն միջազգային հանրության օգնությամբ և ՀՀ կառավար-

րության՝ գյուղատնտեսության պետական աջակցության նպատակով իրականացվող ծրագրերը:

Գյուղատնտեսության ոլորտի գիտական կազմակերպությունները, համագործակցելով Գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային խորհրդատվական խմբի (CGIAR) կենտրոնների, մասնավորապես՝ ICARDA-ի և SIMMIT-ի հետ, սելեկցիոն աշխատանքներ են իրականացնում մշակաբույսերի համաշխարհային հավաքածուի նմուշներից ՀՀ պայմաններին հարմարեցված սորտերի ու գծերի ստացման ուղղությամբ: Ներկայումս Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի բույսերի կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում աշխատանքներ են կատարվում հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացման համար: Կենսատեխնոլոգիայի մեթոդները թույլ են տալիս կարճ ժամանակահատվածում ստանալու բույսերի նոր գծեր, որոնք առանձնանում են բարձր բերքատվությամբ, արբիտիկ գործոնների նկատմամբ կայունությամբ /աղաղիմացկուն, չորադիմացկուն և այլն/: Որպես ելակայն օգտագործվում են տեղական պոմիդորի, տաքդեղի, ընդավորների /ոլոռ, սոյա/ սորտերը. դրանք ավելի հարմարված դարձնելու համար փոփոխվող կլիմայական պայմաններին: Կենսատեխնոլոգիայի մեթոդները, ի տարբերություն ավանդական սելեկցիայի մեթոդի, թույլ է տալիս ավելի արագ և արդյունավետ ստանալու ցանկալի արդյունք: Այս մոտեցումը ինտենսիվ փոփոխվող բնակլիմայական պայմանների դեպքում ավելի արդյունավետ է:

Բանջարաբուստանային մշակաբույսերի տեղական սորտերը, ի տարբերություն ներմուծված սորտերի, դիմացկուն և կայուն են Հայաստանի բնակլիմայական պայմաններին, ավելի հեշտ են դիմակայում եղանակային փոփոխություններին: Տեղական պոմիդորի, տաքդեղի որոշ սորտեր ունեն դիմացկունության լայն սպեկտր հողի և օդի խոնավության նվազման նկատմամբ, իսկ բարձր ջերմաստիճանի և չոր կլիմայի պայմաններում դարձել են ավելի բերքատու և արտադրական տեսակետից առավել հետաքրքրական:

Վերջին տարիներին ագրարային ոլորտի մրցունակությանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը զգալիորեն նպաստեցին Համաշխարհային բանկի (WB), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) վարկային ու դրամաշնորհային միջոցներով, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների օգնությամբ գյուղատնտեսության կարողությունների հզորացումը: Հատկապես ռոռզման համակարգերի, բարձրարժեք գյուղատնտեսության և հետբերքահավաքային ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը: 2011 թ. ավարտվեց ռոռզման համակարգերի վերականգնմանն ու ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված հայաստանյան ծրագիրը՝ 108 մլն ԱՄՆ դոլարին

համարժեք դրամի արժողությամբ: Ծրագրով նախատեսվել և իրականացվել են մի շարք միջտնտեսային ջրանցքների, ներհամայնքային ոռոգման ցանցերի, պոմպակայանների, մայր ջրանցքների վերանորոգման և կառուցման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև մի շարք ինստիտուցիոնալ միջոցառումներ, այդ թվում՝ ջրօգտագործողների ընկերությունների անձնակազմի ուսուցում, օրենսդրական բարեփոխումներ, նախատեսվող կառուցվածքային բարեփոխումներին աջակցություն և այլն:

Ըստ հողային հաշվեկշռի վերջին տվյալների հանրապետությունում ոռոգվում է 207,8 հազ. հա հողատարածություն, որից գյուղատնտեսական հողերը կազմում են 154,0 հազ. հա, ներառյալ՝ 120,0 հազ. հա վարելահողեր, 32,6 հա բազմամյա տնկարկներ և 1,5 հազ. հա արոտավայրեր: Ոռոգվում են նաև մոտ 53,0 հազ. հա տնամերձ և այգեգործական ընկերությունների հողեր և 400 հա անտառներ: Բերված ցուցանիշները զգալիորեն զիջում են հանրապետության ոռոգման համակարգերի իրական ներուժին, ուստի առաջիկա տասնամյակի համար նախատեսվում է՝ 1) մեծացնել ոռոգման համակարգի պահպանման հուսալիությունն ու արդյունավետությունը, նվազեցնել ոռոգման ջրի կորուստները, բարելավել ջրի որակը և կոլեկտորային ջրահեռացման ծառայությունները, 2) վերականգնել և արդիականացնել ոռոգման համակարգերը և համայնքների ոռոգման ներքին ցանցը, 3) բարելավել ջրային համակարգի կառավարումը և հասարակություն-պետություն գործընկերային հարաբերությունները:

Այս գերակայությունների շրջանակներում իրականացվող ծրագրերը պետք է նպաստեն գյուղատնտեսական կազմակերպությունների բնական ռիսկերի, այդ թվում՝ կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարմանը և ապահովեն ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները (աղյուսակ 20):

Գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացումը և կոոպերացիայի զարգացումը նույնպես կարևոր միջոց են կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության հարմարվողականության բարձրացման համար: Այս տեսանկյունից որոշակի պետական աջակցություն է ցուցաբերվում նաև գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը: Վերջին տարիներին այդպիսի ծրագրեր են իրականացվել ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հայաստանյան գրասենյակի, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի, Համաշխարհային բանկի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (ՀԳՌԿՄԾ) շրջանակներում:

Ոռոգման համակարգի զարգացման հիմնական ցուցանիշները⁵²

Ցուցանիշները	Բազային տարի	2013	2014	2015	2016	2017	2021	2025
Բարեփոխումների ինդեքսը (ՎՋԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշ Transition Indicator)	2.33 (2010)	2.67	3.0	3.33	3.33	3.67	4.0	4.33
ՋՕԸ-ների սպասարկած ոռոգելի հողատարածքներ, հազ. հա	129.4 (2011)	129.7	130.4	131	131.7	132.4	135	138
Պետական ներդրումների մակարդակ. տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	0.8 (2011)	0.14	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3
Սակագնի ընթացիկ ծախսածածկման (հաշվեգրային) մակարդակ, %	48 (2011)	78.4	83.4	90.9	95	100	120	120

Ներկայումս հանրապետության 6 մարզերի 55 համայնքում ՀԳՌԿՄԾ-ն իրականացվում է արոսոգտագործողների կոոպերատիվների ձևավորման, անասնաբուծության զարգացման, արոտների ջրարբիացման և գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման աշխատանքներ (աղյուսակ 21):

ՀՀ-ի համար կարևոր ձեռքբերում է, որ 2013 թ. առաջին անգամ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայիպետիկոմետի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցությամբ, FAO-ի մեթոդաբանությամբ կատարվել է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի խաղողի և ծիրանի բերքատվության կանխատեսում: Վերջինս նպատակատուղված է կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության հարմարվողականության բարելավմանը, երկրի պարենային անվտանգության բնագավառում հավաքվող տվյալների որակի բարձրացմանը և օպերատիվ տարածմանը:

⁵² Հայաստանի Հանրապետության 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 74:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով իրականացվող աշխատանքները*

Հ/հ	Մարզերը	Նահապետ համայնքների թիվը	Ծրագրով ամսադրամային թույլատրելի, հազ. դրամ	Կադրարված է առ 01.07.2013 թ., հազ. դրամ			
				Արուրների ջրարքի ացում	Գյուղ. տեխնիկայի գնում	Կոոպերատիվների կազմակերպման ուսուցում և տեխնիկական աջակցություն	Այլ աշխատանքներ
1.	Գեղարքունիք	10	1109376.0	270641.0	214377.0	29031.3	
2.	Սյունիք	10	882022.0	154881.0	224194.0	14680.0	
3.	Տավուշ	11	901758.0	183391.0	165768.0	6593.0	
4.	Լոռի	7	40486.2	145987.0	60897.0	13792.0	
5.	Արագածոտն	8	777979.0	158092.0	174664.0	16927.0	
6.	Շիրակ	9	880647.0	400103.0	121268.0	25307.0	8000
7.	Ընդամենը	55	4592268.2	1313095.0	961168.0	106330.0	8000

* Աղյուսակը կազմել է հեղինակը ՀԳՌԿՄԾ-ի տրամադրած տվյալներով:

Ներկայումս կլիմայի փոփոխություններին գյուղատնտեսության հարմարվողականության համար նպաստավոր ծրագրեր են իրականացվում նաև տեղական և միջազգային մի շարք կազմակերպություններ: Նշենք առավել արդյունավետ գործունեություն իրականացնող կազմակերպությունները:

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ (ԱԳԶԿ-CARD): ԱԳԶԿ-ն ԱՄՆ ԳԴ ՄԱԾ իրավահաջորդն է և որպես հայաստանյան հիմնադրամ գրանցվել է 2005 թ.: ԱԳԶԿ-ի առաքելությունն է աջակցել ֆերմերներին և ագրովերամշակող կազմակերպություններին գյուղատնտեսական և ագրովերամշակման արտադրանքների արտադրության և իրացման, եկամուտների ավելացման, աշխատատեղերի ստեղծման, վերջին հաշվով՝ գյուղական բնակչության աղքատության հաղթահարման նպատակով: ԱԳԶԿ-ն առաջարկում է գյուղատնտեսության զարգացման ծառայությունների շուկայամետ և ֆերմերի կարողությունների զարգացմանը նպաստող համակողմանի, միասնական փաթեթ: Կենտրոնի ցուցաբերած աջակցությունը խթանում է ագրոբիզնեսի զարգացմանը՝ ներառելով մարքեթինգի, գյուղի զարգացման և ֆինանսական ծառայությունները:

ՀԵՅՖԵՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ: Հեյֆեր Ինթերնեյշնլը շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է վերջ տալ սովին ամբողջ աշխարհում՝ կենդանիներ, տնկիներ, ուսուցում և այլ միջոցներ տրամադրելով աշխարհի տարբեր անկյուններում ապրող անապահով ընտանիքներին: Սկսած 1999 թվականից՝ Հարավային Կովկասում Հեյֆերն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր: Այսօր միայն Հայաստանում իրականացվող ծրագրերում ընդգրկված են 165 գյուղական համայնքներ: Կազմակերպությունը տրամադրում է տարբեր տեսակի կենդանիներ՝ կովեր, այծեր, ոչխարներ, մեղուներ, ճագարներ, հավեր, ձկներ, հնդկահավեր, գոմեշներ, ցիլկներ, կալիֆորնիական որդեր, ինչպես նաև կարտոֆիլի, ցորենի սերմեր, մրգատու և այլ ծառերի տնկիներ: Հեյֆերի ծրագրերը Հայաստանում բազմազան են և նորարարական: Բացի կենդանիների տրամադրման և գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ծրագրերից, Հեյֆերը Հայաստանում լուրջ ուշադրություն է դարձնում գյուղաբնակ պատանիների շրջանում առաջնորդության հնտությունների զարգացմանը և մասնագիտական ուսուցումներին:

ԱՄՆ-ի Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե ՀԿ-ի մասնաճյուղը (ԱՄՔՈՐ, UMCOR) հիմնվել է Հայաստանում 1994 թ: Այս կազմակերպության առաքելությունն է պայքարել աղքատության դեմ և աջակցել երկրի սոցիալտնտեսական զարգացմանը: ԱՄՔՈՐ-ի հայաստանյան գրասենյակն իրականացնում է մարդասիրական օգնության, գյուղատնտեսական, առողջապահական և թրաֆիկինգի դեմ պայքարի ծրագրեր: Հավատարիմ իր առաքելությանը՝ իրականացվող ծրագրերի շնորհիվ ԱՄՔՈՐ-ն իր նպաստն է բերում Հայաստանում համայնքների զարգացմանը:

Ծրագրի շահառու գյուղական համայնքներն ընտրվում են՝ հաշվի առնելով համայնքի բնակլիմայական պայմանների խոցելիությունը, տնտեսական վիճակը և գյուղատնտեսական հիմնախնդիրների սրությունը, հետագա աճի հնարավորությունները, ֆերմերների ցուցաբերած ակտիվությունը և կազմակերպվածությունը, գյուղատնտեսական տեխնիկայի և համապատասխան հնտությունների զարգացման անհրաժեշտությունը, այլ կոոպերատիվների և ծրագրերի առկայությունը:

Օբսֆամ Մեծ Բրիտանիա կազմակերպության հայաստանյան գրասենյակը, սկսած 1994 թվականից, Հայաստանի շուրջ 165 հեռավոր գյուղական համայնքներում իրականացնում է մարդասիրական և համայնքների զարգացման տարաբնույթ ծրագրեր: Մասնավորապես, ագրարային ոլորտում իրականացվում է «Կայուն կենսապահովման և գյուղատնտեսական աջակցության ծրագիր», որն ուղղված է գյուղական աղքատության հաղթահարմանը: Կազմակերպությունը նախապատվությունը տալիս է շուկայամետ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված համայնքային նախաձեռնու-

թյունների իրականացմանը: Կազմակերպությունը գործունեություն է ծավալում նաև բնական աղետների ռիսկերի նվազեցման, արտակարգ իրավիճակներում կողմնորոշման և համայնքների ճկունության ուղղությամբ:

Սկսած 1994 թվականից, ՀՀ Սյունիքի մարզում սննդապահովմանը վերաբերող բազմապիսի ծրագրեր է իրականացնում «Ակցիա սովի դեմ» (ԱՍԴ) միջազգային մարդասիրական կազմակերպությունը: Ծրագրի նպատակն է նպաստել Սիսիանի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների աղքատության կրճատմանը: Ծրագրի իրականացումը ֆինանսավորում է Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալությունը (SDC):

ՀՀ կառավարության և մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերը, անշուշտ, նպաստում են կլիմայի փոփոխությանը գյուղատնտեսության հարմարվողականությանը և երկրի պարենային անվտանգությանը: Այդուհանդերձ, դրանք համակարգված բնույթ չեն կրում, ուստի անհրաժեշտ է ընդունել Կլիմայի փոփոխությանը գյուղատնտեսության հարմարվողականության պետական ծրագիր և առանձնահատուկ շեշտադրել պարենային անվտանգության գերակայությունը:

ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ⁵³

Վերջին տասնամյակներին միջազգային զարգացման բնութագրիչ առանձնահատկություններից մեկը համաշխարհային տնտեսական տարածքի գլոբալացումն ու տարածաշրջանային միությունների ձևավորումն է: Ի դեպ, հարկ է նկատել, որ տարածաշրջանային միությունը հաճախ ինքնին հանդես է գալիս որպես դիմակայող գործոն գլոբալացման այնպիսի բացասական դրսևորման, ինչպիսին է փոքր կամ թույլ զարգացած երկրների քաղաքական կախվածությունն առավել ուժեղ ու ազդեցիկ երկրներից: Տարածաշրջանային միությանը անդամակցելն անդամ երկրին հնարավորություն է ընձեռում շտրեյթ մասշտաբի էֆեկտի, արտադրության գիտականորեն հիմնավորված տեղաբաշխման, մասնագիտացման և կոոպերացման, նկատելիորեն բարձրացնել սեփական արտադրանքի մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Այդպիսի տարածաշրջանային խմբավորման ցայտուն օրինակ է Եվրոպական Միությունը (ԵՄ):

Հետխորհրդային տարածքում ներկայումս որպես տնտեսական ինտեգրման առավել արդյունավետ մոդել կարելի է դիտարկել Մաքսային Միությունը (ՄՄ), որի հիմնադիր անդամներն են Բելառուսը, Ռուսաստանը և Ղազախստանը: Այս երկրների նախաձեռնությունը տրամաբանված էր, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո անցած ավելի քան երկու տասնամյակի ընթացքում նրանք փորձում էին պահպանել նախկինում ձևավորված տնտեսական կապերը և քաղաքական շահերի որոշակի ընդհանրությունը: Ինչպես ԱՊՀ-ի և Եվրասիական տնտեսական հանրության կազմում, այնպես էլ ՄՄ-ի շրջանակներում այս երկրների համագործակցությունն առանձնահատուկ բնույթ ունի և հեռահար նպատակներ է հետապնդում: ՄՄ-ի կազմավորումը դիտվում է որպես Եվրասիայի համար նոր ինտեգրացման ծրագիր, որը Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի պատկերավոր բնութագրմամբ. «սպագա է, որը ծնվում է այսօր»⁵⁴:

ՄՄ-ն բաց է նոր անդամների, հատկապես հետխորհրդային երկրների համար և ներկայումս այդպիսի հետաքրքրվածություն ունեն Ուկրաինան, Ղրղստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը:

⁵³ Այս գլուխը շարադրվել է տ.գ.դ. Հ. Ծպնեցյանի և տ.գ.թ. Ա. Ավետիսյանի համահեղինակությամբ:

⁵⁴ Таможенный союз в рамках евразийского экономического сообщества: новые вызовы и перспективы. <http://www.eurasialegal.info/index>.

Ինչ վերաբերվում է Հայաստանի անդամակցության քաղաքական որոշմանը, որի մասին 2013 թ. սեպտեմբերի 3-ին մոսկովյան այցի ժամանակ հայտարարեց ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, թեև անսպասելի, բայց անհիմն չէր: Իհարկե, քաղաքական շրջանակներում դեռևս երկար կպահպանվի այդ որոշման արձագանքը, կշարունակվեն ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագիր ստորագրելու ջատագովների բանավեճերն ու որոշ ընդվզումներ, բայց Վիլյուսի գագաթնաժողովից հետո կրքերը հանդարտվում են: Իհարկե, ասում են՝ կանխատեսումն անշնորհակալ գործ է, և ոչ ոք չի կարող հստակորեն կանխագուշակել ԵՄ կամ ՄՄ ապագա զարգացումներին Հայաստանի մասնակցության առավելություններն ու թերությունները, բայց այսօր միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանը տնտեսական և ռազմաքաղաքական շահերով սերտորեն կապված է Ռուսաստանի հետ, և գտնվելով այդ հզոր երկրի ազդեցության գոտում, չկշռադատված շեղումների իրավունք չունի: Ուստի մեզ վիճակված է գործել այն շրջանակներում, որտեղ առավել կանխատեսելի են ռիսկերը և առավել սակավ՝ ազգային անվտանգության սպառնալիքները: Այդուհանդերձ, ՄՄ-ին անդամակցումն ունի որոշակի ընթացակարգեր, իրավական և տնտեսական բնույթի նորմատիվ ակտերի համաձայնեցում և ընդունում, ինչը հնարավորություն է ընձեռում փոխշահավետ հիմքերի վրա դնել այդ գործընթացը:

Ներկա դրությամբ, ըստ 2009–2012 թթ. վիճակագրության, ՀՀ արտաքին առևտրի հիմնական գործընկերը Եվրամիությունն է, որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման 37,1–48,1 և ներմուծման 22,1–25,2 տոկոսը: ԱՊՀ երկրների հետ այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 19.1–24.4 և 22.5–23.5 տոկոս, այդ թվում Մաքսային միության երկրների հետ՝ 16.1–21.0 և 16.7–18.9 տոկոս (աղյուսակ 22):

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքների գծով այս ցուցանիշները փոքր-ինչ տարբերվում են: Ուսումնասիրվող բոլոր տարիներին ակնհայտ է, որ արտահանման տեսակարար կշիռը զգալիորեն բարձր է ԱՊՀ երկրների կտրվածքով, իսկ ներմուծման կառուցվածքում մեծ է ոչ ԱՊՀ երկրների մասնաբաժինը (աղյուսակ 21.): Այսպես, 2009–2011 թթ. տվյալներով ԱՊՀ երկրներին բաժին է ընկել հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտահանման մոտ 74%-ը, որի 90%-ից ավելին՝ ՄՄ երկրներ, իսկ ներմուծման՝ մոտ 42%-ը: Այստեղից հետևություն, որ պարենի արտաքին շուկայից մեծ կախվածություն ունեցող Հայաստանի պարենային անվտանգությունը կարող է վտանգվել, եթե ՀՀ-ում սահմանված մաքսատուրքերը միասնականացվեն ՄՄ մաքսատուրքերին:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ծավալը և կառուցվածքը (%)-ըստ խումբ երկրների 2009–2012 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)*

Երկիրը	Արդահանում				Ներմուծում			
	2009	2010	2011	2012	2009	2010	2011	2012
Ընդամենը	710157.5	1041056.6	1334338.8	1380199.2	3321133.9	3748953.5	4145332.0	4261232.7
	100	100	100	100	100	100	100	100
<i>Այդ թվում՝</i>								
ԱՊՀ երկրներ	138327.5	198773.9	268062.3	336 604.2	746223.5	851715.0	939054.8	1000126.6
	19.5	19.1	20.1	24.4	22.5	22.7	22.7	23.5
<i>Որից՝</i>								
Ռուսաստանի Դաշնություն	107426.3	160507.8	222273.7	279109.0	528341.1	603184.2	686106.2	779942.8
	15.1	15.4	16.7	20.2	15.9	16.1	16.6	18.3
Բելառուս	4628.2	4580.7	5950.3	6710.3	21942.5	27868.2	24135.1	23772.6
	0.7	0.4	0.4	0.5	0.7	0.7	0.6	0.6
Ղազախստան	2404.2	3083.3	4398.5	3964.1	5555.1	8253.2	2854.1	1238.8
	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.1	0.0
Ընդամենը Մաքսային միություն	114458.7	168172	232623	289783.4	555839	639305.6	713095	804954
	16.1	16.2	17.4	21.0	16.7	17.1	17.2	18.9
Ոչ ԱՊՀ երկրներ	571830.0	842282.7	1066276.5	1043595.0	2574910.4	2897238.5	3206277.2	3261106.1
	80.5	80.9	79.9	75.6	77.5	77.3	77.3	76.5
Որից՝ ԵՄ երկրներ	310186.4	501120.0	607403.2	511604.6	732771.7	864499.2	999068.1	1073460.4
	43.7	48.1	45.5	37.1	22.1	23.1	24.1	25.2

* Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման) <http://www.armstat.am/am/?nid=82&id=1478>

Բարեբախտաբար 2012 թ. ներմուծված մոտ 535.6 հազ. տոննա հացահատիկի 97.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, այդ թվում՝ 88.8%-ը Ռուսաստանի Դաշնությանը⁵⁵: Բայց 2010 թ. փորձը, երբ երաշտի պատճառով արգելվեց ՌԴ-ից հացահատիկի արտահանումը, վկայում է, որ ինչպես արտահանման, այնպես էլ ներկրման աշխարհագրությունը պետք է բազմազանեցվի: Ուստի, անգամ հացահատիկի պարագայում ՀՀ-ի համար էական նշանակություն ունի երրորդ երկրի հետ իրականացվող առևտրային գործարքների ՄՄ-ի սահմանած մաքսատուրքերի համապատասխանեցումը մեր երկրի շահերին:

⁵⁵ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին, էջ 52-55:

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտաքին առևտուրի կառուցվածքը՝ ըստ ԱՊՀ և ոչ ԱՊՀ երկրների*

Երկրները	Չափման միավորը	2009 թ.		2010 թ.		2011 թ.	
		արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
Ընդամենը	հազ. ԱՄՆ դոլար	126184.8	546340	162184.5	593390.4	220780.7	706391.3
	%	100	100	100	100	100	100
Այդ թվում՝							
ԱՊՀ երկրներ	հազ. ԱՄՆ դոլար	88914.2	253033.6	121508.9	253885.7	163314.3	280944.5
	%	70.46%	46.31%	74.92%	42.79%	73.97%	39.77%
Ոչ ԱՊՀ երկրներ	հազ. ԱՄՆ դոլար	37270.6	293306.2	40675.6	339504.7	57466.4	425446.7
	%	29.54%	53.69%	25.08%	57.21%	26.03%	60.23%

* Հաշվարկվել է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012-ի, էջ 440-444

ՀՀ-ի անդամակցությունը ՄՄ-ին պահանջում է որոշակի ընթացակարգեր: Մեր կարծիքով, հատկապես լուրջ ուշադրության է արժանի մաքսատուրքերի համապատասխանեցման խնդիրը: Դիցուք, պարենային ապրանքների առումով ՀՀ-ի և ՄՄ անդամ երկրների միջև գոյություն ունեն մաքսային քաղաքականության նկատելի տարբերություններ, որոնց մեխանիկական միասնականացումը հղի է որոշակի ռիսկերով: Հիմնական տարբերությունն այն է, որ ներքին շուկայի և տեղական արտադրողների պաշտպանության նկատառումներով ՄՄ-ն այլ երկրներից ներկրվող բուսական և կենդանական ծագման մի շարք արտադրանքների համար սահմանել է զգալիորեն բարձր մաքսատուրք: Սա այն դեպքում, երբ ՀՀ պարենային անվտանգության շահերը պահանջում են այդ արտադրանքները ներմուծել ցածր, անգամ 0-ական մաքսատուրքով: Այս խնդրի ողջամիտ և տրամաբանված լուծումն էական նշանակություն ունի ՀՀ պարենային անվտանգության հնարավոր ռիսկերի կանխարգելման համար, ուստի դրան անդրադառնանք ավելի մանրամասն:

Հայտնի է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է մաքսատուրքի 0 կամ 10 տոկոս դրույքաչափ: Ընդ որում գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային ապահովության հույժ կարևորությունից ելնելով՝ գյուղատնտեսական ծագման մի շարք արտադրատե-

սակների (ցորեն, բրինձ, հնդկացորեն, ածիկ, սերմացուներ, տնկանյութ, տոհմային կենդանիներ և այլն), ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևոր ռեսուրսների (պարարտանյութեր, թունաքիմիկատներ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական տրակտորներ և այլն) համար սահմանված է ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ: Մի շարք ապրանքային խմբերի համար 0 տոկոս ներմուծման մաքսատուրքերի սահմանման համար օրենսդրական փոփոխություններ կատարվել են վերջին տարիներին՝ 2011 և 2013 թվականներին (7 հուլիսի 2011 թվական, ՀՕ-213-Ն, 13 ապրիլի 2013 թվական, ՀՕ-18):

Մաքսային միության՝ երրորդ երկրներից ներմուծման համար մաքսատուրքերն ունեն անհամեմատ բարձր մակարդակ, տատանվում են 3.5–80 տոկոսի սահմաններում: Ընդ որում, առավել բարձր մաքսատուրքի դրույքաչափեր սահմանված են այնպիսի պարենամթերքների համար, որոնց ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում դեռևս ցածր է և ներմուծվում են մեծ ծավալներով, ինչպես նաև այնպիսի ոչ գյուղատնտեսական ապրանքների համար, որոնց պահանջարկը հանրապետությունում բավարարվում է գլխավորապես ներմուծմամբ:

Վերջինիս մասին վկայում են ՀՀ ԱՎԾ-ի հրապարակած ազգային պարենային հաշվեկշռի վերջին՝ 2012 թվականի տվյալները (աղյուսակ 24): Հնթացս նշենք, որ ՀՀ ԱՎԾ մեթոդաբանությամբ ինքնաբավության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԻԲ = \frac{Ա}{Ա - Ն} + Ար \times 100,$$

որտեղ՝

ԻԲ - ինքնաբավության մակարդակն է, տոկոս,

Ա- տվյալ արտադրանքի տարեկան արտադրությունն, հազ. տոննա,

Ն - տվյալ արտադրանքի տարեկան ներմուծումն է, հազ. տոննա,

Ար - տվյալ արտադրանքի տարեկան արտահանումն է, հազ. տոննա:

Ինչպես նկատում ենք, ինքնաբավության մակարդակի գնահատման տրամաբանական հիմքը տվյալ արտադրանքի փաստացի սպառումն է՝ ուղղակիորեն պայմանավորված սպառողների սննդաբաժնի փաստացի կառուցվածքով և գնողունակության մակարդակով: Այսինք՝ այս մեթոդաբանությամբ ինքնաբավության գնահատումը զուտ իրավիճակային է, չի դիտարկում առողջապահական նորմաներով նախատեսված սննդամթերքի պահանջվող չափաքանակն ու սննդաբաժնի հավասարակշռված կառուցվածքը:

Այդուհանդերձ, անգամ գործող մեթոդաբանությամբ հաշվարկված կարևորագույն պարենամթերքների ինքնաբավության մակարդակի ցուցանիշները վկայում են, որ հանրապետությունում առաջիկա տարիներին նույնպես պահանջարկի բավարարման համար նշված պարենամթերքների ներմուծումն իրականացվելու է մեծ ծավալներով:

ՀՀ պարենամթերքների ներմուծման ծավալները և ինքնաբավության մակարդակը (2012 թ.)*

Պարենամթերքի անվանումը	Ներմուծում, հազ. տ	Ներմուծում, հազ. տ	Ինքնաբավության մակարդակ, %
Ցորեն	477.7	502.5	32.9
Եգիպտացորեն	37.8	39.5	32.6
Բրինձ	10.4	10.4	0
Հատիկաընդդեմային մշակաբույսեր	4.0	4.0	56.0
Բուսական յուղ	26.6	26.9	9.1
Տավարի միս (սպանդային քաշով)	8.3	11.3	81.6
Խոզի միս (սպանդային քաշով)	8.3	15.5	38.3
Թռչնի միս (սպանդային քաշով)	33.6	35.3	19.1

* Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ-ի Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 71-72: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1502>

Կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ առանձնացրել ենք այն զգայուն ապրանքների ցանկը, որոնց համար ՄՄ սահմանած ներմուծման միասնական մաքսատուրքերի կիրառումը բացասական ազդեցություն կունենա ինչպես բնակչության պարենային ապահովության, այնպես էլ հանրապետության տնտեսության վրա: Օրինակ, պաղեցված և սառեցված խոզի մսի համար (0203) Մաքսային միության սահմանած 65 տոկոս ներմուծման մաքսային դրույքաչափի դիմաց Հայաստանի Հանրապետությունում սահմանված է 10 տոկոս: Նշված ծածկագրին դասվող ապրանքատեսակների համար մաքսային արժեքը կազմել է 19999.7 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում, միայն ՄՄ երկրներից ներմուծվածի մաքսային արժեքը 288.3 հազ. ԱՄՆ դոլար կամ 1.4 տոկոս: ՄՄ և ՀՀ դրույքաչափերով հաշվարկված՝ երրորդ երկրներից ներմուծման դեպքում մաքսատուրքերի արժեքի տարբերությունը՝ ըստ կատարված հաշվարկների 1084.3 հազ. ԱՄՆ դոլար է: Մեկ այլ օրինակ. կաթից և կաթնային մածուկից պատրաստված սերուցքային կարագի և այլ յուղերի և կարագի համար (0405) ՄՄ-ում սահմանված է 18.3 տոկոս մաքսատուրքի դրույքաչափ, Հայաստանի Հանրապետությունում՝ 10 տոկոս: Նշված ծածկագրին դասվող ապրանքատեսակների համար մաքսային արժեքը՝ 21392.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ՄՄ երկրներից ներմուծվածի մաքսային արժեքը՝ 564.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.6 տոկոս: ՄՄ և ՀՀ դրույքաչափերով հաշվարկված՝ երրորդ երկրներից ներմուծման դեպքում մաքսատուրքերի արժեքի տարբերությունը՝ ըստ կատարված հաշվարկների 1728.7 հազ. ԱՄՆ դոլար է: Այս սկզբունքով առանձնացրել ենք 33 հիմնական ապ-

րանքախումբ, որոնց մաքսատուրքերի կարգավորման հարցը ՄՄ-ի անդամակցելու նախապատրաստական փուլում առանձնահատուկ քննարկում են պահանջում: Ներկայումս որոշակի առաջարկությունների մշակման նպատակով մեր հետազոտությունը շարունակվում է: Համոզված ենք, որ այս հիմնախնդրի անտեսման պարագայում ՀՀ պարենային շուկայում կդրսևորվի ներմուծվող պարենային ապրանքների նկատելի գնաճ, որը լուրջ սպառնալիք է բնակչության պարենային անվտանգության համար:

Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ պարենային անվտանգության և ագրարային ոլորտի նորամուծական զարգացման հրատապ խնդիրների միասնական դիտարկումը հիմք է տալիս կատարելու հետևյալ առաջարկությունները:

1) Պարենամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման քաղաքականության իրականացում՝ «Պարենային անվտանգության ապահովման մասին» (2002 թ.) Հայաստանի Հանրապետության օրենքի, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» (2007 թ.), ՀՀ պարենային ապահովության քաղաքականության հայեցակարգի (2011 թ.) պահանջներին համապատասխան: Այդ նպատակով առաջարկվում է ՀՀ վարչապետին կից ստեղծել ՀՀ պարենային անվտանգության ծրագրերի և միջոցառումների ժամանակացույցի կատարման մշտադիտարկման հանձնաժողով և եռամսյակային պարբերականությամբ քննարկել ոլորտի հրատապ հարցերը:

2) Ապահովել բնակչության մեկ շնչի հաշվով օրական նվազագույնը 2420 կկալ էներգետիկ արժեքով սննդամթերքի սպառում, առաջնային պարենի (պարենային ցորեն, կարտոֆիլ, բանջարեղեն, բուսական և կենդանական յուղ, շաքար, կաթ, միս, ձու) ինքնաբավության նվազագույնը 75–80 տոկոս և տարեկան պահանջի 15–20 տոկոսի չափով պետական պահուստի ստեղծում: Այս կարևոր մարտահրավերը պահանջում է ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող և տարիներ շարունակ չօգտագործվող վարելահողերը ներգրավել տնտեսական շրջանառության մեջ՝ առանց դրանց սեփականատերերի սեփականության իրավունքը խախտելու և վնաս պատճառելու: Դրա համար հարկավոր է, համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելով, իրականացնել հետևյալ քայլերը.

ա) Համայնքի ավագանուն իրավունք վերապահել նպատակային նշանակությամբ առնվազն 3 տարի չօգտագործվող վարելահողը, որի սեփականատերը հարկային պարտավորությունները բարեխղճորեն չի կատարել և հողի վարձակալության հանձնելու հայտարարություն չի տվել, վարձակալության հանձնել մշակելու ցանկություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ հողի հարկի գումարը չգերազանցող վարձակալական վճարով և 5 տարվանից ոչ պակաս ժամկետով:

բ) Վարձակալության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ հողի սեփականատիրոջ կողմից ինքնուրույն տնտեսավարման պարտավորություն չստանձնելու դեպքում վարձակալության ժամկետը յուրաքանչյուր դեպքում երկարացնել ևս 5 տարով:

3) Վերանայել և լրամշակել պարենային հաշվեկշռի կազմման մեթոդաբանությունը, սահմանել բոլոր ենթահաշիվների հաշվարկման միասնական կարգ և նորմատիվներ: Տարեվերջի մնացորդը սահմանել՝ հիմք ընդունելով հաջորդ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ մշակաբույսի զանգվածային բերքահավաքի սկիզբը ընկած ժամանակահատվածի սննդի և սերմի պահանջն ու 10–15 տոկոս ապահովագրական ֆոնդը:

4) Միասնական պարենային հաշվեկշռի կազմման նպատակով ՀՀ-ն և ԼՂՀ-ն դիտարկել որպես մեկ միասնական տնտեսական տարածք և կիրառել միասնական մեթոդաբանություն:

5) «Դաշտից մինչև պատռաքաղ» սննդի շղթայում սննդամթերքի անվտանգության համակարգը կանոնակարգող օրենսդրական դաշտի ամբողջականացում, Կողեքս Ալիմենտարիուսի պահանջներին համապատասխան՝ արտադրության, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահպանման և իրացման շղթայի ինքնակարգավորման համակարգի և տեսչական հսկողության ապահովում:

6) Սահմանել կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների /հացահատիկ, միս, կաթ/ իրացման երաշխավորված գներ, որոնք տարվա ընթացքում կարող են ճշգրտվել ըստ գնաճի:

7) Երաշխավորված գների կիրառումն իրականացնել հետևյալ կարգով. տարվա ընթացքում արտադրողները ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում կարող են վաճառել շուկայական գներով: Իրացման գինը երաշխավորված գնից ցածր լինելու դեպքում տարվա վերջում արտադրողին վճարել տարբերության չափով լրավճար:

8) Կարևոր գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի գնային կտրուկ տատանումները կանխելու և, ընդհանրապես, պարենամթերքի շուկայի ընդհանուր կարգավորման նպատակով ձևավորել ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների ամբողջական համակարգ: Ապրանքային ինտերվենցիաները և ինտերվենցիոն գնումները կարող են իրականացվել տվյալ ժամանակահատվածում պարենամթերքի շուկայում գնային զգալի տատանումների, մասնավորապես՝ 30 տոկոսից ավելի գների բարձրացման և նվազման դեպքում:

9) «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի» վերանայում, 2015–2025 թթ. հիմնական միջոցառումների նախագծում և դրանց իրականացման օպերատիվ գնահատման նպատակով՝ ՀՀ վարչապետին կից պարենային անվտանգության վիճակի մշտադիտարկման միջգերատեսչական աշխատանքային խմբի ձևավորում և Եվրասիական պարենային անվտանգության կենտրոնի (Մ.Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ) հետ համագործակցության զարգացում:

10) Հիդրոոդերևութիւնական վնասակար երևոյթների ռիսկերից գյուղատնտեսութեան ապահովագրման նպատակով, որը կապահովի նաև պարենային անվտանգութեան կայունութիւն, ներդնել պետական սուբսիդավորումով գյուղատնտեսութեան ապահովագրութեան համակարգ: Առաջարկվում է այդ գործընթացն իրականացնել հետևյալ տրամաբանական հաջորդականութեամբ.

- ընդունել «Պետական աջակցութեամբ ագրոապահովագրութեան մասին» ՀՀ օրենք և համապատասխան ենթաօրենսդրական ակտեր,
- նկատի ունենալով, որ գյուղատնտեսութիւնը բարձր ռիսկային արտադրութիւն է և բոլոր ռիսկերից միաժամանակյա ապահովագրումը դեռևս իրատեսական ու արդյունավետ չէ, անհրաժեշտ է ռիսկերի և բյուջետային հնարավորութիւնների գնահատման, ինչպես նաև ապահովադիրների ցանկութիւնների ուսումնասիրութեան հիման վրա կատարել տարածքների ընտրութիւն և ռիսկերի գնահատում,
- համակարգի ներդրման սկզբնական փուլում բյուջեի ծանրաբեռնվածութիւնը մեղմելու անհրաժեշտութիւնից ելնելով, ապահովագրել առավել ռիսկային տարածքների առավել բարձրարժեք մշակաբոյսերը,
- առաջնահերթ կերպով իրականացնել ՀՀ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզի նախալեռնային (ծովի մակարդակից մինչև 1200 մետր բարձրութեան) և Վայոց ձորի մարզի ցածրադիր համայնքների խաղողի և պտղի այգետարածքների ու զարնանային ցրտահարութեան և մինչև բերքահավաքը կարկտահարութեան ռիսկերը, - հաջորդ փուլի ապահովագրական ծրագրում ներառել նաև բանջարանոցային մշակաբոյսերի մինչև ծաղկումը ընկած ժամանակահատվածի ծախսերը և ծաղկումից մինչև բերքահավաքը ընկած ժամանակահատվածի ցրտահարութեան և կարկտահարութեան ռիսկերը,
- համակարգի ծավալման հետագա փուլերում պետք է ըստ կարևորութեան ներառել մնացած մարզերի գյուղատնտեսական մշակաբոյսերը, իսկ անասունների հաշվառման և համարակալման ծրագիրը իրականացնելուց հետո նաև՝ անասունների ապահովագրումը (այն մտեցումը, որ ցածր ռիսկայնութիւնը թույլ է տալիս անհապաղ սկսել գյուղատնտեսական կենդանիների ապահովագրութիւնը, մեր կարծիքով, հիմնավորված չէ և կարող է հերթական անգամ վարկաբեկել պետական աջակցութեամբ ագրոապահովագրութեան կարևոր գաղափարը),
- մինչև 2014 թ. հոկտեմբերի սկիզբը Ազգային ժողով ներկայացնել և ընդունել «Պետական աջակցութեամբ ագրոապահովագրութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրենքը, միաժամանակ՝ 2015–2018 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրում և 2015 թ. ՀՀ բյուջեի

- նախագծում ներառել պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության ծրագիրը և բյուջետային հատկացումների նախահաշիվը,
- նախնական հաշվարկներով՝ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզի նախալեռնային (ծովի մակարդակից մինչև 1200 մ բարձրության) և Վայոց ձորի մարզի ցածրադիր համայնքների խաղողի և պտղի այգետարածքների ուշ գարնանային ցրտահարության և մինչև բերքահավաքը կարկտահարության ռիսկերի ապահովագրավճարների 50% սուբսիդավորման պայմաններում, պետության կողմից հատկացվող սուբսիդիայի տարեկան գումարը կարող է կազմել 7–8 մլրդ դրամ:

Պաշտոնական աղբյուրներ

1. «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը:
2. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը:
3. Հայաստանի Հանրապետություն: Կուտակում, մրցակցություն և միակցելիություն: Հուլիս 2013 թ., Համաշխարհային բանկ:
4. «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476 -Ն որոշումը:
5. «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»:
6. «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1522-Ն որոշումը:
7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը:

Վիճակագրական նյութեր

1. Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականի հունվար - դեկտեմբերին:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբեր:
3. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2005–2011թթ.:
4. ՀՀ ԱՎԾ-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)»:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012:
6. ԼՂՀ գյուղատնտեսությունը 2012 թ., վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2013:
7. Պարենային ապահովումը և աղքատությունը 2013 թ. հունվար - սեպտեմբեր:
8. Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի հունվար- դեկտեմբեր:
9. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբեր:
10. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 2013:
11. ՀՀ ԱՎԾ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013:
12. ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013:

Մասնագիտական գրականություն

1. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում;- Եր., «Վահան», 2002:
2. Ավետիսյան, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը;- Եր. Լիմուշ հրատ., 2010:
3. Ավետիսյան Ս., Արիստակեսյան Ա., Գյուղատնտեսության պետական աջակցությունը զարգացած երկրներում, Եր. «Գիտելիք», 2008, էջ 237–242:
4. Բայադյան Ա. Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 144 էջ:
5. Գրիգորյան Կ. Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, Եր.: ՀՊԱՀ, 2011.-250 էջ:
6. Գները և խոցելիությունը Հայաստանում: Թողարկում թ. 2, հունիս 2011.
7. Գները և խոցելիությունը Հայաստանում; Թողարկում №5, հոկտեմբեր 2011թ
8. Джеффри Д. Сакс. Конец бедности. Экономические возможности нашего времени. Изд. Института Гайдара. 2011:
9. Методический инструментарий оценки продовольственного обеспечения населения региона, Агро XXI, 2013, No 7-9:
10. Мир и продовольственная безопасность,
http://www.youtube.com/watch?v=OpwhT8_ElkY
11. ФАО, Проект: Интенсивный мониторинг безопасности продуктов питания в 5 странах СНГ (GCP/INT/814/EC), Документ No. 3, 2002 г.

Актуальные задачи продовольственной безопасности в Республике Армения

Данное исследование проведено в рамках проекта “Национальная безопасность” исследовательского центра “Амберд” Армянского Государственного Университета Экономики. Целью исследования является освещение основных проблем продовольственной безопасности в Армении в контексте развития мирового продовольственного рынка и присоединения Армении к Таможенному Союзу.

В отечественной экономической литературе угрозы продовольственной безопасности и методология их оценки не были специально исследованы. Как правило, в основном, был представлен анализ продовольственной безопасности и увеличения производства продовольственных продуктов путем развития сельского хозяйства.

В данной работе прослеживаются тенденции развития мирового продовольственного рынка и его влияние на внутренний рынок РА. В последнем десятилетии на мировом продовольственном рынке намечается повышение цен основных продовольственных продуктов, особенно ощутимо повысились цены на зерно и рис. По сравнению с 2000 г. к 2010 г. внутренняя цена этих продуктов соответственно повысилась на 37.7 и 156.6%. В тот же период цена хлеба повысилась на 97.5%. Только в 2013 г. по сравнению с 2010 г. цены хлебопродуктов поднялись на 24.7, мясо - на 25, молочных продуктов - на 31.7, масло - на 30.4, яйца - на 54.4, картофеля и овощей на 10.3 %.

Если учесть, что продовольственному рынку характерны низкая эластичность спроса и высокая эластичность цен, то неоспорима необходимость государственного регулирования, потому что, в противном случае, свободное рыночное ценообразование может иметь весьма нежелательные социально-экономические последствия. Поэтому, согласно автору, регулирование продовольственного рынка должно стать стержнем аграрной политики государства. В настоящее время эта политика в основном направлена лишь на обеспечение экономического роста в сельском хозяйстве, однако это не способствует развитию отраслей и преодолению бедности сельского населения. Следует констатировать, что проделано немало для формирования законодательных основ продовольственной безопасности. Еще в 2002 г. был принят закон “Об обеспечении продовольственной безопасности”, 18 мая 2011 г. Президент республики утвердил “Концепцию об обеспечении продовольственной безопасности РА”, а 13 октября 2011 г. Правительство республики приняло постановление “Об утверждении программ мероприятий по выполнению концепций продовольственной безопасности РА”. Вместе с тем, эти законодательные акты не всегда находят должное применение. Одна из причин этого - отсутствие систем отчетности и мониторинга.

Проведенный анализ показывает, что задача физической доступности продовольствия в основном решается. Доказательством этого, является тот факт, что даже в самых отдаленных населенных пунктах, предлагается определенный ассортимент продовольствия. Иначе обстоит дело с экономической доступностью: вследствие высоких цен и низкой платежеспособности, более 1/3 населения находится за чертой бедности.

Ежеквартально и ежегодно публикуемая брошюра Национальной статистической службы Армении “Продовольственная безопасность и бедность” является эффективным шагом для оценки продовольственной безопасности в Армении. Однако, невысокий уровень достоверности информации, а также некоторые недостатки методологии не позволяют выявить реальную картину продовольственной безопасности страны. При изучении продовольственных балансов можно заметить, что некоторые субсчета расходной части баланса не всегда обоснованы. В частности, это касается запасов в конце года и потерь. В работе представлены предложения по методологии более реального расчета и нормирования этих субсчетов. Учитывая тот факт, что РА и НКР находятся в общем экономическом пространстве и между ними не существуют таможенные структуры, необходимо пересмотреть подходы составления продовольственных балансов этих стран.

Членство Армении в Таможенном Союзе предполагает унификацию таможенных тарифов, что повлияет на продовольственный рынок Армении. Поэтому, необходимо принять во внимание принцип взаимовыгодной основы во время пересмотра тарифов на средства сельхоз производства и продовольственных продуктов. Этот вопрос также рассмотрен в этом исследовании.

В конце исследования приводятся конкретные предложения и комментарии.

Urgent Tasks of the Food Security of the RA

This study is conducted in the framework of the project “National Security” of “Amberd” research centre of Armenian State University of Economy. The objective of the study is to present main issues of food security in Armenia in the context of world food market developments for the last decade and the membership to the Customs Union, as well as to highlight external and internal threats and to identify the main ways to combat them.

The food security threats and assessment methodologies thereof have not been a subject to special studies. The economic literature mainly includes the food security situation analysis and the increase of food production through developing the agricultural sector. The world food market developments and their impact on local market of the Republic of Armenia is also recognised as a priority.

“Food Security and Poverty” bulletin published quarterly and annually by the RA National Statistical Service is an effective measure to assess the food security situation in Armenia. However, the studies identify methodological deficiencies that affect the profound assessment of risks and threats. The same refers to the bulletin issued in Nagorno Karabakh, which also affects the comprehensive and realistic analysis within the context of unified economic area.

The membership of Armenia to the Customs Union considers the issue of harmonisation of customs duties, which will have an impact on the food market in Armenia. Thus, it is important to take into consideration the principle of mutual benefits while harmonising the customs duties of inputs for staple food and agricultural products. This issue has been also analyzed in this study.

The sample methodology to assess the food security level is introduced by the Food and Agriculture Organisation of the United Nations. However, the peculiarities of the country require some modifications of the methodology. Particularly this refers to the constitution and structure of the minimum food basket, to daily food consumption norms assessed by physical quantities and energetic values. The norms were developed based on minimum requirements to combat poverty and need additional scientific justification. A special attention is given to the reliability of basic data on food security assessment, including the improvement of data collection methodology. Precise and practical proposals and relevant implementation directions are given in the study.



ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐ**

Խմբագիր՝ **Վ. Միրզոյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Ն. Խչեյան**

Էջադրումը և սրբագրումը՝ **Ս. Բոյաջյանի**
Ձևավորումը՝ **Ն. Խչեյանի**

Չափս՝ 70×108^{1/16}:
6 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37

